ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ-ից ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ԽՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

www.syuniacyerkir.am

Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ Զարմանալի՜ թեթեւ, զարմանալի՜ անդեմ՝ Մերկության պես տկլոր ու անանցյալ...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

1 ԱՊՐԻԼԻ 2013թ., ԿԱՊԱՆ

Լուսանկարը՝ Ս. Նավասարդյանի

Իշխանությունն այդպես էլ չի կամենում իմանալ, թե ինչ է կատարվում Կապանում ու Քաջարանում

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ

Ապրիլի 1-ին՝ ժամը 14-ի սահմաններում, Սիսիանի Սիսակ Նահապետի անունը կրող հրապարակում ավարտվեց Ռաֆֆի Հովհաննիսյանի սյունիքյան հերթական այցելությունը: Նա Սիսիան էր ժամանել Գորիսից, որտեղ բնակիչները, փետրվարի 27-ի այցի համեմատ, ավելի ակտիվ ու անկաշկանդ էին Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ շփումներում: «Յոթ աղբյուր» հուշարձանի մոտ մի խումբ երիտասարդներ «Բարեւ Հայաստան» կարգախոսով եւ «Հայաստան», «Գորիս, հաղթանակ» բացականչություններով դիմավորեցին Ռաֆֆի Հովհաննիսյանին: «Ժառանգության» առաջնորդը, ինչպես նախորդ այցի ժամանակ, քայլում էր քաղաքի փողոցներով եւ մարդկանց ողջունում ու ողջագուրվում նրանց հետ: Գորիսեցիներից մեկը Ռաֆֆի Հովհաննիսյանին հրավիրեց իրենց տուն, որի բակն էլ հըքանցս դարձավ նրա ասուլիսի վայր:

Շարունակությունը՝ էջ 3

Քաղաքապետի աթոռը փրկելու համար նոր զոհեր են պահանջվում

ՍԻՍԻԱՆ

Սյունիքի մարզպետարանը Սիսիանի քաղաքապետարանի ֆինանսական գործունեության բնագավառում արձանագրել է մի շարք թերություններ: 2012թ. դեկտեմբերի 3-10-ը Սիսիանի քաղաքապետարանում իրականացված այդ ստուգման արդյունքներն ուղարկվել են Սյունիքի մարզի դատախազություն՝ իրավական ընթացք տալու համար:

Ինչպես տեղեկացնում է մարզպետարանի վարչության պետ Սեյրան Ավետիսյանը՝ «Համայնքի իշխանության ֆինանսական գործունեության ոլորտում նկատված թերություններն ուղարկվել են դատախազություն, իսկ թե ինչ ընթացք կստանա գործը՝ չեմ կարող ասել: Այդպիսի ստուգումներ վերջին մեկ տարում կատարել ենք 30 համայնքում եւ միայն Սիսիանի գործն ենք ուղարկել դատախազություն, քանի որ նկատված թերությունները ծանրակշիռ են: Սպասենք քննության ավարտին»: Դատախազություն ուղարկված դիմումը հասցեագրվել է մարզի քննչական վարչությանը, որն էլ իրականացնում է նախաքննություն: Առայժմ քրեական գործ չի հարուցվել եւ, բնականաբար, մեղադրանք առաջադրելու մասին խոսք լինել չի կարող: Առայժմ հայտնի չէ նաեւ, թե խոսքն ինչ ծավալի եւ բնույթի խախտումների մասին է: Սիսիանի քաղաքապետարանի պատասխանատու պաշտոնյան, ով չցանկացավ իր անունը հրապարակված տեսնել, վկայում է մինչդեռ, որ հայտնաբերված ֆինանսական խախտումներն առնչվում են գնումների վերաբերյալ գործող օրենսդրությանը եւ ենթակա կառույցների (մասնավորապես՝ «Սիսիանի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ) ֆինանսավորմանը: Քաղաքապետարանի նույն պաշտո-

Շարունակությունը՝ էջ 9

Սերժ Սարգսյանին խաբել են. Քաջարանում ամսական միջին աշխատավարձը 400 հազար դրամ չէ

Նման եզրակացության հիմքը Մաքսիմ Հակոբյանի ավելի վաղ արված հայտարարությունն է

ԱՐՁԱԳԱՆՔ

Մարտի 18-ին լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն անդրադարձ է կատարել նաեւ Քաջարան քաղաքում փետրվարի 18-ի քվեարկության արդյունքներին: Նա մասնավորապես նշել է. **«Ես կարող եմ բերել Քաջարանի օրինակը. Քաջարանում ես հաղթել եմ ձայների շատ քիչ տարբերությամբ: Քաջարանում միջին աշխատավարձը 400 հազար դրամից ավելին է: Այսինքն, գրեթե երեք անգամ ավելի, քան հանրապետության միջինն է: Քաջարանում գրեթե բոլորն աշխատանք ունեն: Քաջարանում շատ չեն քանդված փողոցները: Ի՞նչն է պատճառը: Ինչո՞ւ: Ուրեմն, այստեղ էլ այլ խնդիրներ կան: Այսինքն, այս ամբողջ ուսումնասիրություններն անելու համար անհրաժեշտ է ժամանակ, անհրաժեշտ են մարդկային ռեսուրսներ, անհրաժեշտ են մասնագետներ: Եվ մենք այդ ուսումնասիրությունը կատարելու ենք»**: Թե ինչու Քաջարանում Սերժ Սարգսյանի քաղաքականությունը հավանության չի արժանացել՝ այդ հարցին արդեն պատասխանել ենք «Սյունյաց երկրի» 2013թ. փետրվարի 28-ի համարում տպագրված հոդվածում՝ «Կապանը մերժեց Սերժ Սարգսյանին, իսկ Քաջարանն ու Սիսիանը կասկածի տակ առան նրա սյունիքյան գործելակերպը»: Անհասկանալի է սակայն, թե ինչի հիման վրա է հանրապետության նախագահը Քաջարանի միջին աշխատավարձը համարում 400 հազար դրամ: Ինքը՝ Մաքսիմ Հակոբյանն ամիսներ առաջ է հայտարարել. **«Մեր միջին աշխատավարձն էսօր 237 հազար դրամ է»**, թեեւ դա էլ խիստ չափազանցված է: Առհասարակ Քաջարանի կոմբինատում ավանդաբար աղավաղում են ամսական միջին աշխատավարձի հաշվարկը՝ հանրությանը խաբելու համար, որպեսզի չերեւա կլանի ու ձրիակերների գվարդիայի անդամների՝ ամսական մի քանի մլն դրամի հասնող աշխատավարձի եւ իսկական լեռնագործների ցածր աշխատավարձի անտրամաբանական ու աներեւակայելի տարբերությունը: Այնպես որ Քաջարանի հանքագործների ամսական միջին աշխատավարձը շատ ցածր է տնօրենի (էլ չենք ասում ՀՀ նախագահի) հայտարարած թվից: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ ՀՀ նախագահի ընտրության նախօրյակին էլ որոշ չափով կրճատվել է իսկական հանքագործների աշխատավարձը, ինչը դժգոհության հավելյալ պատճառ է հանդիսացել այդ համայնքում:

Բայց այս պատմությունը, ինչպես եւ սպասվում էր, ծիծաղելի ավարտ ունեցավ: Մաքսիմ Հակոբյանը Սերժ Սարգսյանի ասուլիսից հետո, մոռանալով իր նախորդ հարցազրույցում բերված թվերը, մայրաքաղաքային մի լրատվամիջոցի հետ ունեցած վարձու հարցազրույցում օրերս հայտարարեց, որ կոմբինատի աշխատողների ամսական միջին աշխատավարձը 400 հազար դրամ է:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ԵՐԵՔՇԱԲԹԻ • 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

Նռնաձորի Արաքսամերձ հովիտը

«Եթե ջուր լիներ...»

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

«Սյունյաց երկիրը» շարունակում է հետամուտ լինել մարզի սահմանամերձ գյուղերի հոգսերին եւ հիմնախնդիրներին, շոշափել գյուղի զարկերակը, այն է՝ ինչով է շնչում ու ապրում գյուղաբնակը:

Այս անգամ երկար ճանապարհը մեզ Մեղրու տարածաշրջանի Նռնաձոր գյուղ տարավ: Մարզկենտրոնից 108 եւ Մեղրի քաղաքից 30կմ հեռավորությամբ գտնվող սահմանամերձ այս բնակավայրը վարչական տարածքով մարզի ամենախոշոր համայնքներից է: Մինչեւ 1988-ը բնակեցված է եղել ադրբեջանցիներով: Մինչեւ գյուղը մտնելը՝ ցույց են տալիս ասֆալտապատ ճանապարհը, որն Ադրբեջանի կողմից կառուցվել էր խորհրդային տարիներին: Եվ դեռ մտադրություն ունեին այն հասցնել մինչեւ Մեղրի եւ Նախիջեւան: Միայն Կարեն Դեմիրճյանի հեռատես քաղաքականության շնորհիվ ճանապարհի հետագա կառուցումը դադարեցվեց, քանի որ Մեղրու շրջանի ժողովրդագրական պատկերը փոխելու հեռագնա նպատակ էր հետապնդվում:

Ինչեւէ, հայ-ադրբեջանական հակամարտության հետքերը տակավին գյուղում ցայսօր մնացել են՝ ավերված ու կիսաքանդ տներ: Մեր «բարեկամների» հեռանալուց հետո 1989-1993 թվականներին վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած (18 ընտանիք՝ Շահումյանի շրջանի հայտնի Գետաշեն գյուղից, երկուսը՝ Գանձակից) եւ Հայաստանի այլ բնակավայրերից եկած հայ ընտանիքներով: Նռան այգիներով նշանավոր այս գյուղը թոթափել է Նյուվադի օտարահունչ անվանումը, եւ երբ պատահաբար օգտագործում ես Նյուվադի, շատ քաղաքավարի ուղղում են՝ Նռնաձոր: Այսօր փաստացի 174 մարդ է բնակվում գյուղում, հաշվառված է 144-ը, ընդհանուր առմամբ՝ 45 ընտանիք: Ցավոք, վերաբնակեցված համայնքից եւս արտագաղթ է լինում: Գյուղապետ Մկրտիչ Մկրտչյանը, ով պաշտոնավարում է 2006թ. օգոստոսի 1-ից, թվարկում է վերջերս Նռնաձորից հեռացածներին. երեք ընտանիք մեկնել է Բյուրեղավան, մեկը՝ Քաջարան, մյուսը՝ Ռուսաստան, եւս մեկը՝ Քաշաթաղի շրջան: Եվ ափսոսանք է հայտնում, որ գյուղից ծնողների հետ հեռացել են երեխաներ, ովքեր Նռնաձորի վաղվա օրը պիտի լինեին:

Համայնքը մի քանի առանձնահատկություններ ունի. նախ այն

Մկրտիչ Մկրտչյան
Նռնաձորի գյուղապետ

սկսվում է ծովի մակարդակից 370մ բարձրությունից եւ ավարտվում 2300մ բարձրությամբ եւ ըստ այդմ՝ ներառում է կլիմայական երեք գոտի՝ մերձարեւադարձային, արեւադարձային, ալպիական: Գյուղի մասին մի տեղեկանքում ընթերցում ենք, որ համայնքի գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են անասնապահությունն ու դաշտավարությունը: Բայց, ինչպես ծանոթանում ենք տեղում, նռնաձորցիների հիմնական զբաղմունքը պտղաբուծությունն է, հիմնականում նուռ են արտադրում, մի քիչ էլ՝ թուզ ու խաղող: «Իսկ բանջարաբոստանային մշակաբույսե՞րը», – կհարցնի փոքր-ինչ ուշադիր ընթերցողը: Ոռոգման ջուրն ամռան տապին աղետալիորեն չի բավականացնում, ուստի նույնիսկ տնամերձերում մեծ խնդիր է կանաչեղեն, լոբի ու կարտոֆիլ ցանելը: Այսինքն «գարնանացան» հասկացությունն այս դեպքում կորցնում է իր նախաստեղծ իմաստը: Սերմացուի եւ դիզվառելիքի խնդիր չի ծագում, վարուցանք անող չկա: **«Սերմացուի խնդիր չկա, առաջարկել եմ, ոչ ոք չի ուզում: Գարու ու ցորենի դաշտեր չկան, մեզ մոտ որակյալ տնկանյութի խնդիր կա, վառելիքն էլ լիտրը 350 դրամով տվեցին, ոչ ոք չուզեց, թանկ է, պարզապես ժողովուրդը չի ուզում»,** – իմ հարցը կանխում է համայնքի ղեկավարը:Պետությունը հատկացնում է ազոտական պարարտանյութ՝ պարկը՝ 6000 դրամ: Բայց ոչ բոլորն են շտապում այն ձեռք բերել: Այս առիթով գյուղապետը հավելում է, որ նպատակահարմար կլիներ, որ հատկացնեին նաեւ ֆոսֆորական պարարտանյութ: Քանի որ այս երկու տեսակի պարարտանյութի համադրմամբ կարելի է հողն իսկապես հարստացնել եւ լուրջ բերք ստանալ: **«Թե չէ՝ հողից ֆոսֆորը քամել ենք»,** – ասում է նա: Այնուամենայնիվ, մարտի 19-ի օրը, երբ Նռնաձորում էինք, համարյա մարդ չհանդիպեցինք: «Ամռան օրը տարի է կերակրում» ժողովրդական իմաստությունն այս դեպքում փոքր-ինչ սրբագրման կարիք ունի. «Մարտ ամսվա օրն է տարի կերակրում»: Նռնաձորցիք այգիներում էին. ով առուն է մաքրում, մյուսը բաժակափոր է անում եւ փոս փորում՝ նորատունկ շիվերի համար, մեկն էլ էտում, չորացած եւ ավելորդ ճյուղերն է հեռացնում: **«Գիշեր-ցերեկ են անում, մարդ չես գտնի տանը, տարվա մեջ մի քանի անգամ ժողով եմ անում, լսում մարդկանց հուզող հարցերը, նրանց առաջարկները: Բայց այս օրերին ձեռնպահ եմ մնում նրանց որեւէ բանի հրավիրելուց, ո՞վ կթողնի իր ծառն ու այգին, գա գյուղապետարան»,** – բացատրում է համայնքապետը: Եվ գյուղի հիմնախնդիրներից առանձնացնում է երեքը՝ խմելու եւ ոռոգման ջուր, ճանապարհ, սառնարանային տնտեսություն:

Արդեն նշեցինք, որ վարչական տարածքով գյուղը խոշորներից է

Շարունակությունը՝ էջ 13

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին

Պարոն նախագահ

Ինչպես լրատվական միջոցները, այնպես էլ հասարակության լայն շրջանները, նույնիսկ Ազգային ժողովը քննարկման-խոսակցության նյութ են դարձրել Սյունիքի մարզի եւ Իրանի Իսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատական նահանգի գյուղատնտեսական ինչ-որ ընկերությունների եւ կոոպերատիվների միջեւ կնքված համաձայնագրերը, որոնցով նախատեսվում է ավելի քան 50 հազար հեկտար տրամադրել նրանց՝ որպես արոտավայր եւ առանձին տարածք՝ բնակկենցաղային նպատակների համար: Այդ գործարքով, մեր կարծիքով, վտանգվում են երկրի հարավային դարպասի անվտանգությունն ու ծանր վիճակի մեջ հայտնված բնապահպանությունը:

Ինչպես Սյունիքի ողջ բնակչությունը, այնպես էլ մենք զարմացած ու տարակուսանքի մեջ ենք. դեռեւս պատերազմի ու շրջափակման մեջ գտնվող երկիրը, որին թշնամին առավոտից երեկո հոխորտում է պատերազմը վերսկսելու սպառնալիքով, ինչպե՞ս կարող է իրեն թույլ տալ սեփական տարածքներն ուրիշ երկրի վարձակալությամբ տրամադրել, թեկուզ այդ երկիրը լինի հարեւան Իրանը: Բոլորին հայտնի է, թե ովքեր են Արեւելյան Ատրպատականի բնակիչները: Բավական է մի քանի տասնյակ վրան, էլ չենք ասում շինություններ, որպեսզի «հոտը» մեկ-երկու տասնամյակում ծավալի իր «ոչխարային» առաքելությունը: Այդ ո՞վ պետք է մեկ-երկու տասնամյակ հետո «հարեւան» խաշնարածներին դուրս հրավիրի իրենց «հիմնած» տուն ու տեղից: Երկրորդը՝ այդ արոտավայրերն անհրաժեշտ են մի բռաչափ մեր երկրին, մնում է կարողանալ կազմակերպել դրանք սեփական ձեռքերով տնօրինելու՝ գուցե ոչ այնքան դյուրին գործը, որ պարտավոր են ձեռնարկել մարզի ղեկավարները եւ բնակիչները: Թույլ տալ այդ գործարքի իրականացում՝ նշանակում է հաշտվել Սյունիքի մարզը վտանգելու մտքի հետ: Հայոց մարզպետարաններին գործելու ինքնուրույնություն տալը, անշուշտ, լավ է, եթե խնդիր է դրվում մարզի շենացումը, աշխատատեղերի ստեղծումը: Սակայն մեկ այլ բան է, որ այդ հնարավորությունը վեր է ածվում կասկածելի եւ անհեռանկար, էլ չենք ասում վտանգավոր գործարքների, որոնք առնչվում են արտերկրի, առավել եւս ազերիների հետ:

Մեր երկրի բոլոր մարզերն էլ իրենց առանձնահատկություններն ու առավելություններն ունեն: Սյունիքը նրանց շարքում իր արժանի տեղն է գրավում: Սյունիքն ուրիշ է. ուզում ենք հիշեցնել մեր ոչ հեռավոր անցյալի լուսավոր դեմքերից մեկի՝ Մորուս Հասրաթյանի խոսքերը. **«...Սյունիքը հայոց մի այնպիսի նշանավոր նահանգ է, որը շուրջ 2,5 հազար տարի հայոց աշխարհի բռունցքն է եղել, երկրի կրծքավանդակը հանդիսացող Արարատյան աշխարհի եւ պորտը դարձած Մուշի ու Վասպուրականի պահպանության համար սեղմված: Մի նահանգ, որը 15 նահանգ ունեցող պատմական Հայաստանի բանակի գրեթե մի քառորդն է հանել պատերազմի դաշտ...»:** Մեր ժամանակների նժդեհյան Սյունիքը, Արցախի ազատամարտերի մասնակից Սյունիքն իր կյանքով ու պայքարով լիովին արժանացել է իր նախապապերի իրավահաջորդը լինելու պատվին: Մնում է հուսալ, որ Ձեր կտրուկ միջամտությամբ վերջ կտրվի այն անհասկանալի երեւույթներին, որոնք ի հայտ են գալիս մեր մարզում՝ կապված արոտավայրերի հետ:

Սույն նամակն ընդունվել է «Սիսական» հայրենակցական հասարակական կազմակերպության վարչության ընդլայնված նիստում:

ԺՈՐԱ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
«Սիսական» հասարակական կազմակերպության նախագահ

Լուրեր

Ինչպես տեղեկանում ենք «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ մարտի 26-ի մամլո հաղորդագրությունից՝ ընկերությունում կատարվում են կառուցվածքային եւ կադրային փոփոխություններ: Ներկայիս գլխավոր տնօրեն Իլյա Գարկովը նշանակվել է «Դանդի փրեշս մեթալզ» կորպորացիայի «Կրումովգրադ» նախագծի գլխավոր տնօրեն, իսկ նրա ներկայիս պաշտոնը ստանձնել է «ԴԳՄՔ» ՓԲԸ վարչական տնօրեն Հրաչ Ջաբրայանը: Փոփոխությունն ուժի մեջ է մտել 2013թ. ապրիլի 8-ից:

Ըստ Քաջարանից ստացված տեղեկության՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում նոր ստուգումներ են մեկնարկել: Աղբյուրի վկայությամբ՝ ստուգումները կապ չունեն այն իրողության հետ, որ քաջարանյան կլանն ու նրա սպասավորները նախագահի վերջին ընտրության ժամանակ որդեգրել էին ակտիվ չեզոքություն, թեեւ փետրվարի 18-ի նախօրյակին ինչ-որ անկյալներ պսպղուն մեքենաների շարասյունով անընդհատ վխտում էին Մաքսիմ Հակոբյանի կապանյան նստավայրի մերձակայքում՝ ընտրական գործընթացին ակտիվ մասնակցողի պատրանք ստեղծելով: Վերջին ստուգումը Քաջարանի կոմբինատում իրականացվել էր 2012-ի երկրորդ կիսամյակում եւ ավարտվել էր մի քանի միլիոն դոլար տուգանքով: Եվ քանի որ այդ ձեռնարկությունում տաբու է դրված թափանցիկ ու հրապարակային գործելակերպի վրա, «Սյունյաց երկրի» լրագրողին չհաջողվեց ճշտել նախորդ եւ ներկա ստուգումների մասին ստացած եւ Կապանում շրջանառվող խոսակցությունների հավաստիությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում առաջ են գալիս գրքերի աուդիո տարբերակները, որոնք հասանելի են դառնում հասարակության լայն շերտերին: «Peoplemeter» PR ընկերության՝ հայ մեծերի գրքերն աուդիո տարբերակով ներկայացնելու նախագիծն իրականություն դարձրեց նաեւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Նրա ֆինանսավորմամբ՝ Ակսել Բակունցի աշխատությունների ընտրանին հասանելի կլինի նաեւ աուդիոտարբերակով:

Մարտի 25-ին Կապանում տեղի ունեցավ «ՊանԱրմենիան մեդիա գրուպ» ընկերության նկարահանած «Գարեգին Նժդեհ» ֆիլմի պրեմիերան, որին ներկա էին ֆիլմի ռեժիսոր եւ պրոդյուսեր Հրաչ Քեշիշյանը, դերասաններ Շանթ Հովհաննիսյանը, Արտաշես Ալեքսանյանը, Խորեն Լեւոնյանը եւ այլք: Գարեգին Նժդեհի երիտասարդ տարիների կերպարը մարմնավորել է Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի տնօրեն, Գորիսի պետական դրամատիկական թատրոնի դերասան Շանթ Հովհաննիսյանը: Ֆիլմի սցենարի հեղինակն է Քրիստ Մանարյանը, նկարահանումները տեւել են 9 ամիս, եւ ծախսվել է մոտ 7 մլն դոլար, որի մի մասը հատկացրել է «ՋՊՄԿ» ՓԲ ընկերությունը: Երեք ժամ տեւողությամբ ֆիլմի առաջին ցուցադրությունը մայրաքաղաքի «Մոսկվա» կինոթատրոնում տեղի է ունեցել ամիսներ առաջ եւ ոչ միանշանակ է ընդունվել հանրության մեջ: Կապանյան հանդիսատեսը մեծ հետաքրքրությամբ էր սպասում ֆիլմին, չէ՞ որ Գարեգին Նժդեհը 1920-21թթ. այստեղ է ծավալել իր գործունեությունը:

Իշխանությունն այդպես էլ չի կամենում իմանալ, թե ինչ է կատարվում Կապանում ու Քաջարանում



1 ԱՊՐԻԼԻ 2013թ., ԿԱՊԱՆ

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ

Սկիզբը՝ էջ 1

Ռաֆֆի Հովհաննիսյանի սյունիքյան ներկա այցելությունը մեկնարկել էր մարզկենտրոնից: Ինչպես եւ հայտարարվել էր նախօրոք, Կապանի կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ նրա հետընտրական երրորդ հանրահավաքը: Առիթը լրագրող Սեդա Սավյանի հարցազրույցում, որ տեղի էր ունեցել փետրվարի 27-ին՝ Ռաֆֆի Հովհաննիսյանի Կապան կատարած հետընտրական առաջին այցի ժամանակ, Սուրեն Խաչատրյանի մի քանի՝ այլեւս հայտնի արտահայտություններն էին: Հանրահավաքը վարում էր Զարուհի Փոստանջյանը, ով նախեւառաջ հայտարարեց, որ ոստիկանությունը (մարզային վարչության պետ Վախթանգ Ավագյանի հանձնարարությամբ) նկարահանումներ է կատարում, նկարում է մարդկանց դեմքը՝ հետագայում նրանց զրույցի հրավիրելու եւ վախեցնելու նպատակով: Բանախոսը կոչ արեց ոստիկանության ղեկավարին՝ զերծ մնալ նման քայլերից: Այնուհետեւ ելույթ ունեցան ոչ անհայտ Արկադի Վարդանյանը, կապանցի Հասմիկ Քոթանջյանը: Վերջինս հայտարարեց. **«Ապրիլի 9-ին ինքս էլ՝ իմ երեխաների հետ գնալու եմ Երեւան՝ մասնակցելու նոր Հայաստանի ծննդին: Կոչ եմ անում, որ բոլորդ մասնակցեք այդ արարողությանը»:** Այնուհետեւ ելույթ ունեցավ Ռաֆֆի Հովհաննիսյանը, ում հարյուրավոր կապանցիներ դիմավորեցին ծափողջույններով (հանրահավաքին, փետրվարի 27-ի համեմատությամբ, ավելի քիչ մարդ էր մասնակցում. որոշ տեղեկություններով՝ մոտ 500 մարդ): Նա մասնավորապես հայտարարեց. **«Պարոն մարզպետ, ես այստեղ եմ, եկեք Ձեր անելիքն արեք, ինչ հայտարարել էիք Ձեր հարցազրույցում»:** Սուրեն Խաչատրյանը, իհարկե, չէր մասնակցում հանրահավաքին: Բայց դա չխանգարեց, որ Ռաֆֆի Հովհաննիսյանն ու Զարուհի Փոստանջյանը նրան մի քանի հորդոր եւս ուղղեն: Ռաֆֆի Հովհաննիսյանը նշեց, որ ինքը փետրվարի 18-ին Սյունիքում ավելի շատ ձայն է ստացել, քան ներկայացված է պաշտոնական տեղեկատվությամբ: Օրվա գլխավոր բանախոսը համերաշխություն հայտնեց բնապահպան Եղիա Ներսիսյանին, ում «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունը դատի է տվել ընկերության մասին սուտ եւ վիրավորական արտահայտություններ տարածելու համար: Ռաֆֆի Հովհաննիսյանն անդրադարձավ նաեւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գործունեությանը եւ մասնավորապես նշեց. **«Աշխատավորների ստրկացում՝ աշխատատեղեր ստեղծելու անվան տակ, իսկ հիմա էլ աշխատավարձերի չվճարում. ահա թե ինչով են զբաղված այդ ձեռնարկությունում»:** Անդրադառնալով սյունիքյան բարքերին՝ բանախոսն ասաց. **«Նժդեհի իրական ժառանգորդները նրա կենացը խմողները չեն, այստեղ ստում են՝ Նժդեհ ասելով, կեղծում են՝ Նժդեհ ասելով, թալանում են՝ Նժդեհ ասելով»:**

Վերջում Ռաֆֆի Հովհաննիսյանը կոչ արեց հավաքվածներին (նաեւ Գորիսի ու Սիսիանի հանդիպումներում). **«Ապրիլի 9-ին, ժամը 11-ին մասնակցել նոր Հայաստանի երդմնակալության արարողությանը»:**

Ռաֆֆի Հովհաննիսյանի կապանյան հանրահավաքը կարող էր եւ ավարտվել միջադեպով, եթե ոստիկանները ժամանակին չկասեցնեին հրահրվող սադրանքն ու քաջքշոցը: Մի խումբ երիտասարդներ եւ անհայտ մի կին (ում կապանցիները կարծեք չէին ճանաչում, եւ ներկայացել էր որպես զոհված ազատամարտիկի մայր) բացականչում էին՝ «Ռաֆֆի, հեռացի՛ր», ինչը տհաճությամբ ընդունեցին Ռաֆֆի Հովհաննիսյանի կողմնակիցները: Դրանից հետո միայն ոստիկանության ներկայացուցիչը զգուշացրեց հանրահավաքի անօրինական լինելու մասին ու կոչ արեց հավաքվածներին՝ հեռանալ հրապարակից:

Կապանում, ինչպես եւ Սիսիանում, հանրահավաքներին զուգահեռ անց էր կացվում ստորագրահավաք: Բազմաթիվ մարդիկ դրանով իրենց համերաշխությունն էին հայտնում Ռաֆֆի Հովհաննիսյանին: Դա էր նաեւ պատճառը, որ Ռաֆֆի Հովհաննիսյանը մարզկենտրոնի հանդիպման վերջում հայտարարեց. **«Կապանում մեռելոցը վեր ածվեց հարության տոնի»:**

Ռաֆֆի Հովհաննիսյանի սյունիքյան հետընտրական այցելությունները, այդ բոլորով հանդերձ, պարզագույն հարցերի առջեւ են կանգնեցնում մեզ: Այդ ինչպե՞ս է ստացվում, որ «Ժառանգության» մի ներկայացուցչի հրավեր-կոչով հարյուրավոր կապանցիներ են հավաքվում քաղաքի կենտրոնական հրապարակում եւ բուռն օվացիայով արձագանքում իշխանությունների հասցեին հնչող քննադատական ամեն մի խոսքի: Այդ ինչպե՞ս է ստացվում, որ Սերժ Սարգսյանի սյունիքյան թիմում չգտնվեց գոնե մեկը, որ գա, կանգնի Ռաֆֆի Հովհաննիսյանի կամ Զարուհի Փոստանջյանի կողքին, դեմ առ դեմ բանավիճի նրանց հետ, ապացուցի հնչող քննադատությունների սնանկությունը (եթե, իհարկե, սնանկ են դրանք): Ի վերջո փետրվարի 18-ից հետո Կապանում տեղի ունեցած երեք հանրահավաքն էլ հետընտրական տրամաբանության դրսեւորում են, ուրեմնեւ՝ ո՞ւր են Սերժ Սարգսյանի սյունիքյան եւ կապանյան շտաբերի ղեկավարները: Մի՞թե այդ մարդիկ միայն լավ, խաղաղ օրերի, վայելքի պահերի համար են շտաբի պետ: Եվ, իհարկե, վերջին հարցը՝ ինչո՞ւ իշխանությունն այդպես էլ չի կամենում իմանալ, թե ինչ է կատարվում Կապանում ու Քաջարանում:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

1 ԱՊՐԻԼԻ 2013թ., ԿԱՊԱՆ

1 ԱՊՐԻԼԻ 2013թ., ԿԱՊԱՆ

Լուսանկարները՝ Ա. Նավասարդյանի

Լուրեր

Մարտի 31-ին Հայ առաքելական եկեղեցին տոնեց հինգ տաղավար տոներից սուրբ Հարության տոնը կամ Զատիկը: Կապանի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց սուրբ պատարագ: Կապանի մշակույթի կենտրոնի հարակից տարածքում «Իմ քաղաքը» խորագրով կազմակերպվել էր հուշանվերների ցուցահանդես-վաճառք, որին իրենց աշխատանքներն էին ներկայացրել մարզկենտրոնի անհատ ստեղծագործողները: Իսկ Կապանի արվեստի քոլեջը, արվեստի եւ մանկական գեղարվեստի դպրոցները, մանկական ստեղծագործություն կենտրոնը ներկայացրել էին գեղանկարչական եւ խեցեգործական աշխատանքներ, փայտափորագրության եւ կիրառական արվեստի այլ նմուշներ: Սուրբ Հարության տոնին ուրախ տրամադրություն հաղորդեցին Կապանի մշակույթի կենտրոնի ինքնագործ խմբերը, իսկ Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնի դերասանները հանդես եկան ազգագրական պարերով, ներկայացրին ազգային խաղեր:

Գորիսի քաղաքապետարանն այս օրերին ծառատնկման աշխատանքներ է իրականացնում քաղաքի կենտրոնական փողոցների մայթեզերքին: Ինչպես տեղեկացնում է «Գորիստնտ» ՓԲ ընկերության տնօրեն Սեյրան Գեւորգյանը, «Վերջին տարիներին բավականին շատ ծառեր են հանվել, փչացել, հատվել, ինչի արդյունքում նկատելի ամայություն եւ դատարկություն է իջել երբեմնի ծառաշատ մայթերին, որը Գորիսի համար անսովոր վիճակ է: Մենք հիմա փորձում ենք հնարավորինս վերականգնել մայթերի ծառերը եւ ընթացիկ գարնանը տնկել 450 հացենի ու լորենի: Ծառերի այդ տեսակն էլ պատահական չի ընտրվել, դրանք վնաս չեն տա ո՛չ ասֆալտին, ո՛չ էլ եզրառուներին»: Ինչ վերաբերում է նորատունկ ծառերի պահպանությանը, ապա Սեյրան Գեւորգյանն ակնկալում է նաեւ մասնավոր տնատիրությունների ու հիմնարկ-ձեռնարկությունների աջակցությունը:

Ապրիլի 2-ին Կապանի մշակույթի կենտրոնի ճեմասրահում բացվեց ցուցահանդես՝ նվիրված հայ մեծանուն ճարտարապետ, ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի ծննդյան 135-ամյակին: Ցուցահանդեսին ներկայացված են անվանի ճարտարապետի Հայաստանում եւ Ռուսաստանի Դաշնությունում կատարած աշխատանքները, անձնական իրեր, ընտանեկան 22 լուսանկար: «Կազմակերպված ցուցահանդեսը մեր համաքաղաքացիների համար լավ հնարավորություն է՝ մոտիկից ծանոթանալու տաղանդաշատ ճարտարապետի աշխատանքներին, նրա անձնական իրերին, մեկ անգամ եւս գնահատելու նրա թողած ավանդը հայ ժողովրդի պատմության մեջ, - ցուցահանդեսի բացման հանդիսությանը, մասնավորապես, ասաց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Ճարտարապետի ծոռը՝ Ալեքսանդր Թամանյանի անվան թանգարանի տնօրեն Հայկ Թամանյանը, ով եւս ներկա էր միջոցառմանը, ասաց. «Նման ցուցադրությունների շնորհիվ այսօրվա երիտասարդներն ավելի կարժեւորեն այն ճարտարապետությունը, որը մենք ունեցել ենք, ու որը Թամանյանը հասցրել է մեզ՝ այն արդիականացնելով՝ կամրջելով մեր իրականությունը միջնադարի ավանդույթների հետ»:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ԵՐԵՔՇԱԲԹԻ • 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտագաղթ. միտումները եւ հաղթահարման ուղիները

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

Գ. Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ

Միգրացիան Հայաստանի Հանրապետությունից (տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012 թ. էջ 45)



Արտագաղթը Հայաստանի պատմության անբաժանելի մասն է: Դա համընդհանուր եւ ծանր բնույթ ընդունեց, երբ Հայաստանն անվերադարձ կորցրեց իր անկախ պետականությունը եւ բաժանվեց Թուրքիայի եւ Պարսկաստանի միջեւ: Արեւմտյան Հայաստանից հայերի արտագաղթը զանգվածային բնույթ ընդունեց 1915թ. ցեղասպանության հետեւանքով: Չեւավորվեց հայրենիքից դուրս հայկական սփյուռքը, որում այսօր ապրում է 10 մլն հայից 7 միլիոնը: Ահա հայ ժողովրդի ժողովրդագրության այսօրվա տխուր ու դառը պատկերը: Այդ իրավիճակը չէր կարող հենց այնպես անհետ անցնել: Հայը դարձավ գաղթական՝ ներառելով հաղթելով ապրելու ազգային հոգեբանություն: Ճիշտ է, Խորհրդային Հայաստան 1921թ. մինչեւ 1973թ. ներգաղթեց 200 հազարից ավելի մարդ, բայց հայրենադարձությունը հետագա զարգացումներ չունեցավ: Ընդհակառակը, տարբեր պատճառներով, տարբեր ժամանակներում, տարբեր չափերով նորից տեղ գտան հակառակ միտումները:

Դեռեւս Խորհրդային Հայաստանում ռեսուրսների սակավության պատճառով Ռուսաստանի եւ այլ հանրապետությունների այսպես կոչված «խամ ու խոպան» տարածքներում երկար տարիների ընթացքում ձեւավորվեց եւ կայացավ (հատկապես գյուղական շրջաններից) ժամանակավոր արտագնա աշխատանքային միգրացիան: Այդ պրոբլեմի մասնագետ Ռ. Ստեփանյանի հաշվարկներով՝ խամ ու խոպան հողերից հանրապետության բնակչության ստացած տրանսֆերտները կազմել են՝ 1960թ.՝ 486 հազար ռուբլի, 1966թ.՝ 6039 հազար ռուբլի, իսկ 1969թ.՝ 10433 հազար ռուբլի: Նշանակում է, որ Խորհրդային Հայաստանը նույնպես զերծ չէր արտագնա աշխատանքային միգրացիայից:

Հայաստանում բնակչության արտագաղթի, ներգաղթի եւ աշխատանքային միգրացիոն հոսքերի նոր զարգացումներ դրսեւորվեցին 1988թ. Սպիտակի երկրաշարժի, ԽՍՀՄ փլուզման, Հայաստանի տնտեսական շրջափակման եւ երկրի տրանսֆորմացիոն հանցավոր վերափոխումների, ինչպես եւ Արցախյան պատերազմի ու երկրի սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամի հետեւանքով:

Սպիտակի 1988թ. երկրաշարժը խլեց շուրջ 25 հազար հայի կյանք: Շուրջ 200 հազար աղետյալներ (հիմնականում կանայք եւ երեխաներ) տեղափոխվեցին ԽՍՀՄ այլ հանրապետություններ, որոնցից 150 հազարը վերադարձավ Հայաստան, իսկ 50 հազարը կորցրինք: Հետեւաբար՝ երկրաշարժի հետեւանքով Հայաստանն ունեցավ 25 հազար զոհ եւ 50 հազար անվերադարձ արտագաղթած (ընդհանուր՝ 75 հազար) մարդ: Այդ տարիներին ունեցանք նաեւ Ադրբեջանից ու ԽՍՀՄ այլ տարածքներից մոտ 420 հազար փախստականի ներհոսք (360 հազար Ադրբեջանից) եւ 170 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիների արտահոսք: Դժբախտաբար՝ Ադրբեջանից Հայաստանում հայտնված փախստականների մեծ մասը 90-ական թվականների Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական ծանր պայմանների պարագաներում արտագաղթեց Ռուսաստանի Դաշնություն եւ այլ երկրներ:

Արտահոսքի ծավալներն աճեցին հատկապես 1992-1994թթ.: Երկրաշարժի ավերածություններին գումարվեց ատոմակայանի եւ «Նաիրիտ» արտադրական միավորման հանցավոր փակումը: Դա կաթվածահար արեց երկրի տնտեսությունը, փակվեցին բազմաթիվ ձեռնարկություններ, հազարավոր մարդիկ դարձան գործազուրկ՝ ապրելով ցրտի եւ մթի պայմաններում: Հայաստանի բնակչության համար սոցիալական մեծ աղետ էր բանկերում եւ խնայդրամարկղներում կուտակված շուրջ 11 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք՝ ընտանիքների ավանդների սառեցումը: Սա Հայաստանի բնակչության աննախադեպ ունեզրկում էր, որի պատճառով միջին դաս, փոքր եւ միջին ձեռնարկատիրություն չկայացավ, իսկ սեփականաշնորհումից ստացած վաուչերները բնակչությունը չնչին գներով, որպես հացի փող, վաճառեց հին ու նոր սերտաճած նոմենկլատուրային: Բնակչության հարստության եւ եկամուտների բաշխման բեւեռացումն ահռելի չափեր ընդունեց: Ըստ 1998-1999թթ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության իրականացրած տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների՝ 20 տոկոս ամենաշատ եւ 20 տոկոս ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների տարբերությունը հասավ 32 անգամի (Ռուսաստանի Դաշնությունում ընդամենը 16 անգամի դիմաց, իսկ եվրոպական զարգացած երկրներում՝ շատ ավելի փոքր): Տնտեսական խոր ճգնաժամը, զանգվածային գործազրկությունը, բնակչության ավանդների սառեցումը, նոմենկլատուրային անարդար սեփականաշնորհումը եւ եկամուտների բեւեռացումը բնակչության 56 տոկոսին աղքատացրին, եւ ընդամենը երեք տարում շուրջ մեկ միլիոն մարդ արտագաղթեց երկրից, նրանցից միայն 370 հազարը վերադարձավ: Արտագաղթածներից ավելի քան 610 հազար մարդ կամ երկրի 5 բնակչից մեկը չվերադարձավ: Դա ազգային աղետ էր, երբ ակտիվ տարիքի, միջինից բարձր կրթամակարդակի տղամարդիկ եւ կանայք հայտնվեցին ԱՊՀ երկրներում, հիմնականում Ռուսաստանի Դաշնությունում, Եվրոպայում եւ ԱՄՆ-ում: Իր հետեւանքներով դա ժողովրդագրական ճգնաժամ էր, որը բնութագրվում է կանանց եւ տղամարդկանց բնականոն հարաբերակցության խաթարումով, ամուսնության եւ ծնելիության անկումներով, բնակչության ծերացումով, ամուսնալուծությունների աճով: Զանգվածային այդ արտագաղթից եւ ժողովրդագրական այդ մեծ խաթարումներից մինչեւ այսօր երկիրը խելքի չի գալիս:

2008-2011թթ. սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակից դուրս գալու եւ զարգացման միտումներ արձանագրելու շնորհիվ բնակչության միգրացիոն ակտիվությունը նվազեց, կայունացման միտումներ դրսեւորվեցին: Բացասական արտագնա գործոնները նվազեցին, եւ տնտեսական աճի ու դրսից ստացվող տրանսֆերտներից բնակչության կենսամակարդակը սկսեց բարձրանալ, կայունացման ու զարգացման միտումներ նկատվեցին մանր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտում: Միգրացիայի բացասական մնացորդները սկսեցին նվազել, ինչը պարզ երեւում է կից ներկայացվող աղյուսակից:

Արտագաղթը եւ աշխատուժի արտագնա միգրացիան հատուկ է ժամանակակից աշխարհին եւ ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը: Անգամ անսահման տնտեսական ռեսուրսներ եւ զարգացման մեծ հնարավորություններ ունեցող Ռուսաստանի Դաշնությունն ԱՊՀ երկրներից, այդ թվում նաեւ Հայաստանի Հանրապետությունից ոչ միայն մեծ ծավալով աշխատանքային միգրանտներ ընդունող երկիր է, այլեւ մեծ չափով միգրանտներ արտահանող երկիր: Այդպես, արդեն 2010թ. Ռուսաստանի բնակչությունը կրճատվեց ավելի քան 10 մլն մարդով՝ մեկնողների եւ վերադարձողների բացասական հաշվեկշռով, իսկ Ռուսաստանի Դաշնության միգրացիոն ծառայության հաշվարկներով՝ 2011թ. Ռուսաստանից դուրս է եկել 7,7 մլն միգրանտ: Ընդ որում՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս Ռուսաստանի Դաշնությունից մեկնում են նաեւ որակյալ մասնագետներ եւ երիտասարդներ: Ավելին, ժողովրդագրության մասնագետները կանխատեսել են, որ մինչեւ 2025թ. Ռուսաստանից կհեռանա եւս 10 միլիոն մարդ: Դա Ռուսաստանում ժողովրդագրական ճգնաժամի նախադուռն է: ՄԱԿ-ի հաշվարկներով՝ Ռուսաստանի համար առաջիկա 25 տարում տարեկան 500-600 հազար դրսից եկող միգրանտ է անհրաժեշտ, որպեսզի իր ժողովրդագրական եւ սոցիալ-տնտեսական սրված խնդիրը լուծի: Բացի վերը նշվածից ավելացնենք՝ խիստ աճել է սոցիալական լարվածությունը: Կյանքի միջին տեւողությունն իջել է մինչեւ 63 տարի: 2010թ. Ռուսաստանի կանանց թիվը 10,7 միլիոնով ավել էր, քան տղամարդկանցը: 2002թ. ամուսնացած զույգերի թիվը նվազեց մեկ միլիոնով, աճեց ամուսնալուծվածների թիվը: Այդ պատճառով ժամանակակից Ռուսաստանը դարձել է միգրացիոն կախվածության երկիր, իսկ նրա տնտեսությունը՝ միգրացիոն կախվածության տնտեսություն:

Ժողովրդագրական նման բնույթի ոչ ցանկալի զարգացումները բնորոշ են նաեւ ԱՊՀ համարյա բոլոր երկրներին՝ իրենց առանձնահատկություններով: Անգամ շատ թե քիչ սոցիալ-տնտեսական նորմալ զարգացում ունեցող մերձբալթյան հանրապետություններում նույնպես առկա են նման բնույթի միգրացիոն զարգացումներ: Հատուկ մասնագիտական հարցումներով պարզվել է, որ ժամանակակից Լիտվայի հարցվողների 80-90 տոկոսը պատրաստակամություն է հայտնել աշխատանքի մեկնել արտասահման: Երեք միլիոնից քիչ ավելի բնակչություն ունեցող Լիտվայի համար դեպի դուրս միգրացիոն մեծ հոսքերը վտանգավոր չեն, քանի որ չունի ագրեսիվ թշնամի հարեւաններ եւ, հետեւաբար, ազգային անվտանգության խնդիրներ: Այլ է այսօրվա Հայաստանի Հանրապետության վիճակը: Որպես ինքնուրույն եւ անկախ երկիր՝ գոյատեւելու համար երեք միլիոնից քիչ ավելի բնակչությունը կրճատվելու իրավունք չունի: Ուստի դա մեր ազգային անվտանգության ամենասուր խնդիրն է, լինել-չլինելու հարցն է: Այլընտրանք չունենք: Արտագաղթի կանխման ժամանակակից չափերը եւ միտումները պետք է լուծեն պետությունը, ողջ ժողովուրդը, աշխարհի ողջ հայությունը: Դա ոչ միայն Հայաստանի, այլեւ սփյուռքի ողջ հայության հայ մնալու խնդիրն է: Սփյուռքն ունի 7 միլիոն հայ՝ շուրջ 2,5 անգամ շատ, քան Հայաստանը, միեւնույն է, Աստված մի արասցե, Հայաստան չլինելու դեպքում շատ կարճ ժամանակահատվածում նրանք կդադարեն հայ լինելուց: Իսկ հայը պետք է ոչ միայն մեզ, այլեւ աշխարհին: 1987թ. Բեյրութում մի ընդունելության ժամանակ դաշնակցական լիդերներից մեկը նուրբ շեշտադրումով ասաց. «Հայը մարդկության աղն է»: Պետք է այդ ճշմարտությունը հասցնել աշխարհին: Մենք ունենք դառը փորձ, աշխարհը կարող է երեք ժամով «ուշանալ» եւ ամեն ինչ կորած տեսնել: Ուստի մեր գլխի ճարը մենք պետք է տեսնենք: Պետք է ամեն ինչ անենք՝ նախ՝ կանխելու արտագաղթը եւ ավելացնելու բնակչությունը, ինչպես բնական, այնպես էլ մեխանիկական աճի խթանումներով: Դա է Հայաստանի փրկությունը:

Միաժամանակ ուզում եմ ավելացնել՝ չարտագաղթելու համար պետք է նաեւ շատ սիրել Հայաստանը, պետք է սիրել Կոմիտասի, Հովհաննես Թումանյանի, Չարենցի, Բակունցի, Ալեքսանդր Թամանյանի, Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սեւակի, Համո Սահյանի, Վիլյամ Սարոյանի, Արամ Խաչատրյանի եւ ազգային հերոսներ Անդրանիկի ու Նժդեհի նման:

Այսօր մեր ժողովուրդը, մասնավորապես երիտասարդությունը, արդյո՞ք ստանում է համապատասխան հայրենասիրական դաստիարակություն եւ հոգեբանություն:

Խմբագրության կողմից

«Սյունյաց երկիր» թերթի համար գրված այս հոդվածում, որ ուշագրավ վիճակագրություն է պարունակում Հայաստանից բնակչության արտագաղթի վերաբերյալ, հարգարժան հեղինակին չի հաջողվել մատնանշել արտագաղթի հաղթահարման ուղիները: Հայրենասիրությունն այն գործոնը չէ, որով կարելի է կանգնեցնել արտագաղթը: Եվ, ի վերջո, ի՞նչ ասել է «շատ սիրել Հայաստանը»: Հայաստանը շատ սիրելու խնդիր (եթե, իհարկե, դա գործոն է) ունեն բոլոր նրանք, ովքեր (պաշտոնի բերումով) չեն վերացնում արտագաղթի ակնհայտ պատճառները, ովքեր նպաստում են (իրենց բարոյականությամբ ու գործելակերպով) արտագաղթի աճին: Տեղին չենք համարում նաեւ այդ հարցում Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ զուգահեռների անցկացումը:

Միջոցներ՝ մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ կառավարությունը 2013թ. փետրվարի 7-ի N130-Ն որոշմամբ ՀՀ մարզերի՝ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացրել է 7.852.488.7 հազար դրամ: Այդ թվում՝ Սյունիքի մարզպետարանին՝ 593.751.2 հազար դրամ՝ համաձայն N8 հավելվածի, որ ներկայացվում է ստորեւ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

(հազ. դրամ)

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների եւ աշխատանքների անվանումները	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	ԸՆԴԱՄԵՆԸ	273,514.8	538,751.2	593,751.2	593,751.2
	այդ թվում՝				
1	Շենքերի եւ շինութ. շինարարություն	32,000.00	40,000.0	40,000.0	40,000.0
	որից՝				
1.1	Ագարակ-մաքսատուն ճանապարհի կառուցում	32,000.0	40,000.0	40,000.0	40,000.0
2	Շենքերի եւ շինութ. կապիտալ վերանորոգում	163,412.1	420,648.5	467,648.5	467,648.5
	որից՝				
2.1	Կապան համայնքի Երկաթուղայինների ճանապարհի ասֆալտապատում	76,000.0	95,000.0	95,000.0	95,000.0
2.2	Գորիս համայնքի Ա.Սաթյան ճանապարհի ասֆալտապատում	4,303.4	17,213.4	17,213.4	17,213.4
2.3	Գորիս համայնքի Վանքի տափ թաղամասի ճանապարհի ասֆալտապատում	8,500.0	34,000.0	34,000.0	34,000.0
2.4	Սիսիան համայնքի Խանջյան ճանապարհի ասֆալտապատում	12,275.8	49,103.3	49,103.3	49,103.3
2.5	Գորիս համայնքի N 2 դպրոցի վերանորոգում	10,000.0	40,000.0	40,000.0	40,000.0
2.6	Հարթաշեն համայնքի դպրոցի ուսումնական մասնաշենքի հիմքի եւ պատերի ուժեղացում	4,333.0	17,331.8	17,331.8	17,331.8
2.7	Կապան համայնքի N 10 դպրոցի երեք դասասենյակների վերանորոգում	2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0
2.8	Սիսիան համայնքի N 1 դպրոցի վերանորոգում	7,500.0	30,000.0	30,000.0	30,000.0
2.9	Շաղաթի դպրոցի տանիքի վերանորոգում	4,750.0	19,000.0	19,000.0	19,000.0
2.10	Կապան համայնքի N 6 դպրոցի վերանորոգում	8,750.0	35,000.0	35,000.0	35,000.0
2.11	Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	12,500.0	50,000.0	50,000.0	50,000.0
2.12	Մեղրի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	3,250.0	13,000.0	13,000.0	13,000.0
2.13	Մեղրի համայնքի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում	3,250.0	13,000.0	13,000.0	13,000.0
2.14	Մեղրի համայնքի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգում	6,000.0	6,000.0	6,000.0	6,000.0
2.15	Կապան համայնքի արվեստի քոլեջի համերգային դահլիճի վերանորոգում	0.0	0.0	20,000.0	20,000.0
2.16	Լորի խմելու ջրի ջրագծի վերանորոգում	0.0	0.0	5,000.0	5,000.0
2.17	Խնձորեսկ համայնքի մարզադահլիճի տանիքի վերանորոգում եւ պատերի հիդրոմեկուսացում	0.0	0.0	22,000.0	22,000.0
3	Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	18,000.0	18,000.0	18,000.0	18,000.0
	որից՝				
3.1	«Մեղրու մշակույթի կենտրոն» ՀԲՀ-ի համար մշակութային գույքի ձեռքբերման նպատակով Մեղրի համայնքին սուբվենցիայի տրամադրում	3,000.0	3,000.0	3,000.0	3,000.0
3.2	Ագարակ համայնքի «Ծմակ» մարզամշակութային ՓԲԸ-ի համար մշակութային գույքի ձեռքբերման նպատակով Ագարակ համայնքին սուբվենցիայի տրամադրում	3,000.0	3,000.0	3,000.0	3,000.0
3.3	Կապան համայնքի «Մշակույթի կենտրոն» ՀԲՀ-ի համար մշակութային գույքի ձեռքբերման նպատակով Կապան համայնքին սուբվենցիայի տրամադրում	4,000.0	4,000.0	4,000.0	4,000.0
3.4	Գորիս համայնքի «Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի համար մշակութային գույքի ձեռքբերման նպատակով Գորիս համայնքին սուբվենցիայի տրամադրում	3,000.0	3,000.0	3,000.0	3,000.0
3.5	Խնձորեսկ համայնքի մշակույթի տան համար մշակութային գույքի ձեռքբերման նպատակով Խնձորեսկ համայնքին սուբվենցիայի տրամադրում	5,000.0	5,000.0	5,000.0	5,000.0
4	Վարչական սարքավորումներ	1,000.0	1,000.0	9,000.0	9,000.0
	որից՝				
4.1	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի համար մշակ. գույքի ձեռք բերում	0.0	0.0	8,000.0	8,000.0
4.2	«Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի համար մշակութային գույքի ձեռք բերում	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0
5	Նախագծահետազոտական ծախսեր	1,500.0	1,500.0	1,500.0	1,500.0
6	Ընթացիկ դրամաշնորհներ պետ. եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններին	57,602.7	57,602.7	57,602.7	57,602.7
	որից՝				
6.1	«ՀՀ 2010-2014 թթ. սերմնաբուծության եւ սերմարտադրության զարգացման ծրագրի» շրջանակներում 2011թ. ՀՀ մարզերին 1:2 փոխհարաբերությամբ տրամադրված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի գումարի վերադարձման նպատակով «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին գումարի տրամադրում	57,602.7	57,602.7	57,602.7	57,602.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Արտագնա աշխատանքի մեկնածների թիվը որոշ գյուղապետեր թաքցնում են

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Այն, որ արտագաղթը երկրում հասել է ահռելի չափերի, բոլորին է հայտնի: Իշխանությունների խոսնակները եթերով եւ մամուլում պարբերաբար փորձում են բոլորիս համոզել, որ իրականում արտագաղթը սպառնալից չափեր չունի, հիմնականում արտագնա աշխատանքի մեկնողներն են, որը սեզոնային բնույթ է կրում: Պարզելու համար, թե ինչպիսին է արտագաղթի պատկերը Սյունիքի գյուղերում, մենք հեռախոսային խոսակցություն ունեցանք մարզի գյուղապետերի հետ, ինչի հիման վրա էլ կազմեցինք ներքոհիշյալ աղյուսակը: Գրանցել ենք գյուղի հաշվառված բնակչության թիվը եւ այն բնակիչների թիվը, ովքեր հաշվառված են տվյալ համայնքում, բայց ապրում են Հայաստանի Հանրապետությունից դուրս, այդ թվում՝ արտագնա աշխատանքի մեկնածները: Իհարկե, այս թվերը մոտավոր են, բայցեւայնպես դրանցով առաջնորդվելով՝ կարելի է որոշակի պատկերացում կազմել արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակի մասին: Նշենք, որ այս թվերի մեջ չկան մարզի քաղաքային համայնքների համապատասխան տվյալները, ինչը ճշտել հնարավոր չէր, սակայն ինչն ամենայն հավանականությամբ ավելի մեծ թիվ կկազմի, քան գյուղական համայնքներից հեռացած մարդկանց թիվը: Խոշոր գյուղական համայնքներում երկրորդ ցուցանիշն ավելի մոտավոր է, համայնքապետերի խոսքով՝ հնարավոր չէ իմանալ, թե երկարաժամկետ բացակայողներից քանիսն են հանրապետությունից դուրս ապրում, քանիսը՝ երկրի այլ քաղաքներում: Օրինակ, Սյունիք համայնքում հաշվառված է 1512 բնակիչ, որից 125-ը բացակայում է գյուղից, բայց համայնքապետը դժվարացավ ասել, թե նրանցից քանիսն են հանրապետությունից դուրս ապրում, քանիսը՝ հանրապետության այլ քաղաքներում: Կային նաեւ ժամանակավորապես ԼՂՀ աշխատանքի մեկնածներ, որոնց թիվը ճշգրիտ հայտնի չէ: Մի շարք համայնքների ղեկավարներ էլ՝ Հալիձոր (Սամվել Ասրյան), Քարաշեն (Գառնիկ Շահնուբարյան), Տեղ (Սաղաթել Գալստյան), տեղյակ չէին, թե որքան մարդ է գյուղից արտագնա աշխատանքի մեկնել:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

1	Ագարակ	191	3
2	Աղվանի	124	10
3	Աճանան	190	30
4	Անտառաշատ	115	13
5	Առաջածոր	182	17
6	Արծվանիկ	710	27
7	Գեղանուշ	286	70
8	Գեղի	300	0
9	Դավիթ-բեկ	877	35
10	Եղեգ	157	19
11	Եղվարդ	276	70
12	Լեռնածոր	966	34
13	Խդրանց	59	12
14	Ծավ	375	21
15	Կաղնուտ	118	3
16	Զորաստան	68	12
17	Ճակատեն	164	18
18	Ն.Խոտանան	67	4
19	Ն.Հանդ	110	10
20	Նոր Աստղաբերդ	112	9
21	Նորաշենիկ	111	9
22	Շիկահող	271	11
23	Շրվենանց	72	4
24	Չափնի	100	15
25	Սեւաքար	175	6
26	Սյունիք	1512	125
27	Սրաշեն	10	1
28	Վանեք	50	7
29	Վարդավանք	120	5
30	Տանձավեր	235	5
31	Տավրուս	95	0
32	Ուժանիս	87	11
33	Քաջարան	220	12
34	Օխտար	117	17
35	Ակներ	1357	130
36	Արավուս	217	23
37	Բարձրավան	170	10
38	Խնածախ	1028	32
39	Խնձորեսկ	2300	25
40	Խոզնավար	418	4
41	Խոտ	940	80
42	Կոռնիձոր	1300	132
43	Հալիձոր	609	12
44	Հարթաշեն	749	53
45	Հարժիս	960	110
46	Ն.Խնձորեսկ	317	4
47	Շինուհայր	2786	375
48	Շուռնուխ	210	8
49	Որոտան /Գորիս/	308	8
50	Սվարանց	289	50
51	Վաղատուր	361	21
52	Վերիշեն	2483	250
53	Տաթեւ	980	50
54	Տանձատափ	65	2
55	Տեղ	2845	0
56	Քաշունի	23	0
57	Քարահունջ	1305	28
58	Քարաշեն	570	
59	Ախլաթյան	662	168
60	Աղիտու	360	15
61	Անգեղակոթ	2038	279
62	Աշոտավան	650	15
63	Արեւիս	74	0
64	Բալաք	196	36
65	Բնունիս	215	15
66	Բռնակոթ	2500	40
67	Գետաթաղ	210	25
68	Գորայք	580	8
69	Դարբաս	1186	134
70	Թանահատ	64	4
71	Թասիկ	284	0
72	Իշխանասար	172	40
73	Լծեն	131	6
74	Լոր	420	25
75	Ծղուկ	365	20
76	Հացավան	271	0
77	Մուցք	370	23
78	Նժդեհ	136	36
79	Նորավան	540	70
80	Շաղատ	1205	40
81	Շաքի	1370	70
82	Շենաթաղ	422	20
83	Որոտան /Սիս/	365	25
84	Սալվարդ	340	35
85	Սառնակունք	491	5
86	Սպանդարյան	484	12
87	Վաղատին	578	83
88	Տոլորս	462	30
89	Տորունիք	173	43
90	Ույծ	508	36
91	Ալվանք	368	57
92	Գուդեմնիս	56	0
93	Լեհվազ	740	10
94	Լիճք	177	6
95	Կարճեւան	273	3
96	Կուրիս	69	1
97	Նռնաձոր	137	13
98	Շվանիձոր	326	11
99	Վահրավար	60	1
100	Վարդանիձոր	325	30
101	Տաշտուն	122	2

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ԵՐԵՔՇԱԲԹԻ • 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Սա, իրոք, արդեն «SOS» է, փագնապալի իրավիճակ

Վաղատուրը մեռնում է, բայց Վաղատուրը պետք է ապրի

Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Գորիսի հեռավոր գյուղերից է Վաղատուրը՝ քաղաքից 37կմ հեռավորության վրա: Գորիսից Վաղատուր է ձգվում երկու ճանապարհ. առաջին՝ հիմնականը, եւ երկրորդը՝ Վերիշեն համայնքի միջով, «Բադի լճի» եզրագծով: Վերջին ճանապարհը կառուցվել է 1980-ականներին եւ դարձել առավել գործածական՝ հիմնական ճանապարհից 18կմ կարճ լինելու պատճառով:

Վաղատուր գյուղը (նախկինում՝ Բայանդուր) ներկայումս ունի 475 բնակիչ: Այնտեղ 20-րդ դարասկզբին բնակություն են հաստատել նաեւ հայ-թաթարական կոտորածների հետեւանքով Մինքենդ եւ Զեյվա գյուղերից, Արցախից արտագաղթած հայեր:

Գյուղում միջնադարից պահպանվել է երկու եկեղեցի: Դրանք, ըստ վկայագիրների, վերաշինվել են 17-րդ դարում: Հին գյուղն առաջին անգամ հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» գրքում՝ Վաղատու անունով, եւ առավելապես տնտեսական վերելք է ապրել 16-17-րդ դարերում՝ Խանածախի Մելիք Հայկազյանների տիրապետության օրոք: Գյուղը եւ նրա հարակից հայկական բնակավայրերը հարյուրամյակների ընթացքում բազմիցս ենթարկվել են թուրքալեզու զավթիչների ասպատակություններին, նրանց կազմակերպած ջարդերին, կոտորածներին: Շատ հաճախ նրանց հաջողվել է զավթել գյուղի շրջակա բնակավայրերը, թուրքացնել առանձին սարերի, ձորերի, աղբյուրների անուններ եւ մշտապես հարձակումներ գործել Բայանդուր անվանված Վաղատուր գեղասքանչ գյուղի վրա, փորձել տիրանալ նրա ծաղկառատ դաշտավայրերին, ընդարձակ հողերին, սառնորակ աղբյուրներին: Բայց Վաղատուրը միշտ հերոսաբար դիմադրել է, իր գիրկն առել թուրքերի կողմից զավթված տարածքներից մահապուրծ հայրենակիցներին եւ միայն 20-րդ դարի 20-ական թվականներին՝ թուրքերին տված ջախջախիչ մարտերից հետո, վերջնական ազատագրվել: Գյուղում թուրքերի կազմակերպած կոտորածները բնակիչների մեջ ամրագրվել են առանձին տեղանունների նշանակությամբ, եւ մինչեւ այսօր այդ ահասարսուռ լեգենդները պատմվում են՝ «Դադ մելիք» սար, «Հալաք» տարածք եւ այլն, որոնք, վաղուց արդեն ժամանակն է, որ վերանվանվեն իրենց հին հայկական անուններով:

Գյուղում տարրական դպրոց առաջին անգամ բացվել է 1928թ., որի հիմնադիրը եւ միակ ուսուցիչը եղել է գյուղի քահանա Միքայել Մինասյանը:

1930թ. գյուղում կառուցվել է առաջին պանրագործարանը:

1958թ. էլեկտրաֆիկացվել է գյուղը, 1963-ին՝ կառուցվել դպրոցական տիպային նոր շենք:

1969թ. գյուղը վերանվանվել է Վաղատուր նախկին անունով:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 120 վաղատուրցի, զոհվել՝ 68 հոգի: Պատերազմից վերադարձած վաղատուրցիները՝ բազմաթիվ շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով (Գրիշա Միրզոյան, Արամայիս Բաբաջանյան, Միշա Գրիգորյան, Անդրանիկ Սարգսյան, Շավարշ Առաքելյան, Մեսրոպ Հովհաննիսյան….) հետագայում ներգրավվել են երկրի խաղաղ շինարարության մեջ՝ իրենց արժանավոր եւ մեծ վաստակով նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի վերելքին ու նվաճումներին: 1967թ. գյուղում կառուցվել է հուշարձան-կոթող՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում զոհված վաղատուրցիների հիշատակին:

Արցախյան պատերազմի ժամանակ կամավորական ջոկատներում կռվել եւ պատերազմին առնչվող տարբեր գործողություններին մասնակցել են վաղատուրցի երիտասարդները: Զոհվել է մեկ ազատամարտիկ՝ Արարատ Մելսիկի Միրզոյանը, ում անունով անվանակոչվել է գյուղի միջնակարգ դպրոցի ռազմագիտության դասարանը:

ՄԻԱՅՆ ՄԻ ՔԱՆԻ ՏՈՂՈՎ

Մինչեւ 1991թ. գյուղի տնտեսությունն ունեցել է 739 խոշոր, 2856 մանր եղջերավոր անասուն, 9 միավոր գյուղտեխնիկա, գյուղմեքենաների պարկ, պահեստներ, սիլոսի հորեր…. Անասնագոմերի համար անց են կացվել 3,5կմ երկարությամբ ջրատար, անասնապահական ֆերմաներում եւ կացարաններում՝ լուսավորվածություն, ամենուր տեղադրվել են հեռուստացույցներ, հասցվել թարմ թերթեր, յայլաղներում ցուցադրվել են կինոֆիլմեր, կազմակերպվել տարբեր մշակութային միջոցառումներ: Գյուղն ունեցել է ֆուտբոլի դաշտ, ակումբ՝ կից խաղասենյակով, գրադարան: Գյուղատնտեսության առաջավորները պարբերաբար խրախուսվել են հանգստյան տներ, նախկին սոցիալիստական երկրներ մեկնելու անվճար ուղեգրերով: Տասնամյակներ շարունակ Վաղատուրի տնտեսությունը շրջանում ճանաչվել է լավագույններից մեկը, շատ հաճախ՝ լավագույնը, արժանացել փոխանցիկ կարմիր դրոշների, անունը գրանցել շրջանի պատվո տախտակի վրա, որն այն ժամանակ համարվում էր բարձրագույն գնահատական: Գյուղի վարելահողերից տարեկան ստացվել է 1555g հացահատիկ, տնտեսությունը տարեկան արտադրել է 2820g կաթ, 734g միս, 48,2g բուրդ, 334g բանջարեղեն, 575g կարտոֆիլ եւ այլն:

Վաղատուրում են ծնվել նախկին ՀԽՍՀ գերագույն խորհրդի նախագահության նախագահ Շմավոն Առուշանյանը, «Պրավդա» թերթի ճանաչված թղթակից Արամայիս Սարգսյանը, ԱՄՆ-ում բնակվող աշխարհահռչակ քանդակագործ Սպարտակ Բաբայանը, շրջանում հայտնի պետական-հասարակական գործիչներ Վաղարշակ Սարգսյանը (1947-49թթ. Գորիսի քաղխորհրդի գործկոմի նախագահ), Սարգիս Բաբաջանյանը, Գուրգեն Սարգսյանը, Երվանդ Հովհաննիսյանը, Ալեքսանդր Բարխուդարյանը, Իգնատ Բեգլարյանը, ներկայումս Աժ պատգամավոր Արտակ Դավթյանը, «Զանգեզուր» թերթի խմբագրի տեղակալ Նիկոլայ Բաբաջանյանը…. Արմատներով վաղատուրցի են եւ այսօր էլ ՀՀ-ում ու արտերկրում են աշխատում շնորհալի բժիշկներ, իրավաբաններ, մանկավարժներ, լրագրողներ, արվեստագետներ….

Վաղատուրցիներն աշխատասեր են, պատվախնդիր եւ ուղղամիտ, ուսումնատենչ, անարդարության դեմ պոռթկուն…

Վաղատուրն ունի հրաշալի բնակլիմայական պայմաններ, ընդարձակ հողատարածք, ծաղկառատ դաշտավայրեր եւ բերքատու այգիներ:

…«Սյունյաց երկրի» լրագրողական խումբը Վաղատուր մեկնեց երկրորդ՝ «Բադի լճի» ճանապարհով: Նախապես գիտեինք, որ ճանապարհն անբարեկարգ է, վտանգավոր եւ անհարմար: 1980-ականներին կառուցվելով եւ շահագործման հանձնվելով՝ այն հետագայում չի վերանորոգվել: Անգամ մասնակի վերանորոգումները կարող էին փոխել իրական պատկերը. տարիների ընթացքում քանդված ասֆալտ, քարակոշտեր, փոսեր եւ զառիվարներ, ձորնիվար գահավիժող անցումներ՝ տեղ-տեղ չափազանց նեղացած, վթարի «հրավիրող» քարաբլուրխայծերով: Մինչդեռ այդ նպատակահարմար ճանապարհը շուրջ 30 տարի օգտագործվել է տարածքի երեք գյուղի բնակչության եւ այնտեղ մեկնողների կողմից, եւ վերջին 15-20 տարին օգտագործվել է ահուդողով: Իսկ ձմռան երկարուձիգ ամիսներին այս ճանապարհն ամեն ակնթարթ լի է հավանական ողբերգական դեպքերով: Ասում են՝ յուրաքանչյուր բնակավայր սկսվում է իր ճանապարհից: Վաղատուրի խնդիրը սոսկ Գորիսից կտրվածությունը չէ. հիշյալ ճանապարհով ժամանակին բնակիչը Վաղատուր է հասել 15-20 րոպեում: Անգամ 40 րոպեում գյուղ հասնելը դարձյալ դժվարություն չէ: Իրական կտրվածությունը եւ հեռավորությունը տեղական իշխանությունների բարի կամքի, գյուղի հոգսերին ու խնդիրներին նվիրվելու մեջ է, որի բացակայությունը դժվար չէ նկատել:

ՄՏՆԵԼՈՎ ԳՅՈՒՂ

Առաջինը, որ մեզ դիմավորեց, «Հալաքի» (գյուղի թաղամաս)՝ ժամանակին նշանավոր խնձորենիների ձգվող այգին էր՝ տեղ-տեղ նոսրացած, մի մասում՝ գարունը մեռած, անտերություն ճաշակած, բարձիթողի… Խնամքի ոչ մի նշույլ: Այգին վաղուց կտոր-կտոր (սեփականաշնորհման արդյունքում) տրված է գյուղացիներին, նաեւ՝ Գորիսում ապրող որոշ վաղատուրցիների: Իրականում, ոչ միայն դրսում ապրող վաղատուրցիները (որը դեռ հասկանալ կարելի է), նաեւ գյուղի բնակիչները սրտացավ չեն եղել այգիների նկատմամբ, եւ անցած տարիների ընթացքում ոչ մեկը չի մտածել դրանք խնամելու, մշակելու, պահպանելու ուղղությամբ: Մինչդեռ ժամանակին (վերեւի այգին հիմնել էր կոլտնտեսության նախագահ Իսրայել Գրիգորյանը 1930-ականների վերջին, իսկ գերեզմանոցի մերձակայքի այգին՝ Սարգիս Բաբաջանյանը՝ 1960-ականներին) դրանք իրենց բերքատվությամբ, ճոխությամբ եւ գեղեցկությամբ դարձել էին գյուղի հարստությունն ու զարդը, ողջ շրջանի պարծանքը: Նրանց բերքը ոչ միայն գյուղին էր բավականացնում, այլեւ դարձել էր վաճառքի եւ արտահանման աղբյուր: Վաղատուրի խնձորը մեծ համարում ուներ: Իսկ վաղատուրցու համար, բացի նրանից, որ ողջ տարին նրա սեղանին էր, տոնական օրերին՝ տնտեսության ղեկավարության կողմից, նվերի կարգով, յուրաքանչյուր ընտանիք ստանում էր մեկ արկղ քաղցրահամ խնձոր: Խնձորենիները բազմատեսակ էին, բերքը՝ երկար պահպանվող, հյութալի եւ գեղեցիկ: Ժամանակին այն Կապանի պահածոների գործարանի մշտական հումք էր, իսկ Գորիսի նորաբաց գիշերօթիկ դպրոցը տարիներ շարունակ գտնվում էր վերելք ապրող Վաղատուրի տնտեսության հովանու ներքո: Նայելով նոսրացած-չորացած ծառերի անզոր, երկինք պարզված շարքերին՝ ակամայից հետհիշողությամբ պայծառանում են երբեմնի այգիների համատարած ճերմակ ծաղկունքը, ճոխ այգեկութը…Որն, ասես, չի՞ էլ եղել:

Գյուղ մտնող հենց առաջին տների բնակիչներն անհավես գործ են անում, հոգնած են, անտարբեր դեմքերով: Մեր առաջին հարցը խնձորենիների մասին է, որոնք փռված էին մեր տեսադաշտում՝ անկենդան-անկանոն շարքերով: «Որոշները բերք են տալիս», - սա էր նրանց պատասխանը: «Ո՞վ մշակի, ամեն մարդ իր գործին է, բերքն էլ, եթե լինում է, գնում-հավաքում ենք»: Ահա այն, ինչ լսեցինք: Ապշել կարելի էր: Իրենց սեփական այգին չեն մշակում՝ մտածելով՝ «չոլի» ծառ է, ինքն իրեն բերք կտա: Կտա՝ լավ, չի տա՝ կկտրենք: Այ քեզ տրամաբանություն: Նախկին աշխատասեր վաղատուրցուց հետք չի մնացել: Մարդիկ, գարունը դեռ չսկսած, արդեն հոգնած են, անտրամադիր, ասես ողջ աշխարհի «մալուխարջը» իրենց ուսերին է: Նրանցից մեկը՝ Դարչո Հայրապետյանը, լուրջ-լուրջ մտքեր է արտահայտում արտագաղթի մասին. «Ժամանակին գյուղում արդյունաբերական կոմբինատի մասնաճյուղ կար, ջահելներն աշխատում էին: Հիմա ի՞նչ, կողպեքը գցել-փակել են շատ-շատ տներ: Ընտանիքներով են արտագաղթում՝ Հայկազենք, Շավարշենք, Ազատենք, Խաչատուրենք….»: Դարչոն թվարկում է, եւ չի վերջանում: «Մարդիկ հազիվ իրենց տնամերձն են մշակում, ջահելը միշտ ջահել չի մնում, ջահելն էլ է մեծանում, հիվանդանում, ուժից ընկնում: Գյուղում մի մասն արդեն կենսաթոշակառու է, շատերը ծեր են, միայնակ՝ ցածր թոշակով: Երիտասարդի գրպանում էլ փող չկա: Ամուսնացած տղան ծնողից ծխախոտի փող է խնդրում…»:

Հեծանիվ հայտնագործելու ցանկություն չկա. բոլոր գյուղերն էլ, համարյա, նույն խնդիրներն ու հոգսերն ունեն, բայց Վաղատուրում, ի տարբերություն շրջանի շատ գյուղերի, խնդիրները խրոնիկ բնույթ են կրում եւ արդեն բավականաչափ խորացել են:

«Գյուղը, առանց այն էլ, մի քիչ հեռու է քաղաքից, - ասում է Դարչոն, - բայց, պատկերացրեք, այդքանով հանդերձ, արդեն մի քանի ամիս է, ինչ Գորիսից որեւէ ավտոբուս կամ երթուղային տաքսի չի գալիս: Քաղաք մեկնելու որեւէ հարցով՝ առողջական, տնտեսական, անձնական, գյուղացին կանգնում է փաստի առջեւ: Տրանսպորտային կապ չկա քաղաքի հետ: Էլ ի՞նչ եք ուզում: Դեռ չեմ խոսում ծննդաբերող կամ հղի կնոջ մասին, որոնց հարկ է լինում տեղափոխել Գորիս: Գյուղացին այնքան հնարավորություն չունի, որ անվերջ տաքսի կանչի Գորիսից: Գոնե շաբաթական մեկ-երկու անգամ ավտոբուս էր գալիս գյուղ, որը դարձյալ քիչ էր, բայց դա էլ է վերացել: Վարորդների, գծատերերի քմահաճույքո՞վ պետք է գյուղն ապրի, չեմ հասկանում: Ի՞նչ է, պետություն, իշխանություն չկա՞: Մարզի իշխանություններն էլ տեղյակ են, խոստացել են, որ կկարգավորեն: Մինչեւ այսօր նույն վիճակն է, ի՞նչ ասեմ: Գյուղացին էլ ի՞նչ անի. տեսնում է, որ իշխանություններն անտարբեր են գյուղի հոգսերի հանդեպ, ինքն էլ ընկճվում, ուժահատվում է, դառնում անտարբեր»:

Մինչ Դարչոն եւ մյուսներն իրար ընդհատելով-լրացնելով խոսում էին, ես լսում էի պարզկա օդում մեղմ խշշացող գետի ձայնը, որը սկիզբ է առնում Աստված գիտե՝ որտեղից, եւ արդեն դարեր է, գուցե՝ հազարամյակներ, ինչ հոսում է Վաղատուրի միջով, կտրում գյուղեր ու տարածքներ, միանում Աղավնո գետին: Մեր նախնիները բնակավայր հիմնելիս առաջին հերթին հաշվի են առել բնական աղբյուրների, տարածքով հոսող գետերի առկայության հանգամանքը եւ ապա նրանց կողքին տուն-տեղ դրել: Բացառություն չեն եղել նաեւ վաղատուրցիները: Դարձյալ, անկախ իմ կամքից, վերապրում եմ մանկությունս, ամառային արձակուրդի սքանչելի օրերը. տատս, զանգեզուրյան տարազի կարմիր հալավը ծածանելով եւ ճակատնոցի արծաթները զրնգացնելով, իր գործած գույնզգույն կարպետներն առած, գնում էր գյուղի ներքին թաղի այգիներից էլ վար՝ դրանք լվանալու: Երբեմն հոգնելով՝ գետի ջրով շփում էր դեմքը: Իսկ ես, ողորկ սալաքարին նստած, հաշվում էի գետի մեջ պարզ ուրվագծվող մեծ ու մանրիկ խճաքարերը, նայում արեւի շողերից պեծպեծին տվող, վճիտ-հոսող ջրերին… Հապա, տիկի մեջ լցված պանիրը (մոթալ), որ տատս կապելուց հետո անպայման գետի ջրով էր լվանում՝ ասելով, որ գետի ջուրն ավելի լավ է պնդացնում պանիրը, եւ վաղ առավոտյան, հիշում եմ, ինձ խնայելով, արթնացնում էր տղա թոռներին՝ ուղարկում գետից ջուր բերելու… Մի գետը մի ողջ գյուղ է պահել: Մարդիկ նրա զուլալ ջրով լվացք են արել, լողացել են, այգիներ ոռոգել, անասուն ջրել, եւ ոչ մեկի մտքով չի անցել իր կոյուղին լցնել … գետի մեջ: Իսկ այսօր… Ի դեպ, գյուղի կոյուղաջրերից Վաղատուրի աղտոտվող գետի մասին առաջինն ահազանգ է բարձրացրել համայնքի պատվավոր անդամ Քաջիկ Բաբաջանյանը «Սյունյաց երկիր» թերթում տպագրված իր հոդվածում: Ցավոք, ոչ մի արձագանք, եւ աղտոտումը կանխարգելող ոչ մի փորձ չի արվել: Հարցը մնացել է անպատասխան եւ անհետեւանք: Այսօր էլ դեպի գետ են ուղղված վաղատուրցիների կոյուղագծերը, եւ, փաստորեն, համաճարակի առջեւ է կանգնած ողջ գյուղը: Կոյուղաջրերը լցվում են եւ վերջ: Գետն աղտոտում են եւ վերջ: Բա ո՞ւր տանեն կոյուղագծերը. այսպես են պատճառաբանում: Գյուղում կոյուղու ներքին ցանց գոյություն չունի: Տարի-

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԸ



Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

Մեր առաջ հարցը բարձրացվել է համայնքի իշխանության կողմից եւ տեղում էլ մարվել: Մարդիկ հոգնել են տնամերձերի ծայրում տեղակայված արտաքնոցներից, ուզում են քաղաքակրթության իրենց բաժին նմուշները վայելել, բայց ինչի՞, ո՞ւմ հաշվին: Գետի՞: Հետո խոսում ենք նոր առաջացած հիվանդություններից՝ ալերգիա, ուռուցք, դեպրեսիա: Մի պահ յուրաքանչյուրը թող իրեն դնի գետի տեղը: Ի՞նչ կա զարմանալու: Գետն էլ մեզ պես, ավելի քան, կենդանի օրգանիզմ է, եւ ամենամեծ հիշողությունն էլ ջո՜ւրն ունի: Չե՞ք հավատում, գնանք գյուղի գերեզմանոց. տեսեք՝ ինչքա՜ն ջահելներ են վերջին տարիներին հանկարծակի ի հայտ եկած ուռուցք-հիվանդություններից մահացել: Ո՞վ գիտե, գուցե գետը վրեժխնդիր է եղել եւ, հավատացեք, դեռ վրեժխնդիր է լինելու: Չե՞ք լսել, որ ջուրն ամենաերկարն է ինֆորմացիան պահպանում, համակարգչից էլ շա՜տ երկար: Վիրավորանքի ինֆորմացիան: Էլ չենք խոսում առկա աղտոտվածության փաստի մասին: Գյուղացիները զարմանում են, փորձում են հերքել՝ զգալով հարցի լրջությունը: Դե, նրանք գյուղի վերեւում են ապրում, գետի ակունքներին մոտ: Իրենց ինչ. կոյուղին հոսում է ներքեւ, իսկ իրենք՝ «վերի թաղի ծաղիկները», էլի մաքուր ջրով են իրենց անասունն ու այգին ջրում:

Լավ, այս հարցն էլ պատասխան չունեցավ: Այժմ, ինձ ասեք, թե ինչու գյուղի վարելահողերը մասսայական խոտածածկ են, եւ ինչու գյուղացին իր սեփական վարելահողում վարուցանք չի անում: «Ի՞նչով, ինչպե՞ս անի, գյուղացին փող չունի, կոմբայն չկա: Մեկ-երկու հոգի անցած տարի վարուցանք էին արել. կոմբայն չկար՝ փչացավ անասունի ոտքի տակ, ձյունն էլ եկավ վրեն: Էլ չենք խոսում, որ սերմացուն էլ անորակ էր»: Այսպես են ասում մեր շուրջը համախմբված գյուղացիները: Առանց ասելու էլ գիտեինք պատասխանը: Հաստատ կարող եմ ասել. Դարչոյի եւ մյուս երեք հոգու բախտը չի բերել, որ գյուղի «գլխին» առաջինն իրենք են մեզ «ռաստ» եկել, դե, մենք էլ… Ոչ մի գոհացուցիչ պատասխան: Գյուղացին ի՞նչ պատասխան տա «իշխանապատկան» հարցերին՝ հա՜յ այգի , հա՜յ գետ, հա՜յ վարելահող ու գազ…

Իշխանության այսօրվա կրողն էլ, ցավոք, գյուղում չէ, Գորիսում է, եւ մեր երկու հեռախոսազանգին էլ կարճ պատասխանեց. «Չգիտեմ՝ երբ եմ գալու, ես մեր անասնաբույժ Մասիսին կասեմ՝ կպատասխանի ձեր հարցերին»: Մենք էլ նախքան գյուղապետարան հասնելն ում հանդիպում՝ գլխին էինք բարդում մեր հարցերը: Մտածում էինք՝ գյուղացին ավելի ճիշտ կպատասխանի, բայց գյուղացին էլ կամ խուսանավում էր՝ զգուշանալով, կամ ցավոտ, խիստ անձնական պատասխաններ տալիս: Ա՛յ, օրինակ՝ գյուղ մտնող գազատարը. մեզ հանդիպած որոշ գյուղացիներ անտարբեր, տարակուսանքով եւ չթաքցրած հիասթափությամբ ընդունեցին մեր շնորհավորանքներն առաջիկայում գյուղում բնական գազ ունենալու կապակցությամբ: Գյուղ մտնող վերեւի եւ ներքեւի ճանապարհների երկայնքով ձգվող գազատարն արդեն գյուղ է հասել:

«Չենք ուզում», - միանշանակ ասացին նրանք:

«Սաղ պարերը պարել ենք, մնացել է սարի սմբուլը», - ասաց մի միջահասակ, ջահել կին եւ բահը թափով մտցրեց գոմաղբի մեջ:

«Թանկ է, եւ, ասում են, էլի է թանկանալու: Գյուղացին, որ վարուցանք չի կարողանում անել, աշխատանք էլ չկա, ո՞նց է վճարելու գազի գինը»:

Նախնական խուճապ է, մտածեցինք, կանցնի: Փորձում ենք հասկանալ. ո՞նց կարող է վաղատուրցին չուրախանալ, որ գազը մտնում է իր կենցաղ, եւ այդպիսով շատ հարցեր են լուծվում: Մինչեւ ե՞րբ նա կարող է ձմռանը փայտով կամ աթարով տաքանալ, մանավանդ որ փայտով գյուղն այնքան էլ հարուստ չէ, իսկ դրսից թանկ գնով վառելափայտ բերելը ոչ բոլորին է ձեռնտու: Հապա, տարվա մյուս եղանակներին էլ՝ գազի բալոններ տանել-բերելը… Միեւնույն է, գյուղացին չի ոգեւորվել, տեսնում ենք, եւ դա մտորելու տեղիք է տալիս:

ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Գյուղ մտնող ճանապարհի ձախ սարափեշին եկեղեցին էր՝ տխուր, մագաղաթե գույնի, թեք ընկած հնամենի դռնով, անխնամ: Պինդ, ամուր կառույց է, դիմացել է դարերին, բայց նրա քարերն էլ աղաղակում են, որ ինքը մոռացության է մատնված: Ասես նրանից երես է թեքել ողջ աշխարհը: Ինչո՞ւ այդ գյուղի խոշոր եկեղեցին այդպես անտեսված է Սյունյաց թեմի եւ գյուղապետարանի կողմից: Մի՞թե մի հայրենասեր-հավատավոր վաղատուրցի էլ չկա, որ գոնե հին, շարքից դուրս եկած դուռը փոխարինի մի կարգին, ծածկվող դռնով. թե չէ ասուն-անասունի համար հավասարաչափ ելումուտն ազատ է: Վերջին անգամ, ըստ Ղեւոնդ Ալիշանի, Վաղատուրի երկու եկեղեցին վերաշինվել է 17-րդ դարում: Ներս ենք մտնում. ասես հազարամյա դամբարան լինի՝ խոնավ-անհյուրընկալ: Քարամեջք հողե հատակին շաղ տված վառված լուցկու հատիկներ են, կրակից-մրից սեւապատ զույգ որմերում՝ սրբի այրված նկարներ, թղթեր, վառված մոմերից՝ համատարած սեւ հետքեր: Պարզ երեւում է, որ մարդիկ, այնուամենայնիվ, գալիս-աղոթում են: Իսկ ես ականատեսների պատմելով գիտեմ, որ ժամանակին այդ եկեղեցում է ապրել գյուղի քահանան՝ Միքայել Մինասյանը, ժամերգություն եւ կնունք կատարել, պահել ու պահպանել իր հոտը, միաժամանակ եղել գյուղի առաջին ուսուցիչը: Անգամ գիտեմ, թե ինչպես են 30-ականներին կարմիր ձիավորները գյուղամիջով քշել-տարել եւ կորցրել ողբացող ծեր քահանային, եւ վերջին կտոր բոքոն հացը տատս է թաքուն փեշից հանել տվել՝ հետն աղի արցունք թափելով: Մինչեւ կյանքի վերջին օրերը հայրս նրա մասին հիշում էր՝ երեխայի պես արտասվելով, մինչեւ հոգուս խորքը հուզելով նաեւ ինձ: Բայց հիմա, փառք Աստծո, ժամանակներն այլ են. քրիստոնեական հավատքն ազատ է, չկա ոչ մի արգելք՝ այն բացահայտ դավանելու, եկեղեցին աչքի լույսի պես պահելու-վերածնելու համար: Չէ՞ որ ավելի վատ օրերում եւ ավելի անմխիթար ժամանակներում է այս եկեղեցին գործել, անգամ զոհաբերել իր քահանային: Իսկ ի՞նչ է այսօր զոհաբերում հասարակ վաղատուրցին կամ նրա համայնքային իշխանությունը՝ ի սեր եւ ի խնկարկումն իր եկեղեցու. ոչի՜նչ, նույնիսկ շրջակայքի մաքրությունն ու մի կարգին դուռ վերանորոգելն էլ արժանի չեն համարում իրենց Աստծո տանը: Ինչեւէ, այս հարցն էլ մնաց անպատասխան: Եկեղեցու շուրջը եւ նրա փեշերին փռված գոմաղբի բլուրներն ու տափարակները շրջանցելով՝ ցած էին վազում մի քանի փոքրիկ տղա: Կանչեցինք. ամոթխած սլացան: Հետաքրքիր էր. այդ փոքրիկ տղաները գիտե՞ն, որ աշխարհում կան գեղեցիկ, վեհատեսիլ եւ խնկաբույր-առինքնող եկեղեցիներ…

Ի դեպ՝ նույն (միգուցեեւ ավելի) անմխիթար վիճակում է գյուղի հարավային թաղամասի եկեղեցին:

ԵՎ ՀԱՋՈՐԴ ԿԱՆԳԱՌԸ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՆ ԷՐ

Շենքը դարձյալ խղճուկ, աննորոգ վիճակում էր՝ խորհրդային ժամանակներից մնացած միակ ճակատպարզող ցուցատախտակով. «Կարգապահությունը, կարգ ու կանոնը….»: Տխուր էր, անչափ ողբալի, հատկապես առաջին հարկի անդուռ, անպատուհան նախասրահը, ակումբ-դահլիճը, ինչպես հասկացանք, ողջ շենքն ու նրա պարունակությունը:

Քանի որ, ասացինք, Վաղատուրի գյուղապետ Հովհաննես Հովհաննիսյանը եւ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Բաբաջանյանը Գորիսում էին, մենք հանդիպեցինք համայնքի ավագանու անդամ Մասիս Մկրտչյանին եւ գյուղապետարանի հաշվապահ Գարուն Հովսեփյանին: Նրանց հետ ունեցած զրույցից էլ ավելի ամրապնդվեց մեր համոզմունքը, որ գյուղն օրեցօր անկումներ է արձանագրում եւ անհապաղ օգնության կարիք ունի: Բոլոր գյուղերի պես Վաղատուրի համայնքն էլ վաղուց դուրս է եկել իր բնականոն հունից եւ ամեն օր փորձում է հաղթահարել մի նոր փորձություն եւ խնդիր: Նրա համար էլ դժվար էր համայնավար վիճակից միանգամից անցնել նոր կացութաձեւի:

Գյուղն ունի 450հա վարելահող, 550հա արոտավայր, 15հա այգի: Սկսվել են գարնան գյուղատնտեսական աշխատանքները: Սակայն գյուղացին տխուր է. ինչո՞ւ: Թաքցնելու բան չկա. արդեն տարիներ են, ինչ գյուղում վարելահողերը չեն օգտագործվում (ինչպես վերեւում նշեցինք): Գյուղացին ցանկանում է, բայց ի վիճակի չէ. այստեղից էլ՝ նրա տխրությունը: Անցած տարի մեկ-երկու հոգի երկու հա վարուցանք կատարեցին. նախ՝ կարգին բերք չեղավ, եղածն էլ փչացավ կոմբայն չլինելու պատճառով: Ամբողջ հողատարածքը, կարելի է ասել, օգտագործվում է որպես խոտհարք:

Այսօր վաղատուրցին հազիվ կարողանում է մշակել իր տնամերձը, որը 1200 մետր է:

Գյուղն ունի 935 գլուխ խոշոր եւ 1112 գլուխ մանր եղջերավոր անասուն: Կա նաեւ 332 մեղվաընտանիք:

Վաղատուրցու համար իր արտադրած գյուղմթերքի իրացումը մեծ խնդիր է: Չկա համակարգված կամ կազմակերպված վիճակ: Կաթը շատ չնչին գումարով Վերիշենի պանրագործներն են գնում: Կարտոֆիլը, վարունգը, պոմիդորը եւ այլն գյուղացին իրացնելու հնարավորություն չունի: Այստեղից էլ՝ նրա դժգոհությունը. ինչո՞ւ շատ արտադրեմ: Մինչդեռ Վաղատուրում հիշյալ բնամթերքը հիանալի աճում է, եւ միայն բանջարեղենի իրացումը ճիշտ կազմակերպելու դեպքում վաղատուրցին կարող է զարգացնել իր տնտեսությունը:

Գյուղն ունի մեկ տրակտոր, բայց միայն դրանով վարուցանք չես անի: Ինչ վերաբերում է «մատչելի» գներով դիզվառելիքի տրամադրմանը, ապա գյուղացին դա էլ է համարում իր գրպանի համար անմատչելի (1 լիտրը՝ 350 դրամ) եւ շատ հաճախ՝ հրաժարվում:

Գյուղի այսօրվա պատկերն այնպիսին է, ինչպիսին հիմնականում բոլոր գյուղերինն է:

Աշխատակազմի ղեկավար Անահիտ Բաբաջանյանը հեռախոսազրույցում, հակառակ հնչած կարծիքների, ողջունում եւ բարի գործ է համարում գյուղի գազիֆիկացումը,

Շարունակությունը՝ էջ 8

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ● 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ ● № 8 (281)

Սա, իրոք, արդեն «SOS» է, փագնապալի իրավիճակ

Վաղատուրը մեռնում է, բայց Վաղատուրը պետք է ապրի

ՄԱՐՋԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Սկիզբը՝ էջ 7

ասում, որ փաստով տխրողների կողքին շատ-շատ ուրախացողներ կան: Ինչ խոսք, երեւույթն ինքնին ուրախալի է, բայց գյուղացին լիարժեք պատկերացնում է, որ աղքատ տնտեսության կողքին մի խնդիր էլ է ավելանում: Աշխատակազմի քարտուղարը, միաժամանակ, գյուղապետարանի առաջիկա քառամյա ծրագրերի մասին պարզաբանումներ է անում՝ հուսալով, որ դրանք չեն մնա թղթի վրա:

ԵՐԲԵՄՆԻ ԾԱՂԿՈՒՆ...

Գյուղը հայտնվել է ծայրահեղ ծանր վիճակում: Գյուղապետարանի աշխատակիցները փորձում են սփոփվել այն լավով, որ բարի կամեցողությամբ գյուղի համար կատարել են ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը. արարողությունների սրահի վերանորոգում, «Ուրալ» մեքենայի եւ տրակտորի հատկացում: Լավ է, թող սփոփվեն, ունեցած քիչն էլ պետք է կարողանալ գնահատել: Բայց փաստը մնում է այն, որ գյուղն այսօր հոգեվարք է ապրում, գյուղը մեռնում է բոլորիս աչքի առջեւ, եւ նրան փրկելու բոլոր ելքերը տանում են փակուղի: Ինչպես ահա գյուղամիջի ճանապարհները, որ խճճվում-կորչում են իրար գլխի դիզված քարերի, հողաթմբերի ու գոմաղբի մեջ: Մենք գյուղամիջում երկար փնտրեցինք սարսափ-լաբիրինթոսի մեջ թաքնված, մայրուղի տանող ճանապարհը, որ անվերջ ծուղակվում, վերջանում էր ահռելի փոսերով, տասնամյակների սելավներից եւ մարդկային անտարբերությունից գոյացած փլվածքներով ու աղբակույտերով: Այն տպավորությունն էր, ասես, որ հինգ որպե առաջ, Աստված մի արասցե, Վաղատուրում երկրաշարժ է եղել, եւ փողոցները վերուվար տեղահան էին եղել:

Մասիս Մկրտչյանը մեր հարցից հուսահատ շվարում է. «Ինչ՞ անենք, միջոցներ են պետք ե՛ւ գյուղի փողոցները վերանորոգելու, ե՛ւ վարելահողերը մշակելու, ե՛ւ արտադաղթը կասեցնելու համար»:

Լիովին համաձայն եմ, բայց, խոստովանենք, գյուղն առաջին հերթին իր բնակչի սրտացավությամբ է գյուղ: Գյուղի գոյությունը պայմանավորված է իր խմելու եւ ոռոգման ջրով: Իսկ ի՞նչ եք դուք անում ջրի հետ. դուք սպանում եք ջուրը, իսկ առանց նրա անիմաստ է խոսել գյուղի կյանքի մասին: Նույնը եւ գյուղի փողոցները. դարձյալ միջոցներն եք պատճառաբանում: Համաձայն եմ, բայց գիտե՞ք, միջոցներն ում են տրամադրում. իր հայրենի բնակավայրի մաքրությամբ շահագրգիռ, հոգատար-ջանացող մարդուն: Համայնքի ղեկավարը, վաղատուրցին թող իրենց բաժին ջերմությունը նվիրաբերեն գյուղին եւ ապա բացճակատ բախեն իշխանական դռներ, պահանջեն, ամոթահար անեն իրենց ապրելու իրավունքով, իրենց հայրենասիրական կեցվածքով: Մինչդեռ, ի՞նչ է ստացվում. իշխանությունները տեսնում են՝ դուք լա՜վ էլ գտել եք կոյուղագծերի ելքը՝ բացել գետի մեջ, դուք լա՜վ էլ հարմարվել եք ձեր ավերակ փողոցներին, ավելին, դրանք լրացուցիչ «զարդարում» եք աղբաբլուրներով, դուք լա՜վ էլ ապրում եք չորացած այգիների, գոմաղբի մեջ տնքացող դարեղեն եկեղեցու, 450հա ձեզանից խռով վարելահողերի հարեւանությամբ: Եվ այդ ամենը կարողանում եք բացատրել մեկ բառով՝ միջոցներ չկան: Մի պահ մոռանում եք, որ միջոցն ամենեւին էլ կապ չունի գյուղի հանդեպ սիրո, կամեցողության հետ: Ուղղակի պետք է սկսել եղածն աչքի լույսի պես պահելով ու պահպանելով, եղածի վրա ունեցած քիչն ավելացնելով:

Իսկ խմելու ջո՞ւրը: Ինչո՞ւ եք տարիներ շարունակ այնքա՜ն սիրով հարմարվում ձեր խմած անմաքուր, ամռանն առավելապես՝ լեպի զանգվածով ջրի հետ: Ինչո՞ւ չեք ընդդիմանում: Մի՞թե համայնքի ղեկավարը նույն ջուրը չի խմում, կամ ցույց տվեք, խնդրեմ, գյուղում ջրամբարի կառուցման կիսատ մնացած աշխատանքների նախագծերը: Դա էլ ոռոգման ջրի պես, գիտենք, համայնքին է պատկանում, եւ ողջ գյուղն է նրա պատասխանատուն: Վաղատուրցին քանի՞ տարի եւս պետք է խմելու ջրի ծորակը բացի, եւ երկարուկ, անհանգիստ աչքերով մողեսը կամ տզրուկը հայտնվեն նրա բաժակում: Մի՞թե սա կարելի է համարել ապրել: Մի այլ պարագայում կարող ենք խոսել հայի հնամենի քաղաքակրթության, եվրոպական բարեկրթության մասին:

- Միջոցներ չկան:

Նորից իմ զրուցակիցների խոսքն է: Պարո՛ն Մասիս Մկրտչյան (եւ այդկերպ մտածողներ), խնդրում եմ, տաբու դրեք ձեր այդ «արդարացնող» խոսքի վրա, ուղղակի որոշեք՝ ինչ՞ անել: Օրինակ՝ դուք չասացիք կամ գուցե իմաստ չտեսաք ասելու, բայց ես հասցրել եմ գյուղապետարանի աշխատակազմի ղեկավարից ճշտել, որ գյուղի ջրամբարի եւ կոյուղու ներքին ցանցի կառուցման եւ անցկացման նախագծերն այս տարի մտցվել են գյուղապետարանի ընդունված քառամյա ծրագրի մեջ: Ինչպես նաեւ՝ գյուղի փողոցների վերանորոգումը: Սա լուսավոր նոտա է այս ամենի մեջ, բայց ո՞վ կարող է ասել, թե դեռ ինչքան է ձգվելու տանջարան-թունելը, կամ այս էլ որերորդ անգամ են քառամյա ծրագրեր կազմվում...

Մի ողջ օր՝ ստուգայց-դիտարկումներից հետո, լիովին համոզվում ենք. գյուղն այլեւս չի կարող փրկել գյուղի իշխանությունը... Ծայրահեղ անօգնական եւ հիվանդ գյուղին միասնական օգնություն է պետք, եւ որքան էլ տարօրինակ հնչի՝ համամարզային, համապետական մասշտաբի օգնություն: Առանց սենտիմենտալ չափազանցության՝ Վաղատուր գյուղը կանգնած է մեռնելու շեմին, եւ այն պետք է փրկել՝ ոչ մի միջոցի առջեւ կանգ չառնելով:

ԲԱՅՑ ՎԱՂԱՏՈՒՐԸ ՊԵՏՔ Է ԱՊՐԻ

Գյուղապետարանից դուրս գալիս երկու երիտասարդի (18-20 տարեկան) հանդիպեցինք: Ուրախացանք. կյանքի նշույլ կա գյուղում: Անմիջապես էլ տխրեցինք՝ իմանալով նրանց գյուղապետարան գալու նպատակը. տղաները մեր «Նիվան» շփոթել էին գազագործների «Նիվայի» հետ, եկել էին օրավարձու աշխատանք խնդրելու... Երեւի ողջ կյանքում այդքան ափսոսած չլինեի մասնագիտության ընտրության հարցում, եւ երանի մեր լրագրողական խումբն այդ պահին, իրոք, կարողանար օգնել տղաներին: Բայց երեւույթը, որ երիտասարդ տղաներն ուզում են աշխատել գյուղում, մեզ, միեւնույն է, ուրախացրեց. փնտրելորոնելն արդեն շատ բան էր նշանակում...

Գյուղի փողոցներում մարդ արարածի շունչ չկար. չնայած կեսօր էր: Ծանր լռություն էր տիրում քարուքանդ փողոցներում: Գնդակով խաղացող ոչ մի երեխա կամ պարանով ցատկոտող աղջնակ: Անգամ տարեցների, զառամյալ ծերերի նշույլ չերեւաց. գոնե դուրս գային արեւկողի, բարեւ-բարլուսի: Հիշեցի 98-ամյա պապիս, ով մինչեւ ուշ երեկո նստում էր իր տան շեմին, հարյուրավոր բարեւ-բարլուսեր տալիս-առնում՝ աչքը չկտրելով մայրուղուց, որտեղից պետք է օրական երկու անգամ Գորիսից ավտոբուսը գար... Դա նրա կյանքի, նրա օրվա՝ դրսի աշխարհի հետ կապող ամենամեծ տոնն էր:

Այսօր այդ մի հատիկ «տոնից» էլ է զրկված վաղատուրցին. քաղաքի հետ կապող ոչ մի թել: Ծերերն էլ ինչո՞ւ դուրս գան բակ, էլ ինչո՞ւ նայեն կյանքի, աշխարհի հետ կապող միակ թելին՝ մայրուղուն:

...Իսկ երբ «մարտնչում» էինք գյուղի փողոցների փակուղաշատ լաբիրինթոսում՝ մեքենայով անընդհատ քարեր-սարեր բարձրանալով շրջադարձեր անում, դարձյալ հիշեցի վաղատուրցի Քաջիկի երազի պես հուշը՝ 60-ականների գյուղի երբեմնի բարեկարգ փողոցների լուսավորության, աշխատասեր, լավ մարդկանց (օրինակ՝ Մոհրաբյանի) եւ էլի շատ ու շատ գեղեցիկ երեւույթների մասին...

Եվ ավելի է ամրապնդվում համոզմունքս, որ Վաղատուրը, լինելով շրջանի ամենակայացած գյուղերից մեկը, վերջին տարիներին ոչ միայն մեծ քայլերով տնտեսական, բարոյական, ֆիզիկական հետընթաց է ապրել, այլեւ ուղղակի գահավիժել է անդունդ, եւ միայն պետական, միասնական միջոցառումները, թերեւս, կարողանան փրկել գյուղը:

Սա, իրոք, արդեն «sos» է, տագնապալի իրավիճակ:

Եվ «sos» այն գյուղում, որտեղ դարեր շարունակ մեր պապերն ու տատերը ծով համբերությամբ հող են մշակել, տներ կառուցել, այգիներ հիմնել, զավակներ ծնել-դաստիարակել ու կրթել, թշնամուն դիմագրավել, մի ողջ պատմամշակութային արժեհամակարգ, ավանդույթ-նկարագիր ստեղծել, անառիկ պահել, շենացրել Սյունյաց հյուսիս-արեւելյան սահմանը:

Անգամ մի մարդու մահով շատ բան է պակասում աշխարհից, ո՜ւր մնաց, Աստված մի արասցե, մի ողջ համայնքի շքեղ գույների ու պատմության... խամրումն ու մոռացությունը:

...Քանի դեռ գյուղում մեկ մանկական լվացք է փռված, քանի դեռ մեկ աշակերտ է հաճախում առաջին դասարան, քանի դեռ շրջանավարտ է տալիս դպրոցը, եւ մեկ հարս է հղիանում, միանշանակ, գյուղը պետք է ապրի, գյուղը պետք է պայքարի ապրելու համար, եւ նրա ապրելու առաջին երաշխիքը համայնքի իշխանության կամեցողությունը պետք է լինի...

21 մարտի 2013թ.

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի պարոն Գասպարյան

Երկար մտորելուց հետո ճիշտ համարեցի գյուղաշխարհի մարդկանց ու դպրոցի մասին խոհերս հայտնել նամակի տեսքով, ինչն ավելի անմիջական ու անկաշկանդ կլինի: Սյունյաց աշխարհի պատմական մի գյուղի ծնունդ եմ եւ հպարտանում եմ, որ համագյուղացին եմ 17-րդ դարի Ամենայն հայոց կաթողիկոս Մովսես Խոտանանցու (Տաթեւացու): 1968-ին ավարտել եմ (ցավոք, այժմ դռները գոց) 110-ամյակը բոլորած Շրվենանցի միջնակարգ դպրոցը եւ վերջին մոհիկան մեդալակիրն եմ: Ստանալով բարձրագույն կրթություն՝ հնարավորություն ունեի ապրել, աշխատել քաղաքում, սակայն գյուղն իր ավանդական գրավչությամբ, մարդկանց պարզ ու ջերմ հոգեբանությամբ ինձ պահեց:

1970-1980-ականների գյուղական դպրոցը քիչ էր տարբերվում քաղաքայինից, սովորողների թիվը մի քանի տասնյակի էր հասնում, դպրոցական կյանքը բազմաբովանդակ էր: Այդ ժամանակ գյուղական բնակարանաշինությունը թափ էր առել, շատ հովեկներ տներ էին կառուցում, մի մասն էլ հիմնական տեղափոխվում էր գյուղ, գյուղում կար մանկապարտեզ, գործում էր մշակույթի տունը, բացվել էր արտադրական մասնաճյուղ, գյուղն իր դիմագիծն էր կերտում: Հայոց աշխարհը նոր ցնցում ապրեց 1990-ականներին: Ժամանակի հետ ջուր մաղվեց գյուղացու գլխին, այդ ջուրը դարձավ հեղեղ՝ սրբելով-տանելով ե՛ւ դպրոց, ե՛ւ գյուղաբնակ:

Համայնքային հողատարածքները մաս-մաս բզկտեցին, ձեւեցին, վերաձեւեցին եւ «սեփականաշնորհում» անվամբ ինչ-որ չհասկացած ժամանակով «ուրախացրին» գյուղացուն, իսկ երբ կաշվից դուրս եկած գյուղացին քրտինքի դիմաց չստացավ արդյունք՝ հոգնեց եւ իրենից, եւ հողից, իսկ ավելի «հնարամիտները» բռնեցին արտագաղթի ճամփան: Նորաշեն տներից էլ կախվեցին ծանր կողպեքներ, որոնք տարեցտարի ժանգոտ քրքիջով հետեւում են հոգեվարք ապրող գյուղի վախճանին: Քաոսային այս բարեփոխումներն առաջինը խարխլեցին գյուղական դպրոցի հիմքը, տանիքն էլ օդային հոսանքի ճոճքից մի օր կնստի գետնին:

Հեռուստահաղորդումներով ծանոթանում ենք այլ շեն շրջանների բազմամարդ գյուղերի դպրոցների առօրյային, բարգավաճմանը, իրոք բարեփոխումների շնորհիվ ձեռք բերած կրթադաստիարակչական աշխատանքների հաջողությանը, իսկ ի՞նչ անուն տալ հատկապես Կապանի տարածաշրջանի գյուղական դպրոցների, գյուղերի կարգավիճակին: Ամեն տարի ոչ թե գուժում, այլ սովորական լրատվական թողարկում են տալիս, որ փակվել է այսինչ գյուղական դպրոցը եւ վերջ: Եթե խորհրդային տարիներին մեր հոգեւոր տաճարները՝ եկեղեցիներն ու վանքերն էին փակել եւ վերածել ամեն ինչի, այժմ էլ փակվող դպրոցները վերածվում են կամ խոտանոցի, կամ էլ շինանյութի՝ ասես անասնագոմ են քանդում...

Հայկական գյուղը հայտնի է իր լավաշաբույր թոնիրներով, սարերի շնկշնկան լանջերին փռված ոչխարների հոտերով, գառերի մայունով, ոսկեծուփ արտերով, իսկ ա՞յժմ, գյուղում փակվեցին թոնիրները, ոչխարը՝ որպես գլխացավանք, վերացվեց, ցորենի արտատեղերը վերածվեցին տատասկածեփ տարածքների՝ մատների վրա հաշվվող նախիրով: Մի քանի տարի է որոշ գյուղերում այլեւս ցորեն չեն ցանում, ալյուրը հայթայթում են խանութներից: Դպրոցում երեխան ուսումնասիրում է Դաշտենցի, Վարուժանի՝ արտին, հասկին վերաբերող դասանյութ, հայ երեխան չգիտի հասկը, քիստը, հարդը որն է. դե, արտի նկարն էլ գրքում է տեսնում: Գյուղաբնակն էլ փոխել է կենցաղը. սպասում է, որ շրջկենտրոնից ուր որ է «էլեկտրականացած» եւ հաշվարկված հաց կառաքեն, իսկ հյուրի այցը որքան ցանկալի, նույնքան վտանգավոր է:

Տարիներ ի վեր փակ են ակումբ-գրադարանների դռները, մշակութային կյանքը հոգնած գյուղաբնակի համար դարձավ հեռավոր օրերի հուշ: Գյուղում առիթից առիթ են գգեստապահարանից հանում նոր հագուստը, եւ դա էլ, ցավոք, հանգուցյալի հուղարկավորությանը մասնակցելու համար:

Գուցե այս գյուղանկարն ավելորդություն լինի, սակայն մեծ ու փոքր իրողություններն իրենց կնիքն են դնում դպրոցի վրա, դպրոցի երեխան միջավայրի ամեն մի լավ, վատ կողմ իր կաշվի վրա է զգում: 1970-ականներին, խորհրդային տնտեսությունների ժամանակ, պատահում էր, որ դպրոցականներին տանում էին օգնելու ծխախոտի, բանջարաբոստանային բարիքների բերքահավաքին: Եվ աշակերտները, եւ ուսուցիչներն ինչպիսի խանդավառությամբ էին մասնակցում աշխատանքներին, անգամ հոգնած՝ չէին կորցնում կատակի զգացումը: Իսկ այժմ սեփական հողում ծուլանում են աշխատել, փախչում-գնում են հարազատ գյուղից, օջախից եւ բախտ որոնում օտար երկրներում: Մի անգամ մեր մոհիկան պապերից մեկը ցավով ասաց. «է, գյուղ չմնաց, գյուղի համն էլ կորավ...»:

1990-ականներին, երբ թուրք-սպառնալիքը նորից կախվեց հայոց աշխարհի վրա, Սյունիքը նույնպես դարձավ թիրախ: Երբ ազերիները մաքրվում էին Սյունյաց աշխարհից, դպրոցն անմասն չմնաց այդ պայքարից: Վեց ամիս դպրոցում հանգրվանեց ռուսական հատուկ դեսանտայինների ջոկատը՝ զինված ինքնաձիգներով, վահաններով, դպրոցը վերածվել էր զինվորական շտաբի:

Վերահսկում էին հայ-ադրբեջանական դրացի գյուղերի խաղաղությունը, որպեսզի կանխեին բռնկվող ընդհարումները: Երեխաներն ականատես եղան ազերիների կողմից հայ հովվի խոշտանգմանը, լսեցին Կապանն ու մերձակայքը ռմբակոծող ինքնաթիռի մահազդու ոռնոցը: Օգնում էին գյուղում եւ սահմանամերձ հատվածում հերթապահողներին: Գյուղի երիտասարդների թիվը երեք տասնյակի էր հասնում:

Խոտանան գյուղը եղել է Դավիթ-բեկյան խոշոր ճակատամարտի վայր:

Գյուղի դիմաց գտնվող «Հրցոտ» բլրալանջին թուրքի հետ դաժան ճակատամարտում վիրավորվել, կիսակտրված պարանոցով մաքառել, բայց թուրքին չի հանձնվել Բալի զորավարը, խոտանանցիներն էլ «գժի նման կռվել են» զորքի դեմ:

Դպրոցում ստեղծել եմ ռազմահայրենասիրական թանգարան, զբաղվել եմ գրական-ստեղծագործական, բանահավաքչական աշխատանքներով, կապ հաստատել Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի բարբառագիտական բաժնի հետ, մասնակցել բարբառագիտական ատլասի կազմման աշխատանքներին, գրառել եմ գյուղի պատմությունը, ցանկացել եմ պատմական մասունքները փրկել մոռացությունից: Այս է ինձ պահել, իմաստավորել գյուղում մնալս: Մտավախություն ունեմ, որ մի երկու տարի հետո դպրոցի դռները կփակվեն (այժմ սովորում է

Քաղաքապետի աթոռը փրկելու համար նոր զոհեր են պահանջվում

ՍԻՍԻԱՆ

Սկիզբը՝ էջ 1

նյայի վկայությամբ՝ հիմա քաղաքապետարանում ինտենսիվորեն փնտրում են նոր զոհերի թեկնածուներ՝ արձանագրված խախտումների պատասխանատվությունը նրանց վրա բարդելու համար, այլապես մեղավորի դերում կհայտնվի Սիսիանի քաղաքապետը:

Սիսիանի քաղաքապետարանը վերջին մեկ-երկու տարում մի քանի անգամ արդեն հայտնվել է նման իրավիճակում եւ կարողացել է իր աշխատակիցների շարքերից քավության նոխազներ գտնել ու քշել «կառափնարան»՝ իրական մեղավորներին հեռու պահելով պատասխանատվությունից: Առաջին քավության նոխազը նախկին փոխքաղաքապետ Աշոտ Գրիգորյանն էր, ով պատասխանատվության ենթարկվեց ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով: Այդ գործին անդրադարձել ենք «Սյունյաց երկրի» 2012թ. հոկտեմբերի 20-ի համարում, եւ հիմա հարկ չկա վերապատմել տեղի ունեցածը: Թե ինչու Աշոտ Գրիգորյանը հաճույքով ստանձնեց քավության նոխազի դերը՝ դա խոսակցության այլ եւ շատ հետաքրքիր թեմա է: Հիշեցնենք միայն, որ այդ գործում բազմաթիվ հարցեր մնացել էին անպատասխան: Ավելի ուշ Աշոտ Գրիգորյանն ազատվեց փոխքաղաքապետի պարտականություններից:

Մեկ այլ գործով փորձեցին մեղավոր նշանակել Համիկ Ստեփանյանին՝ Սիսիանի քաղաքապետարանի եկամուտների հավաքման բաժնի պետին, բայց այդ օպերացիան այնքան հիմարաբար էր կառուցվել, որ ձախողվեց երկրի դատական բոլոր ատյաններում: Համիկ Ստեփանյանի գործում էլ բազմաթիվ հարցեր մնացին անպատասխան (տես՝ «Սյունյաց երկիր» 20 հոկտեմբերի 2012թ.):

Կկարողանա՞ քաղաքապետարանն այս անգամ էլ քավության նոխազներ գտնել ու կատարվածի պատասխանատվությունը դնել նրանց վրա (հիմա արդեն շրջանառվում է երկու անուն): Հարցի պատասխանը, անշուշտ, կիմանանք ժամանակի ընթացքում:

ՀԱՄԼԵՏ ԲԱԲԱՅԱՆ

ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Այդ ամենին զուգահեռ Սիսիանում փորձում են հասկանալ, թե ինչ է կատարվում քաղաքապետարանում եւ քաղաքապետարանի շուրջ: Ոմանք գտնում են, որ Հայաստանի տեղական ինքնակառավարման ոչ մի մարմին չորս-հինգ տարում այդքան անգամ չի հայտնվել ֆինանսական խախտումների հորձանուտում, որքան Սիսիանի քաղաքապետարանը: Այդ մարդիկ կարծում են, որ Սիսիանի քաղաքապետարանում ստեղծված վիճակը պետք է համակողմանիորեն ուսումնասիրվի եւ պատշաճ գնահատական ստանա: Մարդկանց մի խումբ էլ կարծում է, որ սկսված օպերացիան Աղասի Հակոբջանյանին երիցս ընծայաբերված իշխանությունը հետ վերցնելու նպատակ ունի, այլապես 30 համայնքի ստուգումների արդյունքից միայն Սիսիանի քաղաքապետարանի գործը չէր ուղարկվի դատախազություն: Ըստ ՀՀԿ-ի պատասխանատուների՝ Աղասի Հակոբջանյանը 2013թ. փետրվարի 18-ին չկարողացավ ապացուցել, որ ինքը Սիսիանում որոշիչ կշիռ ունի: Եվ հիմա հարց է դրված՝ արժե՞ր ԲՀԿ-ական Աղասի Հակոբջանյանին նվիրաբերել Սիսիանի քաղաքապետի աթոռը, այն էլ՝ սիսիանյան երեւելի ՀՀԿ-ականներին վարկաբեկելու եւ ծաղրելու գնով:

Թե վերոգրյալ վարկածներից որն է հավաստի՝ իրադարձությունների հետագա ընթացքը ցույց կտա: Բայց շատ տարօրինակ է, որ Աղասի Հակոբջանյանը մինչեւ այսօր Սիսիանի հանրությանն այդպես էլ բացատրություն չի տալիս, թե ինչու եւ ինչ հանգամանքների արդյունքում քրեական մեղադրանքներ ներկայացվեցին իր տեղակալ Աշոտ Գրիգորյանին, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Վաչագան Միրաբյանին, քաղաքապետարանի բաժնի պետ Համիկ Ստեփանյանին… Աղասի Հակոբջանյանը պատասխան չտվեց հարցին, թե ինչու միեւնույն հոդվածով մեղադրված Աշոտ Գրիգորյանին աշխատանքից ազատում է, իսկ աշխատակազմի ղեկավարին՝ ոչ: Աղասի Հակոբջանյանը պատասխան չտվեց նաեւ պարզագույն հարցին՝ այդ ինչպե՞ս է ստացվում, որ իր ղեկավարած ոչ այնքան մեծ հիմնարկում պարբերաբար խախտումներ են արձանագրվում (ֆինանսական բնույթի), իսկ ինքը (որպես կանոն) տեղյակ չի լինում: Եվ այդ ամենից հետո՝ կրկին ֆինանսական խախտումներ…

Հ.Գ. - 1

Պարզվում է սակայն, որ Սիսիանի քաղաքապետն այս օրերին փորձում է ռեաբիլիտացիայի ենթարկվել վերադաս իշխանությունների աչքում՝ պատժելով անգամ իր երդվյալ թիմակիցներին, ովքեր 2013թ. փետրվարի 18-ին ջանասիրաբար չաշխատեցին ՀՀԿ-ի թեկնածուի օգտին: Հենց նման գործելակերպի զոհ է իրեն համարում Սիսիանի Համո Սահյանի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն (2004 թվականից), հանրահայտ «Սյունիք» պարային համույթի հիմնադիր եւ ղեկավար (1979 թվականից) Համլետ Բաբայանը՝ Սոկոլ մականունով (ի դեպ, համույթը, ինչպես եւ քաղաքապետարանի մշակույթի բաժինը, լուծարվեցին ներկա քաղաքապետի պաշտոնավարման օրերում): Համլետ Բաբայանն Աղասի Հակոբջանյանի թիմի ակտիվ անդամներից է, ԲՀԿ-ի բազմաթիվ միջոցառումների մասնակիցը (թեեւ անկուսակցական է): Ապրիլի 3-ին մեզ հետ ունեցած հեռախոսազրույցում նա պատմեց իրեն աշխատանքից ազատելու հանգամանքները. «Ազատման հրամանը տալուց առաջ մի քանի սուտ, հնարովի մեղքեր բարդեցին ինձ վրա: Իբր իմ ղեկավարած մշակույթի կենտրոնում «բաքսիները» դիտավորյալ փչացրել եմ (դա իսկական զառանցանք է, ինչպես կարող եմ տարիներ շարունակ իմ փայփայած օջախում նման բան անել, թող իրենց արշինով ինձ չչափեն), իբր մշակույթի կենտրոնում հարբեցողությամբ են մարդիկ զբաղվում, ինչը նույնպես անբարո սուտ է: Եվ այդպիսի ստեր տարածելուց հետո ծեւակերպվեց իմ ազատման հրամանը: Ես չեմ պատրաստվում բողոքարկել նրա հրամանը, պատրաստվում եմ տեղափոխվել Հայաստանից: Բայց Աղասի Հակոբջանյանը թող խաղեր չտա, ինքը բոլորից լավ գիտի, թե ինչու է ՀՀԿ-ն Սիսիանում վերջին շրջանում դժվարությունների հանդիպում»:

Հ.Գ. – 2

Պարզվում է նաեւ, որ Սիսիանի Համո Սահյանի անվան մշակույթի կենտրոնում է տեղաբաշխված եղել ՀՀ նախագահի ընտրության N37/13 տեղամասային կենտրոնը, որտեղ հաղթել է Ռաֆֆի Հովհաննիսյանը: Հիմա փորձում են որեւէ մեկին այդ ամենի համար մեղավոր նշանակել: Տարածքի ենթաշտաբի պետին, ըստ էության, չեն կարող մեղավոր նշանակել, քանի որ նա բարձր պաշտոնյա է եւ 2012թ. մայիսի 6-ին նույնպես Սիսիանում հաջողությամբ տապալել է ՀՀԿ-ից Աժ պատգամավորի թեկնածուի հաղթանակը: Այնպես որ եթե իրերը կոչվեն իրենց անուններով, ապա այդ պաշտոնյան միգուցեեւ պատասխանատվության ենթարկվի: Ուստիեւ՝ որոշել են խարազանն իջեցնել Համլետ Բաբայանի (Սոկոլի) մեջքին, ով մեղավոր նշանակվելու համար հարմար թեկնածու է՝ եւ այդ տեղամասն ընդգրկող տարածքի բնակիչ է ու հեղինակություն, եւ տեղամասային կենտրոնի գտնվելու վայրի (հիմնարկի) տնօրենն է: Եվ եթե ամեն ինչ իրոք այդպես է, ապա տեղի ունեցողը, ինչպես նախագահ Սերժ Սարգսյանն է քանիցս ասել, սովորական արջի ծառայություն է:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

---

18 աշակերտ):

Մայրաքաղաքից գալիս դասընթացներ են կազմակերպում, հանդիպում տնօրենի ու մանկավարժների հետ, մի քանի ժամով «լուծում» լճացած հարցերն ու հեռանում: Ցավոք, գյուղական սակավաշակերտ դպրոցները մնում են ուշադրությունից դուրս: Ասենք, ինչպես դասացուցակ կազմվի 0.25 դրույքով վարձատրվող ուսուցչի համար: Դասաժամը 45 րոպե տեւողությամբ է. չենք խոսում գրավորների եւ այլ աշխատանքների մասին, իսկ ուսուցիչը վարձատրվում է 0.25-ով, եթե դասարանի աշակերտների թիվը չի հասնում 5-ի: Ամեն տարի քաղաքային դպրոցներում ծափահարություններ, մեդալների «անձրեւ»: «Իսկ Չիբուխլո՞ւն...»:

Մերկապարանոց ճշմարտություն է, որ հայոց աշխարհի անվտանգությունն սկսվում է գյուղից, հողը երկիր դարձնող շինականից:

Պատմական Աճանան գավառի մի ժամանակվա շենշող գյուղերը մարել, մարում եւ օրեցօր վերածվում են գերեզմանատների. հիշենք Վ.Պետրոսյանի «Մենավոր ընկուզենին»: Այդ տարածքի Անտառաշատ, Ջորաստան (Խլաթաղ). Առաջածոր, Ներքին Խոտանան գյուղերում դպրոցները փակվել են, իսկ մեկ տարի առաջ գուժեցին Կապանի տարածաշրջանի առաջին միջնակարգի՝ Շրվենանց գյուղի 110-ամյա դպրոցի վախճանը (եւ որպիսի հանգստությամբ): Վերոհիշյալների տխուր հեռանկարին են սպասում Վերին Խոտանան. Նորաշենիկ, Դովրուս, Ուխտավայր (Օխտար), Տանձաղ, Աղվանի գյուղերի դպրոցները, որոնք հազիվ մեկ, երկու տասնյակի հասնող սովորող ունեն, շատ-շատ՝ գոյատեւեն 5-6 տարի, այն էլ՝ ոչ բոլոր դասարաններով:

Ուրեմն ի՞նչ, սպասենք, որ փակվե՞ն, էլ ե՞րբ, ինչպե՞ս վերաբացենք: Իսկ երբ թուրքը նորից գրոհի մեր սահմանների վրա, ո՞վ պետք է դիմագրավի, որտեղի՞ց գտնվեն մի քանի տասնյակ երիտասարդ, որ պաշտպանեն գյուղը, մինչեւ զորք ու զինվոր վրա հասնեն: Մենք մեր ձեռքով մեր տունը դատարկում ենք. թշնամու ջաղացին ջուր լցնում:

Ժամանակի ընթացքում Վերին Խոտանան գյուղն իր մեծությամբ, բնակչությամբ շրջանում երրորդն էր, իսկ իր բարձրաստիճան զինվորական գործիչներով Սյունյաց աշխարհում առաջինը՝ Նժդեհի տեղակալ, թուրքի գնդակի զոհ Պողոս Տեր-Դավթյան, բրիգադային կոմիսար, 1937-ի հալածանքների զոհ Հմայակ Տեր-Դավթյան, զինվորական պատմաբան Հայկ Հայրապետյան, մարշալ Բաղրամյանի մարտական ընկեր Մուշեղ Կարապետյան, Արտաշես Ղազարյան, Նապոլեոն Մինասյան, Իշխան Դավթյան, Արցախի գոյամարտի ղեկավարներից գեներալ-լեյտենանտներ Մուրազ Սարգսյան, Լեոնիդ Անտոնյան: Մեծ հայրենականի մասնակից 214 սերմնացաններից 81-ը չվերադարձավ: Այժմ գյուղը ցամաքել եւ հարյուր բնակիչ էլ չունի: Իսկ Մովսես Խոտանանցու կառուցած եկեղեցին սպասում է, թե երբ կբարեկարգվի ու գլխին խաչ կուտենա: Կապան քաղաքում կան արվեստի, երաժշտական դպրոցներ: Ո՞ւր են գնում շրջանավարտները, եթե գյուղական դպրոցների երեխաները կարոտ են արվեստագետի, չգիտեն գեղանկարչությունն ու երաժշտությունն ինչ են. ինչպե՞ս նկարել, երգել, որեւէ գործիքով նվագել: Եվ ինչ իմանաս, քանի ապագա տաղանդներ են կորսվում: Չմոռանանք, թե գյուղաշխարհը քանի հանճարներ է տվել: Թերեւս մասնագետը գյուղական դպրոց չի մտնում ցածր դրույքաչափի պատճառով: Իսկ եղել է ժամանակ, որ մասնագետ-ուսուցիչներ են գործուղվել գյուղեր եւ ժամերի թերբեռնվածության դեպքում կառավարությունը հովանավորել, արտոնություն է տվել, որպեսզի նման մասնագետները վարձատրվեն դրույքաչափով:

Հիշում եմ, որ նախկին խորհրդային տարիներին տարբեր քաղաքներից բարձրագույն մանկավարժական կրթությամբ ուսուցիչներ էին գործուղվում գյուղական դպրոցներ, իսկ այժմ գյուղական դպրոցների որոշ մասը չունի մասնագետ-մանկավարժ, ով ասես, ինչ կրթությամբ ասես չի աշխատում, ակամա «վայ մանկավարժը» դառնում է ամենագետ, դե, գյուղ է, յոլա կգնա, միայն դասաժամի ճեղքը փակվի:

Գյուղական դպրոցներն անմասն չմնացին կրթական բարեփոխումներից: Ամեն մի նորամուծություն ողջունելի է, խթանիչ ուժ է: Սակայն մի քանի աշակերտ ունեցող դասարաններում ուսուցչի համար հեշտ չէ առաջնորդվել չափորոշիչներով, ծրագրային պահանջները կատարել լիովին: Ասենք դասարանում մեկ աշակերտ է՝ 0.25 վարձաչափով. ֆիզկուլտուրայի ուսուցիչը ծրագրից չշեղվելու համար կատարում է հերթական գրանցումը՝ «Գնդակի փոխանցում», «Վոլեյբոլ», «Բասկետբոլ», մեկ աշակերտը ո՞ւմ փոխանցի գնդակը, կամ մայրենիի դասերին՝ աշխատանք խմբերով, զույգերով… Գյուղական դպրոցները կարոտ են նման հարցերի պարզաբանման:

Հարգելի պարոն Գասպարյան, գուցե գլխացավանք եմ պատճառում տարբեր հարցերի շուրջ մտորելով ու Ձեզ անհանգստացնելով, բայց մենք, ապրելով ու աշխատելով գյուղում, մեր մաշկի վրա զգում ենք «կսմիթները», ցավում, թե ինչ է լինելու գյուղաշխարհի, դպրոցի վիճակը, մինչեւ երբ ենք «դատարկվելու»:

Հ.Գ. Սիրով եմ ընթերցում «Հայոց լեզու եւ գրականության» ամսագրի նյութերը, դրա համար էլ սիրտս բացեցի Ձեր առջեւ:

ԱԼՄԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

Սյունիքի մարզի Վերին Խոտանան գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ԵՐԵՔՇԱԲԹԻ • 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՄԲԻՈՆ

Արեւապաշտությունը Հայկական լեռնաշխարհում

ԼԻԼԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Կապանի թիվ 2 ավագ դպրոցի պատմության, հասարակագիտության ուսուցչուհի

Ար աստծո պաշտամունքի ծագումն ու տարածումը: Հայկական լեռնաշխարհը համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկն է: Հայերն այստեղ վաղ են կազմավորվել որպես ազգ, ունեցել ուժեղ պետականություն եւ բարձր մշակույթ: Այն, որ հայերն Առաջավոր Ասիայում մեծ տեղ ու դեր են ունեցել, վկայում են նյութական մշակույթի բազմադարյան հետքերը, պատմական, դիցաբանական գրույցներն ու առասպելները, աշխարհագրական եւ անձնական անունները:

Անհիշելի ժամանակներից հնդեվրոպացիների նախահայրենիք հադիսացող Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղի ուղղակի ժառանգորդը հայ ժողովուրդն է, որը հազարամյակներ ապրում եւ արարում է իր բնօրրանում: Գեղեցիկ ու դաժան այս լեռնաշխարհում է հայ մարդը կառուցել հոյակապ կոթողներ, շենքեր ու քաղաքներ, այստեղ է ստեղծել ավանդություններ, զրույցներ: Այստեղ է երկրպագել նաեւ իր առաջին աստծուն՝ արեւի հզոր աստված Ար-Արային:

Հնագույն ժամանակներում յուրաքանչյուր ցեղ ունեցել է պաշտամունքի իր առարկան՝ աստվածը, իսկ յուրաքանչյուր աստված՝ իր անունը: Բացի բազմաթիվ աստվածներից ցեղն ունեցել է իր գլխավոր աստվածը:

Հնագույն պատմական վկայությունները, լեզվական, ազգագրական եւ հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ արիների հնագույն գլխավոր աստվածն արեւի Ար աստվածն էր: Երկնային լուսատուներից ամենալուսավորն ու պայծառն արեգակն է, որը լույս ու ջերմություն է տալիս մարդուն՝ ապահովում բերք ու բարիքով: Մեր նախնիները՝ պաշտելով արեւը, նրան վերագրել են արարչական զորություն, ընդունել են նրան որպես ամենայն բարիքներ ստեղծող գերբնական մի ուժ, որպես կյանքի աղբյուր, սկիզբ ամեն ինչի: Եվ բնական է, որ մարդը «զԱրեգակն աստված համարեր եւ անոր նայելով զաստված պաշտեին»: Գարունը եւ տաք արեւը, որ փոխարինել են Հայկական լեռնաշխարհի հաճախ շատ ցուրտ ու երկարատեւ ձմռանը, մեծ ուրախություն են պատճառել մարդկանց, ովքեր մեծ անհամբերությամբ էին սպասում արեւին, գարնանն ու բնության զարթոնքին, գարնան գալուստը նշելով մեծ տոնակատարություններով (բարեկենդան, տեարնընդառաջ, համբարձման տոն):

Արեւը մարդուն հետաքրքրել է նաեւ նրանով, որ ամեն օր մեռնում ու հարություն է առնում: Արեւի մեռնելը, անհետանալն անվանել են մայրամուտ, իսկ նորից ծագելը՝ հարություն առնել: Մարդը նկատում էր, որ ինչպես արեւն է մեռնում ու հարություն առնում, այնպես էլ տարին է մահանում (ձմեռ) ու մահից հետո հարություն առնում (գարուն): Անտարբեր չմնալով այս գաղափարից՝ մարդն իր գլխավոր աստծուն օժտել էր նաեւ մեռնող եւ հառնող հատկությամբ: Ար աստվածը մեռնող եւ հառնող բնության աստվածն էր՝ հետագայում ձեռք բերելով նաեւ ռազմի եւ քաջության աստվածության նկարագիր:

Արեւի աստված Արը խաղաղ բնույթով եւ գեղեցիկ համամարդկային հատկանիշներով էր օժտված: Փոքրասիական այլ աստվածությունների հետ համեմատելիս անմիջապես նկատելի է դառնում Ար աստծո նկարագրի խաղաղ բնույթը: Այսպես. Բել-Մարդուկ, Թամմուզ, Ատտիս, Մոլլոք եւ այլ աստվածների տոնահանդեսների ժամանակ տեղի էին ունենում ինքնաձաղկման եւ ինքնաներքինացման արարողություններ, իսկ Մոլլոքին զոհաբերում էին մանուկներ: Ասորական արձանագրություններում (Սալմանասար 1-ին, Թիգլաթպալասար 3-րդ) վկայվում են հանուն Ասսուր աստծո եւ նրա հովանավորությամբ ձեռնարկած արշավանքների ու այդ ընթացքում կատարած ավերածությունների, թալանի ու դաժան սպանությունների մասին: Իր նկարագրի խաղաղ բնույթն արեւի Ար աստվածը պահպանել է շատ հազարամյակներ՝ կրելով հրապուրիչ գաղափարախոսություն, ունենալով լայն տարածում՝ դառնալով «ունիվերսալ կրոն»:

Շատ խոր հնության պատճառով դժվար է ճշտորեն որոշել Ար աստծո ինչպես ծագման, այնպես էլ նկարագրի զարգացման ժամանակաշրջանը: Գիտական ուսումնասիրությունները պարզել են, որ հնդեվրոպացիներն ունեցել են ակունքային մի ընդհանուր մշակույթ (հնդկական վեդաները, հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպը, իրանական «Ավեստան»), որը յուրաքանչյուր ժողովուրդ զարգացրել է յուրովի՝ բաժանվելով մայր ցեղից: Հնդկական «Ռիգվեդայում» եւ իրանական «Ավեստայում» աղոտ հիշողություններ են պահպանվել նախահայրենիքում գտնվող Երասխ /նաեւ Արաքս, Ռահ/ գետի մասին ՌԱՍԱ (Ռիգվեդա) եւ ՌԱՀԱ (Ավեստա) անունով: Տվյալ դեպքում Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ արիների համար գոյություն է ունեցել արեւի Ար աստծու պաշտամունքը, որը ցեղի գլխավոր աստվածն էր եւ ցեղի տարածման հետ տարածվել էր նաեւ նրա պաշտամունքը: Հնագիտական պեղումները, ազգագրական նյութերի ուսումնասիրությունները պարզել են, որ սկսած Ք.ա. 4-րդ հազարամյակից, արիական ցեղերը՝ շումերները, իսկ Ք.ա. 3-2-րդ հազարամյակից՝ հույներ, հնդիկներ, իրանացիներ, նոր բնակավայրեր ու նոր արոտավայրեր փնտրելու նպատակով սկսել են հեռանալ նախահայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից: Նրանք լավ կազմակերպված համայնքներ էին, լավ ռազմիկներ, որոնք զինված էին մետաղե զենքերով, ունեին նաեւ ձիեր ու մարտակառքեր: Սրանով էր պայմանավորված արիների հաջողության գաղտնիքը, որոնք դուրս գալով բնօրրանից՝ տարածվեցին աշխարհում, իրենց հետ տանելով այնտեղ ստեղծված հոգեւոր մշակույթի բազմաթիվ արժեքներ, այդ թվում՝ աստվածներ ու գլխավոր աստծու պաշտամունքը: Ցեղի մի մասը սակայն մնաց հայրենիքում, դիմացավ հազարամյակների փորձությանը, կազմավորվեց որպես ազգ՝ հայ ազգ, ստեղծեց իր պետությունը եւ ինքնատիպ մշակույթը, որը նրա համար մեծ տեղ ու դեր ապահովեց համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ:

Նոր պայմաններում նախնիների գլխավոր աստծո նկարագրի մեջ մի փոքրիկ գիծն անգամ նպաստում է նոր աստվածների մեջ ճանաչելու արեւի հնագույն Ար աստծոն: Այսպես. Թրակիա-Սպարտա–Հունաստանում գոյություն է ունեցել գարնան եւ ռազմի աստված Արեսը, որի անունը, ըստ գերմանացի Վելկկերի, կապվում է հայերեն արեւ բառի հետ, հովիվների ու երկրագործների աստված, ավելի ուշ Զեւսի սուրհանդակ՝ Հերմեսը, գարնան աստված Էրոսը, Մակեդոնիայում արեւի եւ ռազմի աստված Արասը, Իրանում երկինքը, երկիրը, մարդուն ստեղծած զրադաշտության գլխավոր աստված Ահրումազդը, Հռոմում՝ ռազմի աստված Մարսը, գերմանացիների մոտ՝ էրթագը, սլավոնների՝ բուսականության, երկրագործության, ապա ռազմի աստված Յար-Յարիլա-Յարիլոն, որի անունը, ըստ Գ.Ղափանցյանի, կապված էր Ար աստծո անվան հետ եւ «Ա» ձայնավորը հետագայում առջեւից ստացել է «Յ» հնչյունը, իսկ «իլա», «իլո» մասնիկները հետագայում են ավելացել արմատին՝ ունենալով փաղաքշական իմաստ, Հնդկաստանում՝ Ռամը, որի անունն ըստ Մ.Գավուքչյանի՝ բխեցվում է Արամից:

Հայկ Նահապետի արձանը Երեւանում

Նեմրութի սրբավայրը Կոմագենեում

Նեմրութի սրբավայր, Անտիոքոս 1-ին Երվանդունի, ով Ք.ա. 70թ. թագադրվել է Տիգրան Մեծի կողմից Հայկական կամ Տիգրանյան թագով

Նեմրութի սրբավայրը Կոմագենեում

Ար աստծո պաշտամունքը տարածված էր նաեւ հարեւան երկրներում: Այսպես. Եգիպտոսում տարածված էր Ռա աստծո պաշտամունքը, որը, ըստ ուսումնասիրողների, Եգիպտոսի ծնունդ չէր, այլ մուտք էր գործել Սիրիայի կողմերից, որը հարեւան էր Հայաստանին: Խեթական պետությունում պաշտում էին Արա, Ասորեստանում՝ Ասրա, Բաբելոնում՝ Արիա, Վրաստանում՝ Արալի, Լիդիայում՝ Արմաս աստվածներին եւ այլն:

Անգլիացի արեւելագետ Արչիբալդ Սեյսն ասել էր. «Արայի պաշտամունքը ձեւավորվել է Հայկական լեռնաշխարհում, ապա տարածվել հին աշխարհի բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների դիցարանում»:

Արեւի աստված Արը որպես գլխավոր աստվածություն: Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ արիների գլխավոր ու հնագույն աստվածն արեւի Ար աստվածն էր: Ցավոք, տեղեկություններ չեն պահպանվել Ար աստծո պատվին կառուցված տաճարների, սրբավայրերի ու նրան նվիրված տոնակատարությունների մասին, իսկ որ դրանք եղել են, անկասկած է: Ամենայն հավանականությամբ Ար աստծո տոնը նշվել են Նոր տարվա սկիզբ: Այդ մասին է վկայում Մատենադարանում պահպանվող տոմարական մի պատառիկ /թիվ 1999ձեռագիր/, որում գրված է հին հայկական ու հին հռոմեական ամիսների զուգահեռ ցանկը: Այդ փաստաթղթի վերնագիրն է «Ամիսք Հայոց եւ Հռոմի հանդեպ միմյանց», ցանկը սկսվում է նավասարդից՝ «Նաւասարդի, որ է մարտի, Հռոմ՝ ապրիլ… եւ վերջանում է՝ «Հրոտից՝փետրուարի» ամսով:

Հետաքրքիր է, որ հնդեվրոպացիներից իրանցիները պահպանել են նոր տարին մարտի 21-ից սկսելու նախնիների կարգը:

Հայոց հեթանոսական տոմարի մեջ եւս պահպանվել են արեւի Ար աստծո պաշտամունքի հետքերը: Այսպես. «հեթանոսական տոմարի 6-րդ ամիսը կոչվել է Արաց, «այն նշանակել է արերի/արմենեներ/ օրեր եւ նվիրված էր Ար աստծո տոնակատարություններին»: Ա.Մատիկյանը գտնում է, որ Արաց «պիտի նշանակի Արայի օրեր»: Ար աստծո պատկերը մեզ չի հասել հավանաբար խոր հնության պատճառով, սակայն ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ Ար աստվածը հաճախ է պատկերվել իր ուղեկից առյուծի հետ /ավելի հաճախ կանգնած առյուծի մեջքին/: Այդպիսի պատկերներ հայտնաբերվել են էրեբունի ամրոցի պեղումների ժամանակ: Պահպանված որմնանկարներից մեկը ներկայացնում է Վանի թագավորության ժամանակնե-

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՄԲԻՈՆ

Երի գլխավոր աստված Խալդ-Հալդիին՝ /Արդի, նաեւ Հայկ/ կանգնած առյուծի մեջքին:

Հազարավոր տարիներ հայ ժողովուրդը պաշտել է արեւը ու արեւի Ար աստծուն, բայց պատմական ինչ-որ ժամանակահատվածում այն տեղի է տվել: Սիրված այս աստվածության պաշտամունքը սակայն չի անհետացել, այլ շարունակել է հարատեւել ավելի ուշ հանդես եկած Արամազդ, Վահագն, Միհր աստվածների մեջ՝ նրանց փոխանցելով իր նկարագրի շատ հատկանիշներ: Հայոց ուշ շրջանի հեթանոսական դիցարանը գլխավորում էր Արամազդը, Վահագնը ժառանգել էր արեւի ու ռազմի, իսկ Միհրը՝ կրակի /արեւի/ հատկանիշները:

Հնագույն բոլոր աստվածները հանդես են գալիս իրենց զույգերի հետ. Դումուզի-Ինանա /Շումեր/, Թամմուզ- Իշտար /Բաբելոն, Ասորեստան/, Օզիրիս–Իզիդրա /Եգիպտոս/, Ատտիս-Քիբելե /Փռյուգիա/, Ադոնիս-Ասատրե /Փյունիկիա/, Ադոնիս-Աֆրոդիտե /Հունաստան/ եւ այլն: Հետեւաբար Հայկական լեռնաշխարհի հնագույն Ար աստվածը եւս պետք է ունենար իր զույգը: Ազգագրական պատառիկները հուշում են, որ շատ վաղուց Հայաստանում գոյություն է ունեցել ՆԱՐ աստվածուհու պաշտամունքը: Այս աստվածուհու մասին եւս շատ քիչ բան է հայտնի, դարձյալ իր խոր հնության պատճառով: Դժբախտաբար քիչ տեղեկություններ կան նաեւ հայոց հնագույն դիցարանի մասին: Այդ առումով հետաքրքիր է մեր հնագույն հարեւանների դիցարանը: Շումերներն ունեցել են արեւի Բաբբար եւ լուսնի Նաննար աստվածները: Ընդ որում՝ Նաննար աստվածուհին շումերների մոտ ավելի մեծ կարեւորություն է ունեցել, քան Բաբբարը: Մ.Գավուքչյանը Նաննար եւ Բաբբար անուններին բավական հետաքրքիր բացատրություն է տալիս: Ըստ նրա՝ Բաբբարը կազմված է հայր(պապ)-Ար բաղադրիչներից, իսկ Նաննարը նան (լուսին) - Ար բաղադրիչներից, որը նշանակում է Արի Նան(լուսին): Ասորեստանում եղել է ՆԱՐ, աստվածուհի, որն ըստ Դեյմելի, Գր.Ղափանցյանի՝ ջրերի ոգին էր: Այս դեպքում հիշենք «Սասնա ծռերի» Ծովինարին, ով էլ հենց ջրից հղիացավ: Փռյուգիացիներն ունեցել են Նանե աստվածուհի, հույները՝ Նանե հավերժահարս, սկանդինավյան ժողովուրդները՝ Նանա դիցուհի:

Հայերը եւս ունեցել են Նանե աստվածուհի, ով Արամազդի դուստրն էր: Հայաստանի շատ շրջաններում՝ (Արցախ, Ուտիք, Լոռի) մեծ մորն այսօր էլ անվանում են Նան, Նանի, Նանե: Նանա սանսկրիտ նշանակում է մայր: Նար աստվածուհու պաշտամունքի հետ է կապված ազգագրական երգի պատառիկ, որ դարեր շարունակ երգվել ու պահպանվել է ժողովրդի մեջ.

Նուրին, Նուրին եկել ա,
Աչպա հուրին եկել ա,
Շալե շապիկ հագել ա,
Կարմիր գոտիկ կապել ա,
Յուղ փվեք, վարսը քսենք,
Ձու փվեք, ձեռքը դնենք:

Երգը երգում էին, երբ անձրեւ ակնկալելու խնդրանքով երեխաները Նար (Նուրի) տիկնիկի հետ շրջում էին տները:Ժամանակի ընթացքում Նար աստվածուհուն եւս փոխարինել են այլ աստվածուհիներ՝ Ծովինար, Նանե, Անահիտ: Փոքրասիական մայր աստվածուհիները լուսնային բնույթ են ունեցել: Եգիպտացիների Իսիսը, ասորեստանցիների Միլիտան, փյունիկցիների Աստարտան, հույների Արտեմիսը եւ ուրիշներ հաճախ են պատկերվել լուսնի մահիկի տեսքով: Նար աստվածուհուն ավելի ուշ շրջանում փոխարինած Անահիտ աստվածուհին եւս նախ եղել է լուսնի աստվածուհի, իսկ հետագայում նաեւ՝ պտղաբերության ու սիրո աստվածուհի: Սատաղից հայտնաբերված նրան վերագրվող բրոնզե արձանիկի ճակատին թափված է երկու խոպոպիկ՝ լուսնի մահիկի տեսքով:

Այսպիսով՝ վերոհիշյալ բոլոր անունները /Նանար, Նար, Նանե/, նաեւ Հայաստանում տարածված կանացի հնագույն Ծովինար, Հեղնար, Էլինար, Ոսկինար եւ այլ անուններ մեզ հուշում են, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն աստվածուհին ՆԱՐ աստվածուհին էր: Հետեւաբար արեւի հնագույն աստված ԱՐ-ի զույգն էր լուսնի հնագույն ՆԱՐ աստվածուհին: Խորենացին վկայում է, որ մեհյաններում դրվում էին արեւի ու լուսնի արձաններ:

ԱՐ աստծո պաշտամունքի հետքերը հնագիտության մեջ: Արեւի հայոց հնագույն ԱՐ աստծո պաշտամունքի խոր հնության ու տարածվածության մասին են վկայում Հայկական լեռնաշխարհում կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ արժեքներ:

Մեր հնագույն նախնիները դիտարկել, ուսումնասիրել են երկինքը, արեւը, լուսինը, աստղերը, բնության տարերքներն ու աղետները եւ յուրովի պատկերել տեսածն ու զգացածը: Հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց վրա կան բազմաթիվ զարդաքանդակներ արեգակի, լուսնի, աստղերի, երկրի ու այլ մոլորակների պատկերներով, սակայն շատ են արեւի պատկերները: Արեւը մեր նախնիները պատկերել են երկրաչափական մարմինների՝ խաչ, շրջանակ, սվաստիկա, կենդանիների ու թռչունների՝առյուծ, ձի, ցուլ, խոյ, արծիվ, իսկ ավելի ուշ մարդկային կերպարանքով՝ Ար, Արամազդ, Վահագն, Միհր:

Արեւի ու նրա խորհրդանիշների ուսումնասիրության համար կարեւոր են Ք.ա. 5-3-րդ հազարամյակներին թվագրվող Արագածի, Գեղամա լեռների, Սյունիքի, Նախիջեւանի, Մեծամորի ժայռապատկերները: Ժայռապատկերներին արեւը պատկերված է ճառագայթավոր անվի, խաչի տեսքով: Ուսումնասիրությունների համաձայն՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Շումերում, Բաբելոնում, Եգիպտոսում, Ասորեստանում ամենատարածվածներից էր արեւի գունդը պատկերող անվաձեւ սկավառակը: Արեւն իր պտույտի պահին պատկերվել է որպես անիվ, ճառագայթները՝ ճաղեր, իսկ ընթացքը՝ անվի պտույտ: Գեղամա ժայռապատկերներից մեկում արեւը պատկերված է ճառագայթավոր անվի ձեւով՝ վրան մի խոշոր թռչուն, կտուցը դեպի հրավառ գունդը:

Կան արեւ-լուսին կապն արտահայտող ժայռապատկերներ, որոնցից մեկում պատկերված է մակույկաձեւ լուսին, իսկ մակույկ-լուսնի մեջ՝ արեւ: Վանի թագավորության մի կնքադրոշմի վրա , ուր աղեղնավոր հերոսը կռվում է վիշապի դեմ, նրանց վերեւում պատկերված է մակույկ-լուսին ու արեւ:

Հայկական ժայռապատկերներում արեւ-խաչը պատկերված է քառաթեւ՝ շրջանակի մեջ առնված, հավասարաթեւ ու անհավասարաթեւ պատկերներով՝ ինչպես Գեղամա ժայռապատկերներում:

Ար աստծո պաշտամունքն իր խոր հնությամբ, նկարագրի գեղեցիկ հատկանիշներով ու խաղաղ բնույթով մեծ ազդեցություն է ունեցել մեր նախնիների հավատալիքների, հայոց լեզվի, մշակույթի, կենցաղի ու սովորույթների ձեւավորման վրա: Ար աստծո անունը հատկապես զգալի է հայոց անձնական ու աշխարհագրական անուններում:

Արեւի ԱՐ աստծո անունը Հայ-Արմեն ու հայոց անձնական ու աշխարհագրական անուններում: Հայոց պատմության ու մշակույթի հարցերով զբաղվող գիտնականներին հետաքրքրել է հայ եւ արմեն անունների առաջացումը: Հայ պատմիչներից առաջիններից մեկը Մ.Խորենացին այն կապում է Հայկի ու Բելի ճակատամարտից հետո Հայկի սերունդների տեղաշարժի հետ: Նա մեկնաբանում է, որ Հայ անունն առաջացել է Հայկի, իսկ «Արմեն», «Արմենիկը»՝ Հայկի ծոռնորդի՝ Արամի անունից: Խորենացու այս բացատրությունները երկար ժամանակ անվիճելի էին համարվում: Սակայն ժամանակ առ ժամանակ փորձեր էին արվում նորովի բացատրելու հայ եւ արմեն անվանումների ծագումը: 19-րդ դարի եւ 20-րդ դարի սկզբներից եվրոպացի գիտնականները սկսեցին հետաքրքրվել հայերի ու Հայաստանի պատմությամբ, մշակույթով, նաեւ հայ եւ արմեն անունների ծագման հարցերով:

Գիտնականների մի խումբ հայ անունը փորձում է բացատրել հնդեվրոպական պլտի՝պետ, գլխավոր բառով, իբր իրենց այդպես են կոչել եկվոր արմենները՝բնիկներից տարբերվելու համար: Հետագայում պլտինը ձեւափոխվելով դարձել է հայ: Պ. Ենգնը գտնում էր, որ հայ անունն առաջացել է հեթիթների հաթ, հաթիո էթնիկական անուններից: Ն.Մառը հայ անունը կապում է Ք.ա.6-րդ դարում Հայաստան արշաված հանիոոներ կամ հենիոխներ ցեղի անվան հետ: Լ.Շահինյանն իր «Գիրքը դարերի խորքից» աշխատության մեջ մերժում է բոլոր ոչ խորենացիական տեսակետները: Գիտնականների կողմից ընդունվեց Խորենացու տեսակետը՝ Հայկի անունով երկիրը Հայք, Հայաստան եւ Արամի անունով Արմենիա կոչվելու մասին: Սակայն ժամանակի հետ առաջանում էին նոր հարցեր, իսկ եթե Հայկ Նահապետն է իր անունը վերցրել Հայ, Հայք անունից՞, ե՞րբ է առաջացել հայ անունը, ինչո՞ւ են օտարները մեզ արմեն անվանում, ո՞ր անունն է հնագույնը եւ այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հնում ցեղի գլխավոր աստվածները մեծ դեր են ունեցել տվյալ ցեղի համախմբման ու կազմավորման գործում: Հաճախ նաեւ կազմավորվող ցեղն ինքն իրեն կոչել է պաշտվող գլխավոր աստծո անունով: Օրինակ՝ Ասսուր-Աշշուր աստծո անունով են իրենց կոչել ասորիները: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհում հնագույն գլխավոր աստվածն Արն էր, ուստի կարելի է մտածել, որ Ար աստծո անունով բնիկներն իրենց կոչել են ար-հար, իսկ բնօրրանը՝ ԱՐԱՐԱՏ, ՀԱՐՔ-ՀԱՅՔ:

Հնագույն գրավոր աղբյուրներում եւս հանդիպում ենք փաստերի, երբ «ար»-ը հանդես է գալիս «հար» ձեւով: Այսպես օրինակ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդիպում ենք ՀԱՐՔ ձեւին , իսկ պարսից Դարեհ 1-ին արքայի Բեհիսթունյան եռալեզու արձանագրության մեջ էլամերեն բնագիրը Հայաստանի համար օգտագործում է ՀԱՐՄԻՆՈՒՅԱ ձեւը /պարսկերեն ԱՐՄԵՆԻԱ, աքադերեն ՈՒՐԱՐՏՈՒ/: Նույն արձանագրության մեջ էլամական բնագիրը հին պարսկերեն aria ձեւի համար օգտագործում է harri ձեւը: Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում՝ Վանա լճի շրջակայքում եւ ավելի հարավ Ք.ա. 2-րդ հազարամյակի կեսերին ստեղծված պետական կազմավորումներից մեկի՝ ՀԱՐԻ- Միտանի երկրի բնակիչներն իրենք իրենց անվանում էին հարի մարդիկ, իսկ երկիրը՝ Հարի երկիր: Ելնելով այս փաստից՝ միանգամայն հնարավոր է, որ մեր նախնիներն իրենք իրենց կոչեին ար-հար: Այս դեպքում ճիշտ է Մ.Գավուքչյանի եզրակացությունը, որ ավելի ուշ հար անվան «ր»հնչյունը դարձել է «յ»՝ հայ եւ Հայք, որն ավելի բարեհնչյուն է եւ հեշտ է արտասանվում:

Խորենացին օգտագործել է ԱՐԱՐԱԴԻ երկիր /Վանա լճից հարավ/, ՀԱՐՔ /Վանա լճից հյուսիս-արեւմուտք/, ՀԱՅՔ/ Վանա լճի շրջակայք, ապա ամբողջ հայկական լեռնաշխարհ/ եւ ԱՐՄԵՆԻԱ անունները: Նկատում ենք, որ այս բոլոր անունների մեջ առկա է ԱՐ աստծո անունը: Կարելի է ենթադրել, որ Խորենացու հիշատակած ՀԱՐՔ-ը ոչ թե հայերի երկիր է նշանակում, այլ պարզապես աշխարհագրական անուն է, երկրանուն: Ուշադրություն դարձնելով նաեւ Խորենացու այն վկայությանը, որ Հայկը հեռանալով Բաբելոնից, բնակություն է հաստատել ԱՐԱՐԱԴԻ երկրում /շումերական դյուցազնավեպում ԱՐԱՏՏԱ Ք.ա.4-3 հզ./, ուրեմն արդեն կար ԱՐԱՐԱՏ կոչվող երկիրը: Իսկ Հայկ նահապետը, որ ամենայն հավանականությամբ իրական անձ է, աչքի է ընկել իր քաջությամբ, ազնվությամբ ու շիտակությամբ, խոր հետք է թողել ժողովրդի հիշողության մեջ: Դա էլ հիմք է տվել Մար Աբասին, Խորենացուն եւ մյուս պատմիչներին՝ Հայկին համարելու հայոց նախնի: Հետեւաբար կարելի է ասել, որ Հայկ անունը ծագել է մեր ժողովրդի հայ անունից եւ ոչ հակառակը:

Ար աստծո անունով հարեւանները եւս Հայկական լեռնաշխարհի բնակիչներին անվանել են արմեն, արման, որ նշանակում է արածին, արորդի, արիմարդ: Հնում «մա», «մե» հնդեվրոպական բառարմատներն ունեցել են սերել, ծնել իմաստը:

Հանդիպում ենք նաեւ ԱՐՄԵՇՈՒՊՐԻԱ, ԷՐՄԱՆԻ եւ այլ անուններ: Այս բոլորը նույն ցեղի, նույն ժողովրդի տարբեր անվանումներ են: Ուստի մեր երկրի հնագույն անունները՝ ԱՐԱՏՏԱՆ ու ԱՐԱՐԱԴԸ կազմված են ԱՐ՝ արեւի աստված եւ «ատ»՝ տեղանվան բաղադրիչներից:

Հայկական լեռնաշխարհը, որտեղ ստեղծված պետական կազմավորումները հայտնի էին ԱՐԱՏՏԱ, ԱՐԱՐԱԴԻ, ՀԱՐՔ-ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ անուններով՝ բնակեցված էր ԱՐ աստծուն պաշտող հայ /ար-հար/, արմեն ցեղի մարդկանցով: Բոլորովին պարտադիր չէր, որ Հայկական լեռնաշխարհի ամբողջ տարածքը միաժամանակ ընդգրկվեր մեկ պետական կազմավորման մեջ: Հայկական լեռնաշխարհի ցեղերը միմյանցից բաժանված էին բարձր լեռներով, անդնդախոր ձորերով, կիրճերով, արագահոս գետերով ու անտառներով, որը դժվարացնում էր միմյանց հետ հաղորդակցվելը: Ուստի պետական կազմավորումներ կարող էին առաջանալ լեռնաշխարհի տարբեր հատվածներում: Ստեղծված պետությունն անպայման պետք է ցանկանար իր գերիշխանությունը տարածել ողջ ցեղի վրա՝ միավորելով նրան: Այդպես էր Վանի թագավորության ժամանակ, երբ Վանի արքաները փորձում էին միավորել Արարատի ցեղերին: Վանի արքաներից հետո մեր թվականության սկզբին մեծ հաջողության հասավ Տիգրան Մեծը /Ք.ա.95-55թթ./, ում հաջողվեց միավորել Հայկական լեռնաշխարհի մեծ ու փոքր ինքնիշխան պետական կազմավորումներին ու ցեղերին եւ ստեղծել հզոր պետություն:

Ի տարբերություն Վանի թագավորության ու Տիգրան Մեծի ստեղծած տերության, որ հզորանալով ընդգրկել է ամբողջ Մեծ Հայքը, ունեցել ենք Սյունիքի, Լոռու, Կարսի, Աղվանքի թագավորություններ եւ Ղարաբաղի մելիքություններ: Ուստի նախապատմական ժամանակներից Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերն ունեցել են արեգակնային ԱՐ աստծո պաշտանմունք , որի անունով այդ ցեղերը կոչվել են հայ/ար-հար/ եւ արմեն, իսկ ընդարձակ տարածքը, ուր ապրում էին հայ - արմենները, կոչվել է ԱՐԱՐԱՏ, ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ:

Աշխարհի ոչ մի երկրում հնարավոր չէ հանդիպել «ար»-ով սկսվող անձնական ու աշխարհագրական այնքան անուններ, որքան Հայաստանում: Գրավոր հիշատակված «ար»-ով անձնական անուններ հանդիպում ենք Ք.ա. 2-րդ հազարամյակից սկսած: Դրանք Հայկական լեռնաշխարհի հարավում կազմավորված պետություններից մեկի՝ ՀԱՐՐԻ-ՄԻՏԱՆԻ երկրի արքաների անուններն են, որոնք մեզ են հասել Թել-էլ-Ամառնայ /Եգիպտոս/ եւ Բողազքյոյի /Թուրքիա/ արքունական դիվանների հայտնաբերման շնորհիվ: Այդ անուններից են՝ Արտատամա, Արտաշումարա, Արտամանյա: Այդ անունները գրված են աքադա-բաբելական լեզվով ու սեպագրերով, որն ազդել է անվան ճիշտ գրության ու արտասանության վրա, քանի որ անունները հարմարեցվել են օտար լեզվի ու սեպագրերի:

Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ հիշատակված է 11 հայ նահապետի անուն, որոնցից 5-ը սկսվում է ԱՐ-ով՝ Արամանյակ, Արամայիս, Հարմա, Արամ, Արա Գեղեցիկ: Այնուհետեւ հիշատակված են Արտավազդ, Արտաշես, Արիոբարզան, Արշակ, Արշամ, Արտավան, Արքեղայոս, Արշավիր, Արտաշիր եւ այլ անուններ:

Վանի թագավորության արքաների արձանագրություններում հանդիպում ենք Արամե, Արգիշտի, Էրիմենա անուններին, որոնց ավելացվում են Արտակ, Արամազդ, Արմեն, Արմենակ, Արտեմ, Արտան, Արսեն, Արեգ, Արբակ, Արծրուն, Արմանուշ, Արեւիկ, Արմինե, Արփի, Արմենուհի եւ այլ անուններ:

ԱՐ աստծո անունով են կոչվել ոչ միայն ցեղն ու բնօրրանը, այլեւ Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ աշխարհագրական անուններ՝գետեր, լեռներ, ավաններ, շեներ ու քաղաքներ՝ Արարատ, Արագած, Արաքս, Արածանի, Արեգունի, Արտազ, Արենի, Արմավիր, Արտաշատ, Արճեշ, Արցախ, Արտամետ, Արմաշ, Արծն եւ այլն:

Ար աստծո պաշտամունքն արեւապաշտ հայի արյան ու էության մեջ է, այն նրա հայրենիքն է, նրա անունները, սուրբ վայրերը, գետերը, լեռները: Այն հայոց հրաշք լեզվի, կենցաղի, սովորույթների, երգերի, պարերի, դյուցազնավեպի, հեքիաթների, զրույցների մեջ է: Դրանցով մենք ապրել ենք հազարամյակներ: Մենք հետնորդներն ենք անհիշելի ժամանակներից Հայկական լեռնաշխարհում ապրող հպարտ, գեղեցիկ, ազնիվ, արարող, բարի ու քաջ հնագույն մի ցեղի, որի աստվածներն անգամ (Ար, Արամազդ, Վահագն, Միհր, Անահիտ) գեղեցիկ են իրենց բնույթով ու հատկանիշներով:

Օգտագործված գրականություն

1. Հ.Մնացականյան, Արեւապաշտության հետքերը հին Հայաստանում , Երեւան, 1948թ.
2. Մ.Խորենացի, «Հայոց պատմություն», Երեւան, 1981թ.
3. Մ.Գավուքչյան, «Հայ եւ արմեն անունների ծագումը եւ Ուրարտուն», Բեյրութ, 1973թ.
4. Ա.Տերյան, «Ար աստծո պաշտամունքը Հայաստանում », Երեւան, 1995թ.
5. Ստ.Եսայան, «Հայաստանի հնագիտություն», Երեւան, 1993թ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ԵՐԵՔՇԱԲԹԻ • 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

Փոփոխություններ՝ միտված ոլորտի բարելավմանը

Հարցազրույց ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սյունիքի տարածքային ստորաբաժանման ղեկավար Գագիկ Աղախանյանի հետ

ԿԱԴԱՍՏՐ

– Պարոն Աղախանյան, մեր զրույցն սկսենք Ձեր ղեկավարած ոլորտին առնչվող մի շատ առօրեական հարցով: Ի՞նչ ասել է անշարժ գույք:

– Անշարժ գույք են համարվում հողամասերը, անտառները, այգիները, շենքերը, շինությունները, անշարժ գույք հանդիսացող ընդերքի մի մասը, մեկուսի ջրային օբյեկտները, բազմամյա տնկիները՝ ստորգետնյա եւ վերգետնյա, այդ թվում նաեւ՝ կառուցվող շենքերը, շինությունները, այն ամենը, ինչն անհնար է առանց դրանց անհամաչափ վնաս հասցնելու անջատել հողից: Դրանց նկատմամբ իրավունքների պետական գրանցումը տիրոջը տալիս է պետության կողմից երաշխավորված սեփականության իրավունք, այդ սեփականությունից լիարժեքորեն օգտվելու իրավունք, ներառյալ գույքի վաճառքը, նվիրատվությունը, կտակումը, գրավադրումը, փոխանակումը եւ այլն:

– 2011թ. հունիսի 23-ին ՀՀ Ազգային ժողովը որոշեց փոփոխություններ կատարել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում, որով անշարժ գույքի կադաստրի ոլորտում բարեփոխումների հիմքեր դրվեցին: Ի՞նչ տվեցին այդ բարեփոխումները:

– Ինչպես հայտնի է, 2012-ի հունվարից անշարժ գույքի կադաստրի համակարգում իրականացվել

են համալիր արմատական փոփոխություններ, որոնք միտված են ոլորտում իրականացվող գործառնությունների թափանցիկության ավելացմանը, վարչարարության պարզեցմանը, ինչպես նաեւ մատուցվող ծառայությունների սպասարկման որակի բարելավմանը:

Իրականացված բարեփոխումների շնորհիվ սկզբունքորեն նոր մոտեցում ձեւավորվեց նաեւ անշարժ գույքի նկատմամբ գործարքների իրավական ձեւակերպման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում, մասնավորապես վերացվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված անշարժ գույքի գործարքների պարտադիր նոտարական վավերացման պահանջը (բացառությամբ միակողմ գործարքների) եւ այդ մասով ներմուծվեց կադաստրի համակարգերի կողմից ստորագրությունների իսկության ճանաչմամբ գործարքների կնքման ինստիտուտը, որը կիրառվում է բոլոր գրասենյակներում: Նշված գործարքները կադաստրի համակարգում իրականացվում են անվճար: Նաեւ փոփոխություն կարելի է համարել այն, որ եթե նախկինում գույքի գրանցման համար նախատեսվում էր գանձում ըստ շինության մակերեսի, ապա այժմ յուրաքանչյուր անշարժ գույքի գրանցման համար գանձվող վճարը նույնն է՝ 25 հազար դրամ՝ անկախ մակերեսի չափից: Բացի այդ, գրանցման համար սահմանվել են արագացված գործակիցներ: Մեր աշխատանքում երբեմն խոսում են քաշքշուկի մասին: Ուզում եմ փոքրիկ պարզաբանումներ տալ. եթե անշարժ գույքը պիտի գրանցել, անհրաժեշտ է պահանջվող փաստաթղթերը հավաքել: Քաղաքացիները երբեմն ասում են, թե քաշքշուկի մեջ են ընկնում: Բայց դա այդպես չէ. դա օրենքի պահանջն է: Նոր գույք գրանցելու համար քաղաքացին պիտի համայնքի հետ առնչվի, եթե անհրաժեշտություն կա, դիմի արխիվի ծառայությանը, նոտարական գրասենյակին եւ այլն: Իսկ եթե անշարժ գույքը գրանցված է, առանց քաշքշուկի կարելի է յուրաքանչյուր գործարք իրականացնել՝ բնակարանի առքուվաճառք, նվիրատվություն, գրավադրում եւ այլն: Յուրաքանչյուր գրասենյակում այս ամենի մասին տեղեկատվություն փակցված է մատչելի տեղում՝ ինչքան ժամանակում կարելի է կատարել գործարքը, ինչ վճարում կատարել եւ այլն:

– Իսկ ո՞րն եք համարում ոլորտի հիմնական ձեռքբերումը:

– Այն, որ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ գտնվելու վայրից, կարող է մտնել անշարժ գույ-

Շարունակությունը՝ էջ 16

Սյունիքի մարզի գնկտեսությանն առնչվող մի քանի տեղեկություն

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ց Ա Ն Կ 2012Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ ՀՈՒՆՎԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ընդամենը (հազ. դրամ)	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ) (հազ. դրամ)
1	ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	31,673,302.6	12,390,872.4
9	ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ	ԿԱՊԱՆ	7,125,126.5	2,582,085.6
25	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	3,081,098.1	797,230.0
94	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱ-ԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	1,000,580.2	198,875.8
200	ԱՐՊԱՆԻՎ	ԳՈՐԻՍ	474,567.5	33,309.4
236	ՋԱՆԳԵԶՈՒՐ ՄԱՅՆԻՆԳ	ՔԱՋԱՐԱՆ	392,516.0	159,216.0
319	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	291,350.5	79,906.2
403	ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ	ՄԵՂՐԻ	226,383.0	44,185.8
427	ԿԱՊԱՆԻ ՆՈՐՈԳՇԻՆ	ԿԱՊԱՆ	212,313.0	60,365.9
440	ԴԱՆԵՍԻԱ	ԿԱՊԱՆ	208,009.2	90,127.2
462	ԼԵՌ ԷՔՍ	ԿԱՊԱՆ	197,662.7	55,933.7
509	ԴԵԴԱԼ	ԿԱՊԱՆ	173,163.6	59,762.5
544	ԷԼՅԱՍԻԿ	ՍԻՍԻԱՆ	163,140.8	1,680.8
552	ԹՈՒՆԵԼ	ԿԱՊԱՆ	160,903.6	41,953.8
596	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ ՇԱՀԱԳՈՐԾ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	ԿԱՊԱՆ	149,253.8	40,969.1
607	ՍԻՍԻԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈ-ՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐ-ՏԱՅԻՆ	ՍԻՍԻԱՆ	147,241.5	28,953.5
692	ՆԵՄԱԼ ՍՊԸ	ԿԱՊԱՆ	122,249.1	43,374.9
695	ԿԱՊԱՆ-ԷՆԵՂԺԻ	ԿԱՊԱՆ	121,414.9	50,668.0
713	ՌՈՅԱԼ ՓՐԻՆԹ	Գ.ՀԱՐԺԻՍ	119,119.3	10,768.0
733	ՎՈԼՎԱՐ	ԿԱՊԱՆ	114,800.5	30,503.2
745	ՈՍՏԱՆԻԿ ՀԱՅՐԵՆՅԱՑ	ԱՆԳԵՂԱԿՈԹ	113,599.2	2,955.0
859	ՎԱՐԱՐԱԿՆ	ԳՈՐԻՍ	95,682.7	44,410.0
901	ՄԱՐԻԼԱ	ԿԱՊԱՆ	89,822.0	6,649.0
917	ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ	ՇԱՔԵ	88,105.9	22,678.0
943	ՇԱՀՐ	ԿԱՊԱՆ	84,749.9	22,395.1
975	ՄԵԽ ՆՈՐՈԳՈՒՄ	ՔԱՋԱՐԱՆ	81,146.3	33,716.0

Ց Ա Ն Կ 2012Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ, ՀՈՒՆՎԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ 3 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐԱԾ 1000 ԽՈՇՈՐ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ընդհանուր գումարը *(հազ.դրամ)*
5	ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	1,204,914.8
10	ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ	ԿԱՊԱՆ	511,000.0
17	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	383,200.0
152	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԿԱՊԱՆ	71,646.1
182	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	63,485.0
211	ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԳՈՐԻՍ	55,550.0
228	ԼԵՌ ԷՔՍ	ԿԱՊԱՆ	51,671.1
257	ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ԳՈՐԻՍ	46,100.0
316	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ ՇԱՀԱԳՈՐԾ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	ԿԱՊԱՆ	38,968.8
369	ԿԱՊԱՆԻ ՆՈՐՈԳՇԻՆ	ԿԱՊԱՆ	34,194.9
429	ԹՈՒՆԵԼ	ԿԱՊԱՆ	30,831.8
431	ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ՍԻՍԻԱՆ	30,550.0
461	ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ	ՄԵՂՐԻ	28,742.0
512	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	26,094.6
572	ԿԱՊԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ԿԱՊԱՆ	23,834.5
573	ՄԵԽ ՆՈՐՈԳՈՒՄ	ՔԱՋԱՐԱՆ	23,804.7
640	ԴԱՆԵՍԻԱ	ԿԱՊԱՆ	21,814.1
663	ՀՀ ԱՆ ՊՀՀ ՏԵՍՉ ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈՐՁ ԿԵՆՏ	ԿԱՊԱՆ	21,079.2
667	ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ՄԵՂՐԻ	20,885.6
714	ՎԻ ԷՅՋ ՍԹՈՈՒՆ	ՍԻՍԻԱՆ	19,687.5
773	ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹ	ՔԱՋԱՐԱՆ	18,525.5
777	ԿԱՊԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՄ Բ Հ	ԿԱՊԱՆ	18,448.4
809	ՎԱՄԱՔՍ	ԿԱՊԱՆ	17,890.1
835	ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ	ԿԱՊԱՆ	17,473.5
889	ԿԱՊԱՆԻ ԵՐԵԽ ԽՆ ԵՎ ՊԱՇՏՊ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍ	ԿԱՊԱՆ	16,384.9
915	ՇԱՀՐ	ԿԱՊԱՆ	15,977.8
934	ԳՈՐԻՍԻ ԳԱՄՄԱ	ԳՈՐԻՍ	15,576.7
953	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ԿԱՊԱՆ	15,360.0
976	ՆԵՄԱԼ ՍՊԸ	ԿԱՊԱՆ	15,096.5
980	ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ՔԱՋԱՐԱՆ	15,067.9
982	ՈՍՄԱՐ	ԳՈՐԻՍ	15,040.0
996	ԴԵԴԱԼ	ԿԱՊԱՆ	14,845.6

Ց Ա Ն Կ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ 100 ԵՎ ԱՎԵԼԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԹԻՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱԾ ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Կազմակերպության անվանում	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Հայտարարագրված աշխատողների թիվը
5	ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	Քաջարան	3294
19	ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ	Կապան	1184
28	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	Ագարակ	1018
91	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Կապան	404
126	ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Գորիս	317
188	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	Գորիս	221
269	ԼԵՌ-ԷՔՍ	Կապան	162
275	ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Սիսիան	159
398	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ. ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	Կապան	112
414	ԹՈՒՆԵԼ	Կապան	106

«Եթե ջուր լիներ...»

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ

Սկիզբը՝ էջ 2

մարզում, բայց եղած հողերից ընդամենը 76հա է մշակվում՝ մի մասը սեփականաշնորհված է, մի մասը՝ վարձակալությամբ: Քանի որ խոսվեց հողի մասին, նշենք, որ Նռնաձորում է գտնվում «Գորիս» քրեակատարողական հիմնարկի Մեղրու տեղամասը, որտեղ պատիժ են կրում անզգուշությամբ հանցանք կատարածները՝ մեկ տասնյակից ավելի մարդ: Եվ քրեակատարողական այս հիմնարկին է հատկացվել գյուղական նշանակության 148հա հող, որից 82 հեկտարը բանջարաբոստանային եւ պտղատու այգիների հողատարածություն է, որը հնարավոր չէ լիարժեք մշակել հիմնարկի աշխատուժի միջոցով: Գյուղապետի համոզմամբ՝ մի հոգին կարող է մշակել 5 հազար քառակուսի մետր, եթե դրանից ավելիին է ձեռք զարկում, ուրեմն մի բան այն չի լինի: Կա նաեւ մեդալի մյուս կողմը: Քանի որ այն պետական ոչ առեւտրային կազմակերպություն է, ազատված է հողի հարկից, ինչից տուժում է համայնքը, քանի որ գյուղի մշակովի հողերը կրճատվել են, իսկ համայնքի բյուջեն դրանից միայն տուժում է: Այսօր համայնքի բյուջեն 4 մլն 700 հազար դրամ է, որ միայն բավարարում է գյուղապետարանի աշխատակազմին աշխատավարձ վճարելուն: Համայնքի ղեկավարը դիմել է հանրապետության նախագահին, ՀՀ տարածքային կառավարման նախարարին՝ նշված հողերը վերադարձնելու որպես համայնքային սեփականություն, քանի որ կարծում է, որ դրանից հետո դրանք լիարժեքորեն կմշակվեն եւ հատույց կտան: Եվ սա դեռ ամենը չէ:

Խնդրահարույց է մնում պետական սահմանային շերտում գտնվող 30հա հողերի մշակումը (գյուղի վարչական տարածքը սահմանակից է Իրանին): Գյուղապետի համոզմամբ՝ սահմանամերձ հողերի նշանակությունը պիտի փոխվի, դրանք պետք է լինեն ոչ թե հատուկ նշանակության, այլ գյուղատնտեսական նշանակության հողեր: Սրանք համայնքին վերադարձնելու խնդրանքով եւս Մ.Մկրտչյանը դիմել է վերադաս մարմիններին: Բայց, ինչպես առաջին դեպքում, դրական պատասխան չկա: **«Դրանք բերքատու հողեր են, եթե մերձարեւադարձային մշակաբույսեր տնկվեն, հողի հարկ գանձելով՝ բյուջեի մուտքերը կավելանան, ե՛ւ պետությունը կշահի, ե՛ւ ժողովուրդը,** – եզրակացնում է մեր զրուցակիցը, – **չլինի այնպես, երբ գալիս է նուռը հասնելու ժամանակը, Իրանից ու Թուրքիայից ներկրում են նուռ ու արքայանարինջ, իսկ գյուղացու նույն միրգը մնում է մառանում ու փչանում կամ էլ դառնում ջրի գին: Գյուղացու միակ եկամուտը նուռն է, անցած աշնանը նռան կիլոգրամի գինն իջավ, հասավ 150 դրամի, ինչո՞վ գոյատեւի հողի վրա քրտինք թափող մարդը»:**

Նռնաձորում գործում է եռաստիճան ոռոգման համակարգ (հանրապետությունում նման համակարգ գործում է մեկ էլ Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղում): Պոմպակայանները կառուցվել են անցյալ դարի 60-70-ականներին, 2000-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով բարելավվել է ջրատարի վիճակը, բայց այսօր վթարներն անպակաս են մագիստրալի մաշվածության պատճառով, նռնաձորցիներին օգնության ձեռք են մեկնում «Մեղրի» ջրօգտագործողների ընկերության աշխատողները: Նրանց մասին գյուղապետն ասում է, որ հերոս տղերք են: Շարքից դուրս են գալիս նաեւ պոմպերը՝ Արաքսի պղտոր ջրի պատճառով: Հիմնախնդրի լուծումը կապում են Մեղրի գետի ջուրն ինքնահոս եղանակով Նռնաձոր հասցնելու հետ, ինչպես դա եղել է տարիներ առաջ, քանզի ներկա ջրագիծը նորոգելու համար մեծ գումար կպահանջվի: Այս դեպքում, ըստ գյուղապետի, կտնտեսվի 80 մլն դրամ (հաշվի է առնում այն հանգամանքը, որ որպես լրավճար տարեկան 130 մլն դրամ է հատկացվում «Մեղրի» ջրօգտագործողների ընկերությանը՝ պոմպերի ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց):

Լուսանկարը՝ Ջ.Հայծբարձումյանի

Նռնաձորի դպրոցի նորակառույց շենքը

Արաքսամերձ հովիտը

Այնուամենայնիվ, մեզ հանդիպած նռնաձորցիներից միակն Ալեքսան Բոյաջյանն էր, ով նոր ընտանիք է ստեղծել, կինն ուսուցչուհի է գյուղի դպրոցում: Մեկ հեկտարից ավելի հող է մշակում, բերքահավաքի ժամանակ օգնող ձեռքի կարիք է ունենում, ընկեր-բարեկամ օգնում են, հիմնականում նուռ է աճեցնում, հեկտարից 10-12տ նռան բերք է ստանում: Եթե կարողանա կալիումական եւ ֆոսֆորական պարարտանյութով սնուցի, ծառերը մոտ 30տ բերք կտան: «Եթե գյուղը չսիրես, չես կարող մնալ այստեղ», – սա նրա հավատամքն է: Նռնաձորի նոր ճանապարհը, ըստ մեր զրուցակցի, ե՛ւ օգնում է, ե՛ւ խանգարում: Իսկ մեր զարմանքին, թե ինչու է խանգարում, առանց հապաղելու բացատրում է: **«Հողածածկ ճանապարհի (նկատի ունի նախկին երկաթգծի տեղով անցնող ճանապարհահատվածը, խմբ.) փոսերը շատ են, մնացել ենք ավտոպահեստամասերի խանութում, երբեմն էլ ինքներս ենք վերացնում մեքենայի անսարքությունը: Աշխատածիս մեծ մասը ծախսվում է պահեստամասեր գնելու վրա»,** – վերջում մտահոգություն է հայտնում Ալեքսանը, նաեւ հույս փայփայում, որ պետությունը միջոցներ կհատկացնի այդ ճանապարհահատվածը եւս ասֆալտապատելու համար եւ սահմանադուռ, սահմանապահ, սահմանամերձ եւ ծայրամասային այս գյուղն ի վերջո Մեղրի քաղաքին կապող բարեկարգ ճանապարհ կունենա:

Իսկ ահա համայնքի բուժկետը սեփական միջոցներով են նորոգել, կառույցը ծածկ չուներ: «Համայնքի մարդիկ գոհ են բուժքրոջից, ում գիշերվա ժամը չորսին էլ զանգես, վազելով է գնում հիվանդի մոտ» , – ասում է գյուղապետը:

Գյուղն առանց դպրոցի՝ Շիրազի բնորոշմամբ անլեզվակ զանգակի է նման: Համայնքի միջնակարգ դպրոցում 32 աշակերտ է ուսանում, ասել է՝ զանգակի ղողանջները դեռ լսելի են: Օրինակելի դպրոց ունեն, խոսքը, նախեւառաջ, կահավորանքի մասին է եւ ներքին հարդարման, ինչպես նաեւ համակարգիչներով համալրված լինելու: Այս ամենին օժանդակել է Հայ առաքելական եկեղեցու պարսկահայ թեմը: Կրթօջախի ուսուցիչների (բոլորը տեղացի են) եւ սպասարկող անձնակազմի թիվը հասնում է 15-ի: Գյուղապետը տալիս է վաստակաշատ մանկավարժների անուններ՝ Լյուբա Մուրադյան, Սվետլանա Աբրահամյան, բայց նաեւ ավելացնում, որ երկուսն էլ առողջական խնդիր ունեն, բացի այդ եկել է նրանց վաստակած հանգստի անցնելու ժամանակը: Նոր ուստարվա շեմին Նռնաձորի կրթօջախը կադրային լուրջ խնդրի առջեւ է կանգնելու…

«Եթե ջուր լինի, ջերմոցային տնտեսություն հիմնես, տարվա բոլոր ամիսներին կարելի է բերք ստանալ», – այս միտքն առավել տպավորվել է մեջս, երբ մերադառնում էինք Նռնաձորից:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ականազերծման աշխատանքներին համակարգային ընթացք է տրվելու

ԱԿԱՆԱԶԵՐԾՈՒՄ

Մարտի 26-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում տեղի է ունեցել քննարկում՝ նվիրված «Հումանիտար ականազերծման եւ փորձագիտական կենտրոն» (ՀԱՓԿ) ՊՈԱԿ-ի եւ Շվեյցարիայի ականազերծման հիմնադրամի համագործակցությամբ 2012թ. սեպտեմբերից ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Տավուշի եւ Գեղարքունիքի մարզերում իրականացված եւ իրականացվելիք հումանիտար ականազերծման աշխատանքների ոչ-տեխնիկական, տեխնիկական հետազոտության եւ բուն ականազերծման փուլերին:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, մարզպետներ, համայնքապետեր, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես է եկել եւ աշխատանքային օրակարգը ներկայացրել ՀՀ ՊՆ առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանը: ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, ՀԱՓԿ խորհրդի նախագահ Արա Նազարյանը տեղեկացրել է, որ հումանիտար ականազերծման բնագավառում ոչ տեխնիկական հետազոտության 2013թ. մայիս ամսին ավարտվող աշխատանքներին կհաջորդեն ականազերծման աշխատանքները: Հետազոտությունների անցկացմանը զուգընթաց վերագործարկվելու է ականազերծման գործընթացների կառավարման տեղեկատվական բազան. **«ՀՀ տարածքի համապարփակ ականազերծման համար գերակա խնդիր է միջազգային փորձի ուսումնասիրումը, ականազերծման ազգային ծրագրի մշակումն ու ընդունումը եւ դրա հետեւողական իրագործումը: Ոչ տեխնիկական հետազոտության արդյունքներն ամփոփելուց հետո ականազերծման կենտրոնը հնարավորություն կունենա մշակել եւ ՀՀ կառավարությանը ներակայացնել ճշգրիտ տեղեկատվության վրա հիմնված ականազերծման ծրագրի նախագիծ, որն ընդունվելուց հետո հետամուտ կլինի դրա իրագործմանը»,** – ասել է ՀԱՓԿ խորհրդի նախագահը:

ՀԱՓԿ ՊՈԱԿ տնօրեն Ռ.Առաքելյանն իր ելույթում ներկայացրել է ՀԱՓԿ-ի աշխատանքները եւ ծրագրերը, միջազգային կառույցների հետ համագործակցության ուղիները:

Ելույթներով հանդես են եկել նաեւ Շվեյցարիայի ականազերծման հիմնադրամի (FSD) ծրագրերի իրականացման ղեկավար Վալերի Ֆաբբրոնին, հիմնադրամի հայաստանյան ներկայացուցիչ Յ.Օդենդաալը՝ քննարկման մասնակիցներին ներկայացնելով 2012թ. հոկտեմբեր–2013թ. մարտ ժամանակահատվածում հիմնադրամի կողմից ՀՀ մարզերում իրականացված ոչ տեխնիկական հետազոտության արդյունքների մասին վերլուծությունը, գնահատումը, ինչպես նաեւ անկախ փորձագետների առաջարկները:

Ամփոփիչ ելույթով հանդես է եկել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Շնորհակալություն հայտնելով միջոցառմանը մասնակցող մարզպետներին, համայնքապետերին, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններին եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ Սեյրան Օհանյանը մասնավորապես ասել է. **«1994թ.-ից հետո ականազերծման ծավալուն աշխատանքներ են կատարվել: Այսօր եկել է ժամանակը, որ մենք այդ ամենին տանք համակարգային ընթացք: ՀՀ սահմանի ամբողջ երկայնքով բավականին լուրջ աշխատանք է կատարվել անվտանգության ապահովման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Նախկինում կատարված աշխատանքների ընթացքում եղել են նաեւ թերացումներ, որոնք այլեւս պետք է բացառվեն, որովհետեւ գործ ունենք խաղաղ բնակչության անվտանգության ապահովման հետ»,** – եզրափակել է Սեյրան Օհանյանը:

■

Կիավերժացվի Լիսաբոնում նահատակվածների հիշատակը

Կապանի քաղաքապետարանի նիստերի դահլիճում մարտի 29-ին կազմակերպվել էր հանդիպում, որի ընթացքում քննարկվեց «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ վարչական տնօրեն Հրաչ Զաբրյանի անձնական նամակը՝ ուղղված Կապանի քաղաքապետին եւ համայնքի ավագանու անդամներին, որով առաջարկվում է «Հայոց ցեղասպանության Կապանի հուշակոթողի հարակից տարածքը դարձնել ցեղասպանության կազմակերպիչներին պատժած ու այդ պայքարին անձնազոհության գնացած մարդկանց նվիրված պուրակ» եւ «Լիսաբոնի թուրքական դեսպանության գրավման 30-ամյակի առիթով թույլատրել Կապանում տեղադրել գործողության մասնակից հինգ նահատակների հուշատախտակները»: Ներկայացված առաջարկների քննարկմանը մասնակցում էին Կապան համայնքի ավագանու անդամներ, ՀԿ եւ ԶԼՄ ներկայացուցիչներ, պատմաբաններ, քաղաքապետարանի ու «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ աշխատակիցներ: «Ինձ համար շատ կարեւոր է, որ ցեղասպանության 100-ամյակի շեմին մենք անդրադառնանք այդ բոլոր տղաների ու աղջիկների հիշատակին», - ասաց Հրաչ Զաբրյանը: Երկու ժամ տեւած քննարկման ընթացքում իրենց ելույթներում մասնակիցները հնչեցրեցին միանգամայն տարբեր տեսակետներ: Մի մասի կարծիքով առաջարկը ողջունելի է, մյուս մասի կարծիքով՝ կառուցվելիք հուշակոթողը դաստիարակչական նշանակություն պետք է ունենա սերունդների համար եւ նախընտրելի է, որ այն նվիրված լինի ոչ միայն Լիսաբոնի գործողությունների ժամանակ նահատակված տղաների, այլեւ բոլոր այն հայերի հիշատակին, ովքեր կյանքի գնով պայքարել են հանուն ցեղասպանության ճանաչման: «Համամիտ եմ, որ տղաները փորձել են իրենց գործողություններով նպաստել ցեղասպանության ճանաչման գործին… Սակայն, ի՞նչ արդյունք տվեցին այդ գործողությունները հայ ազգին եւ ընդհանրապես՝ ցեղասպանության ճանաչման գործին», - իր խոսքում ասաց քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Այնուամենայնիվ Կապանի ավագանին ապրիլի 2-ին հավանություն է տվել Հրաչ Զաբրյանի նախաձեռնությանը:

■

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ԵՐԵՔՇԱԲԹԻ • 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Հին ու միշտ նորոգ բարեկամության գեղեցիկ դեմքը...

Գագիկ Դավթյանի գրքերի շնորհանդեսը Թբիլիսիում

Հայ-վրացական բազմադարյա բարեկամության ոսկե մատյանը համալրվեց եւս մեկ էջով եւ այն այս անգամ էլ, ինչպես շատ հաճախ, զարդարվեց մեր ժողովուրդների գրական օրավուր զարգացող առնչությունների մի գեղեցիկ դրվագով:

ՖՈՏՈԼՈՒՐ

Մարտի 22-ին, Թբիլիսիում, Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության հանդիսությունների դահլիճում կայացավ հայ անվանի բանաստեղծ, թարգմանիչ, մի շարք գրական մրցանակների դափնեկիր Գագիկ Դավթյանի վրացերեն «Բաց նամակ» բանաստեղծական ժողովածուի եւ իր թարգմանությամբ «Ուղեկիցներս Քարթլոսի տնից» վրացական արդի պոեզիայի նոր անթոլոգիայի շնորհանդեսը:

Ներկա էին Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Գուրամ Օդիշարիան, պաշտոնական այցով Վրաստանում գտնվող ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Վրաստանում ՀՀ արտակարգ ու լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» հայալեզու թերթի խմբագիր Վան Բայբուրթը, երկու երկրի գրողների միության նախագահներ Մաղվալա Գոնաշվիլին ու Լեւոն Անանյանը, հայ եւ վրացի գրողներ, մտավորականության ու հոգեւոր դասի ներկայացուցիչներ, լրագրողներ:

Շնորհանդեսը բացեց ու Գագիկ Դավթյանի ստեղծագործական ուղու, վրաց գրողական ընտանիքի հետ նրա սերտ ու բարեկամական կապերի մասին խոսեց Վրաստանի մշակույթի նախարար, բանաստեղծ Գուրամ Օդիշարիան՝ կարեւորելով նման հրատարակությունների, հանդիպումների, շփումների դերը ազգերի մերձեցման, փոխճանաչողության, ավանդույթների պահպանման, դրանք սերունդներին կտակելու գործում: **«Ավանդույթները շարունակվում են, եւ հաճելի է, որ այս ուղղությամբ համագործակցում են մեր գրողների միությունները ու նախարարությունները, եւ արդյունքում ծնվում ու իրագործվում են ոչ մեկ կամ մի քանի ծրագրեր ու նախագծեր: Այսօրվա բազմամարդ շնորհանդեսը պոեզիայի ու բարեկամության տոն է, եւ անուրանալի հավատչյան այս ամուր կապի»,** – ընդգծեց նա՝ երախտիքի իր խոսքը հղելով Գագիկ Դավթյանին, ժողովածուի թարգմանիչներին (Մ. Գոնաշվիլի, Գ.Շահնազար, Բ.Արաբուլի, Վ.Խարչիլավա, Վ.Խորնաուլի, Գ.Պիրվելի, Մ.Կեզուա), «Մերանի» հրատարակչությանը, ինչպես նաեւ Վրաստանի գրողների միությանը՝ ծրագրին ու տպագրությանն աջակցելու համար:

Վրաստանում ՀՀ դեսպանը բարձր գնահատեց գրականության դերը ժողովուրդների մերձեցման գործում, ընդգծելով, որ Գագիկ Դավթյանի թե վրացերեն գիրքը, թե վրացական պոեզիայի իր նոր անթոլոգիան խոսուն վկայությունն են այդ իրողության ու իսկապես արժանի են մեծ գնահատանքի: Նա հատուկ շնորհակալություն հայտնեց Վրաստանի մշակույթի նախարարությանն ու գրողների միությանը:

Օրվա խորհրդին ջերմորեն անդրադարձան ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, հռչակավոր արձակագիր Ռեվազ Միշվելաձեն, Վրաստանի մշակույթի փոխնախարար Մարիմնա Միզանդարին:

ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը հանգամանալից ներկայացրեց Գագիկ Դավթյան տաղանդավոր բանաստեղծին, հիանալի թարգմանչին ու տոհմիկ հայորդուն՝ մեջբերելով Մեծն Պարույր Սեւակի խոսքերը՝ «Եկեք հիշենք Գագիկ Դավթյան անունազգանունը (այսինքն՝ կարդանք նրա գրածները) եւ դրանով իսկ ստիպենք շնորհալի երիտասարդին արդարացնելու իմ եւ ձեր հույսերը», հավելելով, որ վաղուց արդեն նա իր արժանի տեղն ունի արդի հայ գրականության մեջ: Նա նշեց նաեւ այն հեղինակներին, ում թարգմանել է Դավթյանը. Լիվադիտիս, Թագոր, Դիկտոնիուս, Բյոռնս, Պուշկին, Լերմոնտով, Ֆետ, Բլոկ, Բիտով, Լյուբիցա Միլետիչ... ավելի քան 50 հեղինակ, որից երեսունը՝ վրացի... «Այս շնորհանդեսին էլ, - ասաց Լ.Անանյանը, - Գագիկը դատարկ ձեռքերով չի եկել. նա բերել է «Ուղեկիցներս Քարթլոսի տնից» անթոլոգիան, որում տեղ է գտել արդի վրացական պոեզիայից իր թարգմանությունների մի փոքր մասը՝ սքանչելի հայերենով»:

Հուզիչ էր Վրաստանի գրողների միության նախագահ, վրացերեն գրքի առաջաբանի հեղինակ՝ բանաստեղծուհի Մաղվալա Գոնաշվիլու խոսքը: Նա ջերմորեն շնորհավորելով հին ու մտերիմ գրչընկերոջը, ով նաեւ իր «Արեւի արցունքը» հայերեն գրքի թարգմանության հեղինակն է, հույս հայտնեց, որ Գագիկ Դավթյանի ժողովածուի բանաստեղծական «նամակները» կհասնեն վրաց ընթերցողների սրտերին, կդյութեն ու նաեւ խորհել կտան մեր կյանքի շատ ու շատ անցանկալի հիմնախնդիրների շուրջ:

Ռուսթավելու ընկերության նախագահ, գրող Դավիթ Շեմոքմեդելին Գագիկ Դավթյանին հանձնեց ընկերության Դավիթ Գուրամիշվիլու անվան մրցանակը՝ հայ եւ վրաց մշակույթների դարավոր կապերի ամրապնդման գործում մեծ վաստակի համար:

Բանաստեղծի տասնամյակների գործունեությունը բարձր գնահատեց անվանի թարգմանիչ Գիվի Շահնազարը, ով հանգամանալից խոսեց Դավթյանի քաղաքացիական նկարագրի, նրա բարձրարվեստ բանաստեղծական ու թարգմանական աշխարհի մասին՝ ընթերցելով հատվածներ գրքից:

Վերջում, ներկաներին իր շնորհակալության ու երախտիքի խոսքը հղեց Գագիկ Դավթյանը: Գեղեցիկ ու հուզիչ էր նրա խոսքը՝ իսկական բարեկամի, սրտացավ, նվիրյալ հարազատի խոսք, նվիրում, որի ակունքները գալիս են հեռավոր 80-ականներից, երբ ինքն առաջին անգամ այցելեց Վրաստան՝ որպես պոեզիայի համամիութենական փառատոնի մասնակից, արժանացավ Վ.Մայակովսկու անվան մրցանակին, ծանոթացավ իր վրացի գրչընկերների հետ ու սիրեց նրանց, նրանց խոսքն ու գիրը, նրանց պատմությունն ու սքանչելի երկիրը: **«Ես դեռ չէի հասցրել ուշքի գալ**, – ասաց Դավթյանը, – **երբ Թբիլիսիում լույս տեսավ իմ առաջին վրացերեն գիրքը: Եվ սկսվեց մեր գրական ֆուտբոլը: Ես հրատարակեցի վրաց իմ սերնդակիցների առաջին հայերեն անթոլոգիան՝ «Սիրո ժառանգորդները»...Հետո էլի հայերեն գրքեր եւ հիմա էլ՝ ահա իմ երկրորդը՝ վրացերեն ...Մեր հաշիվն այսօր 4:4 է.. Հաջորդ գոլը ով կխփի, անհայտ է, սակայն պարզ է՝ այս ֆուտբոլը կշարունակվի...»:**

Բարձր գնահատելով վրաց արդի պոեզիան, եւ օրը երջանիկ համարելով ոչ միայն իր համար, Գագիկ Դավթյանը խոսքն ավարտեց՝ հրապարակելով 25-ամյա վաղեմության մի ջերմ նամակ, որի հեղինակը Վրաստանի մշակույթի նորանշանակ նախարար, բանաստեղծ Գուրամ Օդիշարիան է...Այն գրվել է հայոց երկրաշարժից մի քանի օր անց եւ ավելի քան խոսուն է՝ ճշմարիտ ու հին բարեկամությունը երբեք չի խամրում...Ահա այն.

«Իմ սիրելի Գագիկ ...Քո ժողովրդի ցավն իմ ժողովրդի ցավն է ... Հենց իմացա Հայաստանին պատուհասած ողբերգության մասին, ես անմիջապես քեզ հիշեցի, սակայն չգիտես ինչու, վախենում էի գրել: Հուսամ, որ այն սարսափելի օրը՝ դեկտեմբերի 7-ին, դու մտերիմ ազգականներ, ընկերներ չես կորցրել, սակայն եթե դա այդպես է, ապա իմացիր, այնտեղ, ուր հեղվում են քո արցունքները, այնտեղ ես էլ եմ լալիս: Պինդ կաց, արիացիր: Եթե որոշես, արի Սուխումի... Հիշիր,այստեղ դու եղբայր ունես, որ սպասում է քեզ:

Գրկում եմ: Քո՝ Գուրամ Օդիշարիա: Սուխումի: 15 դեկտեմբերի, 1988»:

Հուզվեցին բոլորը եւ բոլորից ավելի՝ նամակի հեղինակը:

Մեկնաբանություններն, ինչպես ասում են՝ ավելորդ են:

ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Բանաստեղծուհի, թարգմանիչ, «ԿԱՄՈՒՐՋ» տարեգրքի գլխավոր խմբագիր

Ամփոփվեցին մարզային փուլի արդյունքները

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 4-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ 2012-2013 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլի արդյունքների ամփոփման արարողությունը: Ինչպես իր խոսքում նշեց Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Լեւոն Մարգարյանը, մարզային փուլին մասնակցած 500-ից ավելի աշակերտներից 58-ն արժանացավ առաջին, 57-ը՝ երկրորդ, 54-ը երրորդ կարգի դիպլոմի: Մարզային փուլում աչքի ընկած 103 դպրոցական այս օրերին մասնակցում է առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին, եւ ոմանք արդեն հաջողությունների են հասել քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա առարկաներից: Նաեւ նշվեց, որ ընթացող օլիմպիադայում մաթեմատիկա առարկայից ոչ մի ձեռքբերում չկա, ինչը լուրջ մտահոգության տեղիք պիտի տա: Իսկ մարզային փուլի մրցանակակիրներին դիպլոմներ եւ դրամական պարգեւներ հանձնեց եւ բարեմաղթանքներ հղեց Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը: Դպրոցականներին հաջողություններ մաղթեց նաեւ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեղավոր է ճանաչվել անմեղ անձանց ծանր հանցագործության մեջ մեղադրելու համար

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հիմնավորված է համարել սուտ մատնություն կատարելու համար Գորիս քաղաքի բնակչուհի, Գորիսի պետական համալսարանի 1-ին կուրսի ուսանողուհի Աննա Առաքելյանին առաջադրված մեղադրանքը եւ դատապարտել ազատազրկման՝ 1/մեկ/ տարի ժամկետով: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել եւ սահմանվել է փորձաշրջան 1/մեկ/ տարի ժամկետով:

Դատարանում հիմնավոր համարված ապացույցների համաձայն՝ Աննա Առաքելյանը, իր կամքով համաքաղաքացիներ Մ.Միրզոյանի եւ Դ.Հայրապետյանի հետ գնալով սրճարան եւ գիտակցելով իր տրամադրած տեղեկատվության կեղծ լինելու մասին, ոստիկանության Գորիսի բաժնում գրավոր հաղորդում տալու եղանակով կատարել է սուտ մատնություն, իբրեւ Մ.Միրզոյանը եւ Դ.Հայրապետյանը իրեն առեւանգել են եւ պահել անազատության մեջ՝ վերջիններիս մեղադրելով ծանր հանցագործություն կատարելու մեջ:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 22.03.2013թ. դատավճռով Աննա Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ դատապարտվել ազատազրկման 1 տարի ժամկետով:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել եւ սահմանվել է փորձաշրջան 1/մեկ/ տարի ժամկետով:

Սյունիքի մարզի դատախազություն

Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի քննչական բաժնում ավարտվել է Կապան քաղաքի բնակչուհի Աղավնի Մարտիրոսի Ստեփանյանի կողմից վեց անձանց օգտագործելով պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը:

Քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը:

Նախաքննությամբ մասնավորապես պարզվել է, որ Աղավնի Ստեփանյանը 2005թ. մինչեւ 2012թ. նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում, պոռնկությամբ զբաղվող Ա.Մարտիրոսյանից, Ն.Ղազարյանից, Ք.Գրիգորյանից, Լ.Պապյանից, Լ.Վարդանյանից եւ Ա.Եփրեմյանից գույքային օգուտ՝ միջնորդավճար ստանալով, նպաստել է նրանց պարբերաբար պոռնկությամբ զբաղվելուն՝ միջնորդել այդ կանանց հետ սեռական հարաբերությունների մեջ մտնելու ցանկություն հայտնած անձանց եւ այդ նպատակով նրանց տրամադրել է վերջիններիս, յուրաքանչյուր միջնորդության համար պահանջելով ու ստանալով 5000 ՀՀ դրամ, իսկ Կապան քաղաքի բնակիչներ՝ Կոստյա Սողոմոնյանը եւ Վահե Սարգսյանն օժանդակել են նրան:

Նախկինում Աղավնի Ստեփանյանը պոռնկությամբ զբաղվելուն նպաստելո համար Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռով դատապարտվել էր 1 տարի պայմանական ազատազրկման: Ձեռք բերված ապացույցների հիման վրա Աղավնի Մարտիրոսի Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, իսկ վերջինիս օժանդակելու համար Կոստյա Մելսիկի Սողոմոնյանին եւ Վահե Արտակի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով: Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Սյունիքի մարզի դատախազություն

ՀՈԲԵԼՅԱՆ

«Ամենապիտուր օրս այն է եղել, երբ թողել եմ դպրոցը»

«Դպրոցն իր էությամբ ավանդապահ կառույց է, բայց վերջին երկու տասնամյակում այն դառը փորձությունների շատ ենթարկվեց, խարխլվեցին դպրոցի հիմքերը: Խորհրդային դպրոցը լավագույններից մեկն է եղել աշխարհում, աշակերտին բազմակողմանի կրթություն է տվել, նպաստել նրա ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինքնուրույնության բացահայտմանը: Դա՝ իմ դասավանդած ժամանակ, իսկ հիմա՝ չգիտեմ», - իր մտորումներն է հայտնում Կապանի կրթության եւ դաստիարակության նախկին աշխատավորներից մեկը՝ Վանյա Գալստյանը: Լրացել է վաստակաշատ մանկավարժի 80-ամյակը, եւ հոբելյանը պատեհ առիթ է արժեւորելու նրա կյանքի ուղին, որում ուսանելի եւ ընդօրինակելի բազում պահեր կան:

Հայրենի Մալդաշի (այժմ՝ Քաշունի), ապա Տանձավերի դպրոցներում է ստացել յոթնամյա կրթությունը: Մասնագիտական կրթություն ստանալու ձգտումը նրան Գորիսի մանկավարժական ուսումնարան տարավ: Դա 1948-ին էր, իսկ կրթաջախը գերազանցությամբ ավարտեց 1952 թվականին: Հեռավոր այդ տարիներին ստացած ուսման, ուսումնարանում դասավանդողների մասին տեղեկություններ ենք քաղում նրա նոթատետրից. «Գորիսն ուրիշ միջավայր էր, որ ուսման ծարավ գյուղական պատանիներիս տվեց խորը գիտելիքներ, համակողմանի զարգացում: Այդ ամենի համար մեծապես պարտական եմ ուսումնարանի խորագիտակ ուսուցիչներիս՝ Արամայիս Սարգսյան, հետագայում՝ ակադեմիկոս, Աշոտ Թելունց, հետո դարձավ «Լենինյան ուղիով» ամսագրի խմբագիր, Աշխեն եւ Սերոբ Բարխուդարյաններ, Անդրանիկ Բուդաղյան, Ռուբեն Գիչունց, Արտավազդ Յոլյան, ուրիշներ: Հատկապես պաշտել եմ Թելունց Աշոտին, ով տրամաբանություն եւ հոգեբանություն էր դասավանդում՝ իր միտքը հաստատելու համար օրինակներ բերելով եվրոպական գրականությունից: Առաջին անգամ նրանից եմ լսել Բալզակի անունը, գնացել Գորիսի քաղաքային գրադարան, որ ընթերցելու համար Բալզակի որեւէ գիրք տան: Ինձ հրամցրին «Հայր Գորիո» վիպակը: Եվ այսպես տեղի է ունեցել իմ ծանոթությունը եվրոպական գրականության հետ»:

Ուսումնարանն ավարտելուց հետո վերադարձել է տուն, մայրն ասել է՝ բավական է սովորես, հիմա էլ աշխատիր: Բայց Վանյան անդրդվելի էր, հիշում էր՝ մանկության տարիներին ինչպես էր հայրն ասում՝ թե կենդանի լինեմ, փափախս ծախելու եմ, քեզ բարձրագույն կրթության տամ: Այս անգամ էլ բուհավարտ դառնալու նկրտումը նրան նավթագործների քաղաք՝ Բաքու տարավ, ավելի ստույգ՝ այդ քաղաքի մանկավարժական ինստիտուտ: Նախապես ցանկություն ուներ տեխնիկական կրթություն ստանալ, բայց բուհի հայ դասախոսներից մեկի հորդորով ընտրեց բանասիրության բաժինը: Բուհը եւս ավարտել է գերազանցությամբ, կրթաջախի ղեկավարությունը երաշխավորել է ուսումը շարունակել ասպիրանտուրայում, սակայն ընտանեկան պայմաններն այլ բան էին հուշում: Եվս մեկ անգամ եմ թերթում նրա նոթատետրը.

«Հորիցս զրկվել եմ, երբ չորրորդ դասարանում էի սովորում, այդ օրվանից էլ ընտանիքի հոգսերի մի մասը ծանրացավ ուսերիս: Սովորելու տարիներին՝ ամառային արձակուրդի օրերին, աշխատել եմ կոլտնտեսությունում, կատարել ամեն տեսակի աշխատանք. հոտաղ եմ եղել, անասնապահ, հնձվոր, տրանսպորտի աշխատող: Սեփական ուժերով եմ կյանքիս ուղին հարթել: Ոչ մի բարեկամ կամ բարի քեռի ինձ չի հովանավորել»:

Կաթնառատի յոթնամյա դպրոցն է եղել նրա մանկավարժական գործունեության առաջին հանգրվանը, նախ՝ որպես մայրենիի ուսուցիչ, ապա՝ մեկ տարի աշխատելուց հետո՝ կրթաջախի տնօրեն: Լավագույն կադրին, որքան էլ ցավալի է, գյուղում երկար չեն պահում: 1962-ին տեղափոխում են Ողջիի միջնակարգ դպրոց, որտեղ իր խոստովանությամբ շատ բան է սովորել երջանկահիշատակ Ռուբեն Թադեւոսյանից (ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ): 1965-ին Քաջարանի Աջափնյակ թաղամասում նոր դպրոց հիմնվեց: Տնօրեն Արտաշես Կարապետյանը (հետագայում՝ Ղափանի կուսշրջկոմի քարտուղար) հրավիրեց դպրոց՝ որպես ուսմասվար: Երկամյա գործունեությունից հետո նշանակվեց եւ մինչեւ 2003-ը ղեկավարեց Քաջարանի Եղիշե Չարենցի անվան միջնակարգ դպրոցը: Առաջին քայլն է եղել կրթաջախը համալրել ունակ կադրերով, եւ դա հաջողվել է: Նաեւ եղել է Երեւանի դպրոցներում, ուսումնասիրել մայրաքաղաքի դպրոցների տնօրենների աշխատանքի փորձը, դասավանդման փորձի փոխանակման նպատակով եղել Ռիգայում եւ Տալլինում: «Ոմանց թվում է, թե կոպիտ եմ, ինչն իրականում այդպես չէ: Շատ զգայուն մարդ եմ, պարզապես միշտ զայրանում եմ, երբ ուսուցիչը զլանում է իր պարտականությունները հստակ կատարել, գլուխ է պահում, ինչպես կոլտնտեսության դաշտում աշխատելիս: Սիրում եմ մանկավարժի աշխատանքն ու իմ մասնագիտությունը: Ինձ համար գրավիչն այն է, որ աշակերտներիցս շատերի մեջ սեր ու հետաքրքրություն եմ առաջացրել հայոց լեզվի եւ գրականության, հատկապես պոեզիայի հանդեպ», – սա եւս մի պատառիկ է նրա նոթատետրից: Մեր զրույցի ընթացքում այս կամ այն միտքը հաստատելու համար անցնում էր ասմունքի, իր ասելով՝ իրեն ավելի սրտամոտ է Համո Սահյանի քնարերգությունը: Այնուհետեւ տեղեկանում ենք, որ նրա սաներից մի քանի տասնյակն ընտրել է հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի մասնագիտությունը, նրա երեք զավակից երկուսը եւս ընտրել է մանկավարժությունը:

Նրա ձայնը հնչել է նաեւ հանրապետության մանկավարժական ընթերցումների ժամանակ, արժանացել է ՀԽՍՀ մանկավարժական ընկերության ամենամյա մրցանակի, «Անբասիր աշխատանքի համար» մեդալի, «ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ» եւ «Ստեղծագործական աշխատանքի համար» կրծքանշանների, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության շնորհակալագրին եւ այլ պարգեւների: Քաջարան քաղաքի պատվավոր քաղաքացի է (1999 թվականից): Թերթում եմ հանրապետության մանկավարժական ընկերության կազմակերպած ընթերցումների նյութերի ժողովածուն, որում տեղ է գտել Վանյա Գալստյանի հոդվածը՝ «Դպրոցի, ընտանիքի եւ հասարակայնության համագործակցությունը սովորողների կարգապահության ամրապնդման գործում»:

Չի կարելի ասել, թե մանկավարժի վաստակն աննկատ է մնացել: 1986-ին «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով պարգեւատրվելուց հետո Աշտարակում բնակվող իր երբեմնի գործընկեր Արծրուն Ալեքսանյանը մի կարճ, բայց գնահատանքի խոսքերով լի նամակ է հղել. «Մեծարգո գործընկեր Վանյա Գալստյան: Խոնարհվում եմ վաստակիդ առջեւ, ի սրտե ցանկանում եմ անսպառ եռանդ, չխամրող բանականություն: Թող որ ստացածդ բարձր պարգեւի՝ «Կարմիր դրոշի» առիթով քեֆ սարքես, ինձ հեռակա թամադա համարիր: Դու մանկավարժական-ստեղծագործական բեղմնավոր ճանապարհ անցար, ինչպես նաեւ «Գանձասարում» ու «Բաղաբերդում» անքուն գիշերներ, որ անվտանգ, ռոմանտիկայով հագեցած լինի քո հարյուրավոր սաների ճամբարային առօրյան: Իրոք, իսկապես, ի ծնե մանկավարժ ես: Երիցս փառք քեզ, քո անցած երամերամ օրերին, որոնք պատմության էջեր կդառնան»:

Ի դեպ, քանի որ նամակում նշվեց «Գանձասարի» եւ «Բաղաբերդի» մասին, տեղին է ասել, որ մանկավարժ, տնօրեն, ստեղծագործող Վանյա Գալստյանի կյանքի մի զգալի մասը, ավելի ստույգ՝ 1963-ից 1991-ը կապված է եղել պիոներական ճամբարի հետ, 1968-ից աննշան ընդմիջումներով եղել է ճամբարի պետ, որ օրինակելիներից մեկն է եղել հանրապետությունում: «Երբ հանրապետական սեմինարի էի մասնակցում, առաջարկում էին պատմել, թե մեր ճամբարում ինչպես է հաջողվում ռոմանտիկ միջոցառումներ կազմակերպել, նրանք նաեւ չգիտեին, որ ճամբարում երկար տարիներ աշխատել եմ Ռոբերտ Գրիգորյանի (էջանանցի) հետ, ով ճամբարականների հետ ռոմանտիկայով լի միջոցառումներ կազմակերպելու եւ անցկացնելու անփոխարինելի նախաձեռնող ու ջատագովն էր: Իսկ մի հերթափոխի ժամանակ ճամբարային կյանքին մոտ 500 դպրոցական է մասնակցել, ովքեր վրաններում էին տեղավորվել, բայց ռոմանտիկայի պակաս չկար»:

Եվ այս ամենից հետո մեր հոդվածի հերոսը վաստակավորի կոչում չունի: Անսանք իր խոսքին. «Երկու անգամ անձնական թղթերս պահանջեցին հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչում շնորհելու համար: Առաջին անգամ շատ տարիներ առաջ էր, շրջանի ղեկավարությունն ասաց, թե այս անգամ կոչումը տանք ադրբեջանցու (այդպես էին խորհրդային ժամանակներում երկու հարեւան ազգերի միջեւ «հավասարակշռություն» պահպանում), հետո քեզ կներկայացնենք: Մյուս անգամ էլ Սյունիքի մարզպետարան ներայացրի թղթերս, երբ կոչում ստանալու ժամանակը եկավ, ասացին՝ թղթերդ կորել են: Սա է ինձ վաստակավորի կոչում շնորհելու ոդիսականը»:

– Եթե Ձեր կյանքը նորից սկսեիք, որ սխալը կսրբագրեիք, – դավադիր շեշտեր կրող հարց եմ ուղղում զրուցակցիս:

– Շատ բանի համար չեմ զղջում: Միշտ մտածել եմ դպրոցի մասին: Պատահել է՝ գիշերը մնացել եմ դպրոցում: Եթե նորից սկսեմ գործունեությունս, էլի ուսուցիչ կլինեմ:

– Այսպիսի մի ասույթ կա. «Մարդն այնքան տարիք ունի, որքան ինքն է զգում»: Ո՞ր տարիքում եք զգում Ձեզ:

– Որքան էլ չցանկանամ, ծերության տարիքում եմ զգում:

Ասում է եւ արտասանում Սիլվա Կապուտիկյանից.

Հարձակման է արդեն անցնում ծերությունը.
Մեռ մազերի սեռ գիշերում գաղտագողի
Ճերմակ դեսանդ է իջեցնում ծերությունը,
Շրջափակում սվիններով կնճիռների,
Աչքի լույսերն է հանգցնում ծերությունը:

– Մանկավարժության մեջ ո՞րն է եղել Ձեր հավատամքը, – անցնում եմ անմիջական հարցերի:

– Ես սիրում եւ հարգում եմ նրանց, ումից պահանջում եմ աշխատանք եւ կուլտուրա: Հայտնի մանկավարժ Մակարենկոյի խոսքերն են: Միշտ սիրել եմ մանկավարժներին, բայց նաեւ պահանջել եմ:

– Այսպիսի մի կարծիք կա, մանկավարժներ կան, ովքեր դպրոցի մոտով անցնելու իրավունք չունեն:

– Եթե ուսուցիչն իր մատուցած նյութով չի կարողանում գրավել դասարանը, նա իրավունք չունի դասասենյակ մտնելու: Ուսուցիչը շարունակում է խոսել, իսկ երեխան նրան չի ունկնդրում, ինչի՞ է նման:

– Ո՞րն է եղել Ձեր կյանքի ամենատխուր եւ ամենաուրախ օրը:

– Կյանքիս ամենատխուր օրն այն է եղել, երբ թողել եմ դպրոցը: Իմ կյանքի ուրախ օրերը միշտ կապված են եղել երեխաների կրթության եւ դաստիարակության հետ՝ դպրոցում, պիոներական ճամբարում, հեռավոր էքսկուրսիաների ժամանակ (Մոսկվա, Լենինգրադ, Կիեւ, Մինսկ, Բրեստ): Տեսարժան վայրերում ենք եղել, Մոսկվայում՝ Տրետյակովյան պատկերասրահում, Բորոդինոյի ճակատամարտի շրջապատկերը դիտել, Լենինգրադում այցելել ենք էրմիտաժ, Պետրապավլովյան ամրոց, «Ավրորա» հածանավի վրա եղել, Բրեստում՝ հայտնի ամրոցում, որտեղ նաեւ կապանցիներ են մարտնչել: Այս ամենը տեսնելով, իմ սաներն անչափ տպավորվել են:

– Եղե՞լ է, որ պատժել եք աշակերտին, եւ ի՞նչ բնույթի է եղել պատիժը:

– Աշակերտին խստորեն պատժելու կողմնակից չեմ, պատիժը եղել է նկատողությունների տեսքով կամ դպրոցի երգիծական «Խայթ» թերթում արատավոր երեւույթի մասին մի հումորային ոտանավոր տպագրելով: Աշակերտի թույլ տված անկարգապահությունը երգիծանքի եւ հումորի միջոցով եմ փորձել վերացնել…

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Իսկ ինչո՞վ էր զբաղված Լեւոն Մարգարյանը, որ չէր պատրաստվել մրցույթին

Լուսանկարը՝ Զ.Հանդարձումյանի

Մարտի 22-ին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում անց է կացվել Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը, որին մասնակցել են նույն վարչության պետի պաշտոնակատար (2012թ. օգոստոսի 17-ից) Լեւոն Մարգարյանը եւ Կապանի N10 հիմնական դպրոցի տնօրեն Արթուր Հակոբյանը (վերջինս նախկինում էլ մեկ անգամ մասնակցել է այդ պաշտոնի համար հայտարարված մրցույթին): Մրցույթի ընթացքում, սակայն, ո՛չ Լեւոն Մարգարյանը, ո՛չ Արթուր Հակոբյանը չեն հաղթահարել հարցազրույցի (բանավոր հարցերի) փուլը:

Տեղի ունեցածը մեծ արձագանք է գտել Սյունիքի մարզում եւ հատկապես մարզի կրթական համակարգում ու տարակույսների տեղիք տվել: Արծարծվող հարցերը հետեւյալն են՝ ա) կլուծվի՞ Լեւոն Մարգարյանի ժամկետային աշխատանքային պայմանագիրը, թե՞ նա կշարունակի վարել մարզպետարանի վարչության պետի պաշտոնը, բ) կմասնակցի՞ Լեւոն Մարգարյանը թափուր այդ պաշտոնի համար հայտարարվելիք նոր մրցույթին, գ) ինչո՞ւ Լեւոն Մարգարյանը կարգին չէր պատրաստվել մրցույթին:

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանից տեղեկացանք, որ Լեւոն Մարգարյանը կշարունակի ժամանակավոր պաշտոնավարումը՝ մինչեւ ՀՀ քաղծառայության խորհրդի կողմից նոր մրցույթի անցկացումը, որին նա կրկին կմասնակցի:

Ի դեպ, մրցույթի նախնական արդյունքներով Լեւոն Մարգարյանը հաղթող էր ճանաչվել եւ նույնիսկ շնորհավորանքներ ստացել: Բայց… Ժամեր անց պարզ է դարձել, որ քաղծառայության խորհուրդը չեղյալ է հայտարարել նրա՝ մրցույթում հաղթելու մասին որոշումը: Ըստ Ռազմիկ Ղազարյանի՝ պատճառը մրցութային հանձնաժողովում Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ Սամվել Թանգյանի եւ Քաջիկ Խաչատրյանի կողմնակալ պահվածքն է եղել գնահատման հարցում, որն ակնհայտ դառնալուց հետո վերահաշվարկվել է Լեւոն Մարգարյանի գնահատականը:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԿՈՐԵԼ է Կապանի երաժշտական ուսումնարանի 2000-01 ուստարվա «Երգչախմբավարություն» բաժնի շրջանավարտ Լաուրա Թումասյանի AK N005009 դիպլոմը: Համարել անվավեր:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ԵՐԵՔՇԱԲԹԻ • 9 ԱՊՐԻԼԻ 2013Թ • № 8 (281)

Փոփոխություններ՝ միտված ոլորտի բարելավմանը

Հարցազրույց ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սյունիքի տարածքային ստորաբաժանման ղեկավար Գագիկ Աղախանյանի հետ

Սկիզբը՝ էջ 12

քի կադաստրի գրասենյակ, դիմում ներկայացնել եւ ստանալ տեղեկատվություն իր ունեցած անշարժ գույքի վերաբերյալ: Եթե անշարժ գույքը Կապանում է, ինքը Երեւանում է տվյալ պահին, պարտադիր չէ այցելել այստեղ, ինքը կարող է հարցում անել մեր ստորաբաժանմանը եւ պատասխանը ստանալ: Կամ մարդը տանը նստած, կարող է մեզ համակարգչով դիմում ներկայացնել: Ստեղծվել է նաեւ կադաստրի վեբկայք՝ E-cadastre.am, որի միջոցով բնակիչները կարող են դիմում ներկայացնել ու հետեւել իրենց դիմումի ընթացքին: Կամ էլ պարզապես ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն անշարժ գույքի վերաբերյալ: Ինչ վերաբերում է կառուցվածքային փոփոխություններին:

Սյունիքի մարզի նախկին շրջկենտրոններում մինչեւ 2011թ. գործում էին տարածքային ստորաբաժանումներ, որոնք սպասարկում էին տվյալ տարածաշրջանին: 2012-ի հունվարից տարածքային բաժինները միավորվել են՝ դառնալով մարզային կառույց, իսկ նախկին շրջկենտրոններում գործում են գրասենյակներ, որտեղ քաղաքացիները ներկայացնում են իրենց դիմումները:

– Եթե գաղտնիք չէ, 2012-ին ի՞նչ գործարքներ է իրականացրել Սյունիքի մարզային ստորաբաժանումը:

– 2012-ին իրականացվել է գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման 309, հասարակական տարածքների օտարման՝ 264, բնակելի տների օտարման՝ 872, համայնքից օտարման՝ 326 գործարք:

– 2012-ին ստեղծված մարզային ստորաբաժանումը քանի՞ աշխատող ունի:

– Այսօրվա դրությամբ ունենք 23 աշխատող, քաղծառայողներ են, ըստ հաստիքացուցակի մասնագետներ՝ գլխավոր, առաջատար, կրտսեր: Համակարգի փոփոխության պատճառով աշխատողներ չեն կրճատվել, նախկին շրջկենտրոններում գործող գրասենյակների աշխատակիցներից ոմանց աշխատանք է առաջարկվել մարզային կառույցում: Կան մարդիկ, եւ Սիսիանից, եւ Գորիսից, համաձայնել են եւ աշխատում են մեզ մոտ: Իսկ ոմանք, ընտանեկան հանգամանքներից ելնելով, չկարողացան տեղափոխվել մարզային կառույց:

– Իսկ ինչպիսի՞ն են անշարժ գույքի շուկայում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գները, ի՞նչ միտումներ են նկատվում:

– 2013թ. հունվարին մարզի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի առուվաճառքների (պայմանագրային) գների եւ առաջարկվող գների վերլուծության արդյունքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների մեկ քառակուսի մետր մակերեսի հաշվարկով ձեւավորվել են հետեւյալ շուկայական միջինացված գները: 2012թ. հունվարին Գորիսում վաճառված բնակարանի մեկ քառակուսի մետր մակերեսի գինը եղել է 110 հազար 339, 2013թ. հունվարին կազմել է 117 հազար 100 դրամ, Կապանում 88 հազար 903, կազմել է 90200 դրամ, Քաջարանում բնակարանի մեկ քառակուսի մետրի գինը 2012-ի հունվարի համեմատ (106.302 դրամ) իջել է՝ կազմելով 94300 դրամ, Սիսիանում որոշակի աճ է գրանցվել. 2012թ. հունվարին եղել է 79784 հազար դրամ, այս տարվա հունվարին՝ 85050 դրամ: Ագարակում եւ Մեղրիում եւս բնակարանների վաճառքի գնի աճ է արձանագրվել, 2012թ. հունվարին Մեղրիում՝ 68500, 2013-ի հունվարին կազմել է 76.200, Ագարակում 2012թ. հունվար՝ 39700 հազար դրամ, 2013թ.՝ 44200 դրամ: Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս տարվա հունվարին հանրապետության քաղաքներում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների մեկ քառակուսի մետրի շուկայական միջին գները 2012թ. դեկտեմբերի համեմատ աճել են 0,5 տոկոսով:

Միաժամանակ ուզում եմ նշել, որ 2012թ. հունվարի համեմատ այս տարվա հունվարին հողերի առքուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.9 տոկոսով: Ընդ որում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առքուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.7 տոկոսով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 14.9 տոկոսով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 85.7 տոկոսով: Ըստ ուսումնասիրությունների՝ Սյունիքում եւ Տավուշում գյուղատնտեսական նշանակության հող գնողները քիչ են մյուս մարզերի հետ համեմատ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Վահրամ Օրբելյանը եւ Արտյոմ Սարգսյանը ցավակցում են Էդիկ Փիրյանին՝ կնոջ՝ Լենայի անժամանակ մահվան առիթով:

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 08.04.2013թ.:



Էմիլ Մարտիրոսյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Երկրային կյանքին հրաժեշտ տվեց Հիպոկրատի երդումին հավատարիմ, բուժական գործի նվիրյալ, մեր հայրենակից Էմիլ Վաղարշակի Մարտիրոսյանը:

Ծնվել է 1942թ. փետրվարի 25-ին Ղափանի շրջանի Նորաշենիկ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի տարրական դպրոցում, այնուհետեւ ուսումը շարունակել Շրվենանց գյուղի միջնակարգ դպրոցում: Այն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի բժշկական ինստիտուտ, ավարտել 1964թ. վիրաբույժի որակավորմամբ եւ գործուղվել աշխատանքի Ղափանի շրջանի բուժմիավորում, նշանակվել Եղվարդ գյուղի հիվանդանոցի վարիչ: 1965թ. տեղափոխվել է Քաջարանի հիվանդանոց եւ աշխատել վիրաբույժ: 1968 թվականից մինչեւ 1978 թվականն աշխատում էր Ղափանի քաղաքային պոլիկլինիկայում՝ վիրաբույժ: 1978թ. դեկտեմբերին նշանակվել է բուժմիավորման գլխավոր բժշկի տեղակալ՝ բուժական գծով: 1980 թվականին նշանակվել է նույն հաստատության վիրաբուժական բաժանմունքի վարիչ եւ աշխատել մինչեւ 1989թ. հունիսը: Այնուհետեւ Էմիլ Մարտիրոսյանը նշանակվել է Ղափանի բուժմիավորման գլխավոր բժիշկ եւ այդ պաշտոնում աշխատել մինչեւ 1991թ. հուլիս ամիսը: 1992թ. տեղափոխվում է Երեւան եւ աշխատանքի անցնում Ռուսաստանի Դաշնության հյուսիս-կովկասյան ռազմական օկրուգի Հայաստանում տեղաբաշխված զորքերի զինվորական հոսպիտալում՝ վիրաբույժ եւ աշխատում մինչեւ 2011թ., այնուհետեւ անցնում կենսաթոշակի:

Էմիլ Մարտիրոսյանը հավատարիմ մնալով իր երդմանը՝ մասնագիտական հմտություններն ու կարողություններն անմնացորդ ներդրեց տարածաշրջանի ազգաբնակչության առողջության պահպանման եւ ամրապնդման գործում: Այդ բնագավառում ներդրածի համար նա արժանացել է մի շարք պարգեւների եւ խրախուսանքների: ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգեւատրվել է «Պատվո նշան» շքանշանով: Մի քանի անգամ ընտրվել է Ղափանի քաղաքային խորհրդի պատգամավոր: Վաստակաշատ բժշկի հիշատակն անմար կմնա ճանաչողների սրտերում:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Կլիմենտ Զաքարյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Կյանքի 73-րդ տարում երկրային կյանքին հրաժեշտ տվեց Կլիմենտ Սբատի Զաքարյանը:

Ծնվել է Ներքին Խոտանան գյուղում 1940թ. հոկտեմբերի 15-ին: Ավարտել է Շրվենանցի միջնակարգ դպրոցը, այնուհետեւ ծառայել խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո 1966թ. ընդունվել է Երեւանի սննդի տեխնիկումի գարեջրի արտադրության տեխնոլոգիայի բաժինը: Ավարտելուց հետո գործուղվել է Կապան, մասնակցել գարեջրի գործարանի շինարարության աշխատանքներին, որտեղ էլ 1976թ. մինչեւ 1991թ. աշխատել է ձեռնարկության գլխավոր ճարտարագետ: 1991-ից մինչեւ 2012թ. նրա գործունեությունը կապված է եղել Ներքին Խոտանան համայնքի հետ: Մի քանի անգամ ընտրվել է համայնքի ղեկավարի պաշտոնում:

Կլիմենտ Զաքարյանը համայնքի հոգսերով ապրող գյուղապետ էր, Կապանում հանրապետության ղեկավարության հետ կայացած հանդիպումների, մարզխորհրդի նիստերի ժամանակ բարձրաձայնում էր համայնքի հիմնախնդիրների մասին, հետամուտ լինում դրանց լուծմանը: Այն համոզմունքն ուներ, որ եթե մարդ սիրում է իր գործը, դրական արդյունքը երկար սպասել չի տա: Ինքն էլ գոհ էր այն բանով, որ օգտակար է եղել համագյուղացիներին: Երբեք որեւէ պարգեւի ու շնորհակալության չի սպասել: Իսկ կյանքում հանգիստ ու խաղաղ, շփվող եւ անմիջական մարդ էր: Համայնքի ղեկավարի վերջին ընտրությանը չէր մասնակցել՝ պատճառաբանելով առաջացած տարիքը: Դեռ հույս էր փայփայում, որ այգի ու բանջարանոց կմշակի, կվայելի վաստակած հանգիստը: Բայց…

Մի հետաքրքիր մարդ էլ պակասեց մեզանից...

ԸՆԿԵՐՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթում աշխատելու համար պահանջվում է բարձրագույն կրթությամբ, լեզվական հմտություններ ունեցող լրագրող: Մանրամասների համար զանգահարել է 5-25-63 հեռախոսահամարով կամ այցելել խմբագրություն (ք.Կապան, Շահումյան 20/32):

ՈՒՂՂՈՒՄ «Սյունյաց երկիր» թերթի նախորդ համարում տեղ է գտել վրիպակ: «Մենք այստեղ մեզ լավ ենք զգում» հրապարակման մեջ երկրորդ սյունյակի երկրորդ պարբերության «արտադրության գործընթացում 20-25 մարդ է ընդգրկված» տողում նշված թվերի փոխարեն կարդալ 16 մարդ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Ինչպես տեղեկացնում են Սյունիքի մարզպետարանից՝ մարզի բժշկական կազմակերպությունները բժշկական կադրերով համալրելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունում անց է կացվելու մրցույթ. ընտրվելու են պետական բարձրագույն հաստատությունների 2013թ. շրջանավարտները (բացառությամբ ստոմատոլոգների եւ դեղագետների)՝ պետական պատվերով կլինիկական օրդինատուրա անցնելու եւ հետագայում մարզերում նվազագույնը 5 տարի աշխատելու պայմանով: Ցանկացողներին խնդրվում է մինչեւ սույն թվականի ապրիլի 15-ը դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչություն: Հեռախոս (0285) 2-35-10: